

737

ՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԹՐԵՍՏՈՄԱՏԻԱ

IV ԴԱՍԱՐԱՆ



8(47)(082)

Խ-96

ԿԱԶՄԵՃԻՆ

Լ. ԽՈՒԴՈՅԱՆ

Գ. ՍԱՐՅԱՆ

ՊԵՏՂԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1934

2-133

Нес. Кинри на шир.

1-2 NOV 2009
Am-78

2-133

8(47)(082)

Խ-96

ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ
ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՈՒՍՄԱՆ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԱԶՄԵՑԻՆ՝

Լ. ԽՈՒԴՈՅԱՆ

Գ. ՍԱՐՅԱՆ

П.Б. В ЛНГ

А. 1934 г.

№ 204

Հաստատված է ՀՍԽՀ Կուսակցության կողմից

ՊԵՏԱԿԱՆ — ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1934

Նկարները ժողովրդական նկարիչ Մ. ՍԱՐՑԱՆԻ

ԱՄԱՌԸ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Ճաշվա շողն անց եր կացել: Սար ու ձոր գլուխները նորից բարձրացնում էին, վոր վտր շունչ առնեն: Արեգակը Մասիսի յետևից աչքը հանդարտ բաց եր արել, մունջ-մունջ Յերեանի բերդին եր մտիկ տալիս և ուզում եր, վոր կամաց-կամաց ցած իջնի:

Թռչունը տեղիցը չեր ուզում շարժվի, հավը բնիցը գլուխը հանի: Ամեն տեղից ձայն ու ձոր լուել, պապանձվել եր:

Ջուր ջրողը առվի վրա յեր թեք բնիել, քնած մնացել. վար ու ցանք անողը՝ հանդումը, այգեպանն իր ծառի տակին, չվաքումը քուն մտել, հանգստացել: Հոտաղներն ել իրանց դուրսանի լծկանը բաց էին թողել, լուծը յեա արել ու մեկ ստվերի տակ դուրսանը մեկ կողմը, յեզները մյուս կողմը՝ ջրերի ափին վեր էին թափվել, քաղցր քուն մտել: Նախիրը մեկ գաշտում, վոչխարի հօտը՝ մյուս—չվաք տեղը նստել, ծնոտ ծնոտի էին ըսում, փնչացնում, վորո՞ւ անում: Հովիվն ել, գլուխը մեկ քարի վրա դրած, նջլել, աչքը կպցրել եր, վոր շողը քաշվի թե չե՝ վեր կենա, հօտն իրիկնահովին մեկ լավ խոտավետ տեղ տանի, արածացնի:

Մեկ կանաչ խոտ, մեկ դալար թուփ կամ մեկ ծաղիկ վոչ մեկ տեղ չեր յերևում, վոր մարդ հօտն առնի, կամ յերեսին մտիկ տա, սիրտը բացվի ու իր ճանապարհի յերկարությունը մոռանա, կամ շողի ձեռիցն այրված, խորոված մարմնին հովություն տա: Այսպես և սար ու ձոր, դաշտ ու հանդ չորացել, խանձվել, պապանձվել: Միմիայն խոտերի ցողուններն ու թփերի սուր-սուր ծայրերն էին այստեղ, այնտեղ ցից-ցից գլուխ բարձրացրել, տխուր, տրտում մոլորված, պաշարված կանգնել, մնացել:

Սև-սև գիշակեր ագռավները կամ վախշուկ տուլաչներն էին հենց մենակ մնացել, վոր այստեղ մեկ



7887-87

Պատ խմբագիր՝ Մ. Մկրտչյան

Լեզվ խմբագիր՝ Մ. Գալստյան

Տեխ խմբագիր՝ Գ. Զեյնյան

Սրբագրեցին Ս. Փարսադանյան և Մ. Բեյլյան

Հանձնված է արտագրության 5 մայիսի 1934 թ.

Ստորագրված է ապրիլի 17 մայիսի 1934 թ.

Գլխավոր № 8867 (բ) Գառվ № 608. Հրատ. № 2079. Տիրոջ 35-000

Գեոհրաֆ. ապարան - Յերեան

քարափի ծայրի, մեկ բուրջի գլխի կամ թե չե ճանապարհի միջում իրար գլխի հալաքվել եյին. նստել, պամ պտույտ եյին գալիս, իրար կտցահարում, իրար թեկոտ դաչում, վոր մեկի գտած վորսը ձեռիցը խզեն, բաժինն անեն, իրանց ձագերին ել տան, հետներն ել տանեն: Ոճ, կարծ, մողես, բզեզ ու ինչ տեսակ գաղան ու գեռուն ասես, մորեխ, մժեղ, հանդես եյին բաց արել: Վորը մեկ թփի տակից, վորը մեկ քարափի գլխից, վորը խոտերի միջին կամաց-կամաց ժաժ գալով, սոչ ու գլուխը իրանց քաշելով կամ ծլունդ լինելով, շվացնելով, ֆչացնելով, ծվալով, ծղրտալով՝ վորաքի եյին յեկել: Մի վորեն պատածակի արանքից կամ քարի ծայրից ել մեկ անճար բու, գլուխը վեր թողած, քիթ ու պոռնկը կիտած, ծանրացած, գետնին եր նայում, իր սև որը վողբում: Հավի թչնամի ուրուրն ել, թեկը փռած, ճանկերը սրելով, բաց ու խուփ անելով, կտուցը սրելով կամ կուրծքը քլքլելով, յերկնքի յերեսին, գլուխը կուրծքի տակին քաշ դցած՝ սուր աչքերն այս կողմն եր դցում, պտտում, պատրաստվում, վոր մի լիպոր ճուտիկ ճանկի կամ մի անճար չոր վեր քաշի, քրքրի, փետրի ու իր ազահ փորին մատուղ անի...

Այսպես մեռել, յեկ եր բնութիւնն ու փոչ մի ձեռնապուտ մեկ տեղից չեր լավում: Միմիայն հեռու տեղից մեկ բարակ քամի յերբեմն փչում, ծառի տերեւները սլալացնում, շարժում եր ու գոլ-գոլ մարդի յերեսին, բերնին քնքուշ ձեռքը քսում, շուտով անց կենում, փչերի, խոտերի, քարափների, ձորերի մեջը մտնում:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Քանի՞ մասի կարող եք բաժանել այդ հողվածը:
2. Ի՞նչ վերնագրեր կդնեք այդ մասերին:

Մուկ-մուկ-սուս ու փուս.

Գիշակեր-մսով սնվող կենդանիներ և թռչուններ.

Լիպոր-լղար.

Ձ Մ Ե Ռ

Ձմեռ եր: Ձյունը յեկել, դիզվել, սար ու ձոր բռնել եր: Պարզկա գիշերն այնպես եր գետինը սառցրել, վոր ամեն մեկ վորտը կոխելիս՝ հազար տեղից արաքտրաքում, ճոճում, ճաքճքում եր ու մարդու մարմինը սոսաւցնում: Ամեն մեկ ծառի ճղներից, ամեն մեկ տան րաշից՝ հազար տեսակ սառցի լույս, հազար տեսակ ձնի քուլա՝ կախ եր յեղել ու բիզ-բիզ իրար վրա ցառել: Ասես թե, սար ու ձոր կամ նոր եր ծաղկել, կամ նոր ծերացել, մահվան դուռն ընկել: Թռչուն, գաղան, անասուն, սողուն՝ վորը փետացել, այստեղ-այնտեղ վայր ընկել. վորն ել վաղուց, ամսով առաջ բուն մտել՝ ձայնը կտրել, պաշարը վայելում, դարնան դալուն եր սպասում: Գետերի, առուների յերեսը սառուցը մեկ գազ յեկել, հաստացել, իրար վրա յեր դիզվել: Սառույցն այնպես եր ջրի, աղբյուրի բերնին հուպ տվել, վոր մոտենրին կանգնողը միմիայն նրանց խուլ ձայնն եր լսում, վոր սառցի տակին տխուր-տրտում քլքլում եր ու մեկել այստեղ այնտեղ կամաց-կամաց ձայնը կտրում, պապանձվում, սառչում:

Արեգակն այս առավոտ, վոր գլուխը քնատեղեցն ու հորիզոնից չբարձրացրեց ու աչքերն աշխարհի վրա դցեց, չողքը սարերի գագաթին, — դաշտերի գլխին այնպես եր պեծին տալիս, պսպղում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս՝ վոր հենց իմանաս աղամանդ, զմրուխտ, յաղութ ու հազար տեսակ անդին քաղեր լինեյին՝ դաշտերի, սարերի գլխին, յերեսին, կրծքին փռած:

Սարերի սառը բուքը, ձորերի սառնաչունչ քամին այնպես եր հրապարակ բաց արել, գոռում, փչում, ձնի թեփն իրար գլխով տալիս, վոր ճանապարհորդի քիթն ու պոռնկը կպցնում, ճաքացնում, յերեսը պատում, գլխին հազար անգամ խփում, աչք ու բերանը լցնում

եր: Շատերին եյ կամ ձորերն եր գցում, կամ ձնումը թա-
ղում, չունչը կտրում կամ վրտ ու գլուխը փետացած՝
ճանապարհից հանում, սաբ ու ձոր գցում, քարեքար
տալիս:

Տան բաշ—տան գաղաթը.

Պապանձվել—համբ դառնալ.

ՄԵՐ ՏԵՍՈՒՁԸ

Ձե՛մ հիշում՝ առաջիկա՞, թե՞ յերրորդ տարու ա-
մառը՝ հանկարծ մեր վարժապետը լեղապատառ ներս ե-
րնկնում մեր բացօթյա ուսումնարանն և գոռում. «Ուղ-
ղվեցեք, կարգի ընկե՛ք, փայտի նման տեղներդ չորա-
ցեք, վայր թափվեցե՛ք: Յերեանի ուսումնարանի տե-
սուչը յեկել ե, հենց հիմի եստեղ կլինի, ձեզ հարց-
մունքներ կանի, վա՛յ նրան, ով վոր մի տառում սխալ-
վել ե, ճիպտաի տակին կմահացնեմ»:

Խեղճ Շապուհը տերեւի պես դողում ե, դույնը
դեղին քրքումի (զաֆրան) ե վրիպել, ատամներն իրար
են դիպչում:

Ահա, հեվալով տուն ընկալ գլիրն և հայտնեց տես-
չի դալուստը:

Մի քանի րոպեյից տեսուչը յուր յետեից Աշտարա-
կի բուսր առաջավորներին քարշ տալով՝ մտալ յեկեղե-
ցու բակը, և մոտեցալ մեղ:

Մենք ուսուցչի պատմերին համաձայն՝ տեղներիցս
կանգնեցինք և խոր գլուխ տվինք:

Տեսուչը բարեկց, հետո նստեց խալիֆա Շապուհի

միակ հասարակ փայտյա աթոռի վրա և մատով ինձ
յուր մոտ կանչեց ու հարցրեց.

— Ընչի՞ համար դու փոքրիկ ես ու քո հասակից-
ներին թողած՝ մեծ տղաների մոտ, բոլորի ծայրումն ես
նստել, յերեւի մեծերը քո դասդ սովորեցնում են հա՞:

— Մե՞ղք կլինի, վոր ասես՝ յես եմ նրանց չգիտե-
ցածը գլխի գցում, յես առաջին աշակերտն եմ,— հան-
դըղնարար պատասխանեցի յես:

— Վե՞րնց թե դու յես առաջին աշակերտը՝ դարձա-
յած ու քնքշարար առաջ քաշեց, յերկու ծնկների մեջ
առալ ինձ ու հարցրեց տեսուչը.

— Դու դեռ մի թիղ չկաս, ահագին մաղ ու մի-
րուքով տղամարդկանց առաջի՞նն ես:

— Կուգես՝ խալիֆա հարցրու:

— Հրաման քեզ (այո՛), վողորմած տե՛ր, դա մեր
առաջին աշակերտն ե,— հաստատեց Շապուհ խալ-
ֆան:

— Ըհը, լա՛վ, ապրի՛ս,— գլուխս շոյեց տեսուչը
և հարցրեց.

— Յեթե դու առաջին աշակերտն ես, ասա տեսնեմ՝
հաց ու պանիր կարգացե՞լ ես:

— Հաց ու պանիր ամեն որ ուտում եմ, դու մեծ
մեծ բաներ ասա:

— Վոր եղպես ե, գնա՛ գիրքդ բեր, տեսնեմ:

— Մի՞թե դու քերականություն ես սովորում, խո-
րադնին աչքերը չոեց տեսուչը և հարցասիրաբար նա-
յեց ուսուցչին:

— Այո, դրա փոքրությանը մի նայեք, Չամչյան
քերականության առաջին մասը վերջացրել ե և ամեն-
քիցը լալ ե սովորում— պնդեց վարժապետը:

Տեսչի հրամանով յեկան և իմ յերկու գտորնկեր-
ներս, վորոնք թեև, ինձանից հառակալոր, բայց համե-
մատաբար չատերից փոքր եյին:

Տեսուչը քառորդ ժամի չափ մեղ հարցմունքներ ա-
րավ, կարգաւ, թարգմանել տվեց, մեր գրարար կարճ
գրությունները տեսաւ և հրամայեց տեղերս նստել:
Մի ժամի չափ բոլորին մի առ մի քննեց, ամենքիցս ել
զոհ յեղավ, վարժապետի յեւ ձեռքը բռնեց, շնորհակա-
լություն արեց:

Սեղճ ուսուցչի գլխին հարամ յեղաւ շնորհակա-
լությունը:

Ի՞նչ չարածնի եյի. մեղավորը յես եմ:

Մանկական պարզությամբ հայտնած խոստովանու-
թյունս ծեծի մասին՝ տեղի տվեց արքունի դպրոցի տես-
չին յերկար հարցախնդիր լինել ուսուցչից ծեծի վերա-
բերմամբ:

Շապուհը չթաղցրեց, պարծանքով հայտնեց, վոր
ինքն անողորմարար պատժելով՝ հասել ե ցանկալի
արդյունքին:

— Յերեխա՛յք, դառնում ե տեսուչը դեպի մանուկ-
ներս, յեթե յես ինդրեմ վարժապետից, վոր այսուհետեւ
ձեզ չծեծի, խոստանում եք, վոր միշտ դասերդ լավ
պատրաստեք:

— Սո՛ստանում ենք, — դռնեցինք միաձայն:

— Դե՛հ, ուրեմն, միամիտ կացե՛ք, վոր այսուհետեւ
ծեծը վերանում ե ձեր միջից:

Կամեցա՞վ ուսուցչին ապացուցել ծեծի անհրաժեշ-
տությունը, բայց դուր աշխատանք եր:

Տեսուչը մի ուրիշ նորություն ևս օտարմանեց. նա
դարձադա՞վ, յերբ մեղանից լսեց, վոր զրկված ենք լողա-
լուց:

Նա ինքը նույն յերեկոյան մեղ տարա՞վ դետը, «Ա-
վազադ յո՞ր» կոչված լճի մեջ լողացրեց, ինքն ել մեղ հետ
լողացա՞վ:

Հիանալի լուղորդ եր տեսուչը, բայց մենք ել նրանից
պակաս չեյինք լսում:

Աշտարակի «Գասախ» գետակը լողալու շնորհն ան-

խնայարար չուայել ե հալասարապես բոլոր աշտարակ-
ցիներին. մեծ ու փոքր հմուտ են լողալու մեջ:

Յերեք որ անդադար դալիս եր տեսուչը մեղ այցե-
լության, աչքով հետեւած ու ականջով չլսած նորու-
թյուններ եր մտցնում խալիֆայական մահակի ու ող-
զու սովոր աշակերտներին մեջ. նոր նոր խաղեր եր սո-
վորեցնում. ինքը խաղում եր մեղ հետ և ստիպում վար-
ժապետին հետեւել յուր որինակին:

Իսկ ծեծի ոգտակարության գաղափարով տողոր-
ված ուսուցիչը յուր հեղինակության հաստատահիմն
աշտարակը հիմնահատակ յեղած անսնելով՝ քաշվել եր
հեռու անկյուն և կուչ յեկել ոտար մարդու պես:

Հասկանալի յե, նա մտքով անիծում եր տեսչի յե-
կած ճանապարհը, և անդադար սպասում եր նրա գնա-
լուն՝ կորչելուն, վոր վրեժն առնի յուր արդեն յերես
առած ստահակներից:

Չորրորդ որն յոթանասուն յերեսաներ Շապուհ
վարժապետն և գյուղի կեսը վոտքով ուղեկցում եյինք
Յերեխանի արքունի դպրոցի մեծապատիւ տեսչին:

Նա ինքը ցանկացա՞վ, վոր իրան ճանապարհ դնենք
յերգելով և զվարճանալով:

Նա ձի չհեծա՞վ, չուրջն առած դպրոցականներին՝
մեղ խրախուսելով՝ վոտքով եր գնում:

Գետի կամրջովն անց կացանք, ձորը դուրս յելանք:
Յեթե նա մեղ չկանգնեցներ, մենք պատրաստ եյինք
մեր սիրելի և թանկագին հյուրին ուղեկցել մինչև Յե-
րեան:

Ամենքիս մեկ-մեկ համբուրելով՝ յուր հրաժեշտը
տվեց այս խոսքերով.

— Յերեխաներ, ձեր վարժապետն ինձ խոստացել
ե այսուհետեւ ծեծը բոլորովին վերացնել. ամառվան
չոքերին՝ միայն առավոտյան և յերեկոյան հով ժամա-
նակը պարապել, մյուս ժամանակներն ազատ եք: Սոս-
տացել ե ամեն որ յերեկոյան դեմ ձեզ լողալու տանել,
որական յերկու ժամ խաղացնել:

— Բայց յերեխաներ, յեթե վորեւ խնդիր ունենաք ինձ դառնալու, իրավունք եմ տալիս գրավոր զիմելու. յես Յերեանի ուսումնարանի տեսուչն եմ, ձեր թուղթն ուղղակի ուսումնարան ղրկեցեք. մի՛ քաշվեք, յես ինքս ել գյուղացի յեմ, Քանաքեռ գյուղիցն եմ, իմ անունս ե Սաչատուր Աբովյանց:

— Շատ շնորհակալ եմք, — ձայն-ձայնի տվինք մանուկներս:

Նա ձի նստեց և հեռացավ:

Բլրի յետեն եր անցել Աբովյանցը, իսկ մենք մեր կեցցեները դեռ չեյինք դադարեցրել:

Գնաց մեր նոր գրահանության լուսատու աստղը — հանրահռչակ Սաչատուր Աբովյանցն և մեք սիրտը հետը տարավ:

Նա տարավ և մեր վարժապետի հոգու անդորրությունը: Ինչպես վերն ասացի, այն որից Շապուհ Շահ-նազարյանցի փոքեորությունը մեռավ:

Հայտնի չե՝ փախենում եր, փոր չգրենք Աբովյանցի՞ն, թե յուր խոստումն եր կամենում սրբությամբ կատարել:

Ել այնուհետև ծեծը վերջացրեց:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ինչո՞վ ե տարբերվում նկարագրված դպրոցը մեր դեպքոցից:

2. Ի՞նչ տարբերություն կա Շապուհ Շահնազարյանի և Աբովյանի դեպի աշակերտներն ունեցած վերաբերմունքի մեջ:

Անդորրություն — հանդստություն, խաղաղություն.

Անողորմարար — անխղճ կերպով, անզուժ կերպով.

Տողորված — փոքեորված, տարված.

Վստորմած — բարի.

(Հատված)

I

...Աչուհն անցավ, բարբարոս ձմեռը նորից բռնացավ: Այս անգամ, սակայն, չքավոր Չատոյի ցավը միայն ձմեռվա խստությունը չէր, այլ այն, վոր իր այնքա՞ն սիրած, իր միակ հույս ու ապավեն ինձոր յեղը ձեռից դնում եր:

— Վա՛յ, ելի՛ կապվեց բախտս, — ամեն անգամ դառնությամբ հիշում եր նա: Բայց այս դառնությունն ավելի թունավորվում եր պարտատիրոջ դժոխային պահանջով:

— Փո՛ղս, փո՛ղս. թե չե հա՛մ յեզդ կխլեմ, հա՛մ ուտելու հացդ, ու սոված կթողամ...

Յեվ, չնայելով Չատոյի ու կնոջ աղաչանքներին, մրմնջալի պաղատանքներին, այնուամենայնիվ լավում եր նույն անողորմ և ահաբեկող ձայնը, թե՛

— Փո՛ղս, փո՛ղս:

— Աղա ջա՛ն, աղաչում եմք, յերկու շաբաթ ել համբերի, գուցե մի տեղից ճարենք, տանք:

— Անկարե՛լի յա, փո՛ղս, եզուց ծեղին փո՛ղս...

Չատոն ու կինը հուսահատ՝ քաշվեցին իրենց ավերակ խրճիթը, վորի մի անկյունում ինձորն եր կուպված: Այնտեղ նրանք մնացել էյին տրամած ու քարացած:

Այսպիսի վայրկյաններից մեկում Չատոյի կինը, հանկարծ զգաստանալով քարացած գրությունից, աչքերը լցված, մոտեցավ ինձորին, վորդու նման գրկեց նրան, պինդ փաթաթվեց և ջերմաջերմ համբույրներ տալով այտերին ու աչքերին, լուռ ու անմեղ արտասովեց: Չատոն նույնպես լուռ եր ու լցված, բայց աչխա-

տում եր մասամբ թագցնել իր արցունքները և կնոջը քաջաչերել։

— Լավ, Նարգիշ, յերեխա հո չե՞ս, ինչ ես լաց լինում։

— Ե՛, ի՞նչ անեմ, ի՞նչ սև հողը գլխիս տամ, վոր լաց չլինեմ։ Ես ա՛, ելի, մեր կարողութունը, ես ել եզուց պարտքատերը դալու յա, վոր տանի։ Նրա՛ համար եմ բերանիս պատառը յետ քաշել ու սրան ուտեցրե՞լ,— արտասովահեղձ հեկեկանքով պատասխանում եր դեղջկուհին և նորից փաթաթվելով համբույրներ տալիս սիրելի կենդանուն։

— Դե լավ, Ե՛, ամոթ ա։ Վա՛հ, դո՛րթ վոր յերեխա յես դառնում։

— Ինչի՞, դու չլսեցի՞ր՝ ինչ ասեց...

— Վոր լսեցի՞ ի՞նչ. նրա հերն ել անիծած։ Ծառ ել փախեցնում եր, յեդո՞։ Կթողա՞մ, վոր տանի. իմ պարտքը 48 մանեթ ա, յեզս՝ հարիր. վո՞նց կհամարձակվի, վո՞նց կտանի, են հո արինա շաղ կտամ,— ուժ ից վեր, ախամա, կեղծ վստահությամբ, կնոջ առաջ պարծենում եր Չատուն։

— Հա՛, վա՛յ գլխիս, եղ եր պակաս։ Իբր թե աշխարհիցս լիացար, վոր արինդ ել շաղ տաս,— մարդու յերեսին նայելով հեկեկաց կինը։

II

Այս դառնությամբ Նարգիշը, մի առ ժամանակ հեկեկանքը դադարեց, նայում եր բոցոտվող կրակին և չեր հասկանում, թե ինչո՞ւ այս անիրավ աշխարհում մինը պետք ե առատ ուտի, վոչ ցանի, վոչ հնձի, իսկ մյուսը՝ քաղցած, ծարավ, ահը սրտումը, մահը մտքումը, սրան, նրան գերի դառնա։

Իսկ Չատուն մերթ նայում եր իր սիրելի յեղբայր Խնձորի աչքերին, մերթ բախտից խռոված իր վշտադեմ Նարգիշին և ալեկոծվում գաղտնապես։

Նա տեսնում եր, վոր իր հազիվ կարկատած կամ

նորոգած ծիծեռնակի բունը այսինքն՝ իր հայրանիսն անշուք և աղքատ խրճիթը— նորից ուզում են ավերակ դարձնել և կտրել ու մարել ոջախի ծուխը։

— Ո՛հ, աստված, ինչո՞ւ ստեղծեցիր ինձ, տանջելո՞ւ համար,— մրմնջում եր նա։

— Ա՛խ, աստված, աստված, բախտից զրկու՞ղ աստված,— մորմոքելով հառաչում եր կինը։

Ահա այս ցավերով համակված՝ մարդ ու կին ամբողջ գիշերն իրենց յեղբայր Խնձորին հրաժեշտի համբույրներ տալով, անքուն աչքերով լուսացրին ու չգիտեյին, թե ի՞նչպես պիտի բաժանվեյին նրանից։ Վորովհետև բաժանվել Խնձորից՝ նշանակում եր գրկներից խլել իրենց յերեխան և աչքերի առաջ ջուրը նետել նրան։

Առավոտը լուսացավ։ Տանուտերը, վաչխառուն և սրանց կամակատարները, մինը մտրակն առած, մյուսները՝ դադաճակները, ավազակների նման, դնում եյին դեպի ոդան։ Այդ միջոցին Չատուն, ամենածանր տաժողության տակ, դուրս յեկավ նրանց առաջ. նա վշտից լսողովուղ ու ընդհատվող ձայնով սիրտ արտով մեկ ել խնդրել, վոր խղճան իրան և մի քանի որ ժամանակ տան՝ փողը ճարի։ Բայց իզուր դարձյալ։ Յեղը խիստ դուր եր յեկել աղային. նա վաղուց եր ասել, թե «են յեզն ամենևին աղքատի յեզ չի, հարիր մանեթ նազդ փող արժի, ճանկս եմ դցելու»։ Ու մերժեց։

Չատոյի հույսի այս վերջին թելն ել կտրվեց։ Այս նուհետև աննկարագրելի յեր նբա վիշտը։ Ավազակախումբը, յերբ ներս մտավ յեզը դուրս անելու, Չատուն ու կինն ամբողջապես արտասուքի հեղեղ դարձած փաթաթվեցին իրենց յեղբորը և համբույրներով հեղեղեցին նրան։

Իսկ յեկողները թուր յետ արին սյունից և յեզը դուրս քաշեցին ողայից, բայց կենդանին խրտնեց հանկարծ և թե՛ տերերին և թե՛ հափշտակողներին բավական տեղ քաշ տվեց դուրսը։ Այստեղ Չատուն, համա-

ըյա ցնորվելու չափ չփոթված դրության մեջ, մի քանի վայրկյան կնոջ հետ միասին անհավասար դիմադրության փորձ արավ: Սակայն մտրակների և դադանակների հարվածները յետ մղեցին նրանց, և յեզը քեցցին, տարան:

Իսկ Չատուն ու կինը, յեղբայրը թաղած յեղբոր ու բրոջ նման, կարծես գերեզմանապանից վերադարձան ողան, ուր ամբողջ ուրը դառն հեկեկանքներով անմխիթար սգի մատնվեցին:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ինչո՞ւ էյին սիրում իրենց յեղանը Չատուն և իր կինը:
2. Ի՞նչպես և արտահայտվում վաշխառուի դաժանությունը:
3. Դրանից հետո ի՞նչ կարող է լինել Չատույի ընտանիքի վիճակը:
4. Ի՞նչ նմանություն և տարբերություն կա Մուրացանի և Ճուղուրյանի նկարագրած վաշխառուների մեջ:

Բարբարոս—վայրենի.

Բռնանալ—ուժ փորձ դնել.

Անողորմ—անգութ, անխղճ.

Ահաբեկող—վախ և սարսափ աղդող.

Տրամել—տխրել.

Ձգատանալ—ուշի գալ.

Արտավազնեղծ—արցունքից խեղդվող.

Ակամա—կամքից անկախ.

Անշուք—սարդ, հասարակ, վուջ չքեղ.

Համակված—բռնված.

Կամակատար—կամքը կատարող.

Սիրելի Մանվել,

Ձգիտեմ դու հիմա ի՞նչ տեղ ես արդյուք և ինչ վիճակի մեջ, բայց յես այո նամակն ուղարկում եմ ձեր գյուղը, վոր ուր ել վոր լինիս, քեզ հասցնեն:

Աչքդ լո՛ւյս, Մանվել, յես հիմա դիժ եմ: Այսպես են համարում ինձ այժմ ամենքը: Յեթե մի քանիսն ել, և այն յերբեմն, իմ ասածի մեջ խելք են նշմարում, ասում են՝ «Գժից ուղիղ համբավ»: Ասենք սա մի անպատվություն չե, այլ՝ ընդհակառակն՝ այնքան մեծ է այս պատիվը, վորին յես դեռ չեմ արժանացել: Բայց այսու ամենայնիվ իմ մանկության ուրբուցը, իմ փայլալայած ու գզված ծննդավայրն այժմ ինձ թվում է մի դժոխք, ուր՝ ինչպես ասում են, աղվեսների համար վորջ կա, թռչունների համար բույն, բայց մարդու վորդու համար գլուխ դնելու տեղ չկա: Հիմարություն, կոպտություն, ծուլություն, ընչաքաղցություն և, վոր մայրն է ամեն չարիքի, կեղտոտություն և, ելի կասեմ, կեղտոտությո՛ւն անտանելի, անմերձենալի կեղտոտությո՛ւն, անմաքրությո՛ւն, կեղտոտություն...

Իրանց գոմերի առջև հազար տարվան թրիք կա կուտակված, չեն տանում իրանց այդիքն ու արտատեղերն ածում, վսրով թե իրանց հողերը կբարվոքեն և թե իրանց տները կազատեն ժահահոտությունից, վոր իրանց այնքան զգալի չե, սովոր լինելով այդ հոտին: Վոչ մի տղամարդ կամ կնիկարմատ չկա, վոր յերկու չապիկ ունենա, չապկաբնկեր հո— չատերը մեկն ել չեն ունենում: Շատ անգամ տեսնում ես սրա կամ նրա կուրծքը աղյուսով ծածկված. այդ նշան է, վոր ժրաջան տանտիկինն իր կամ մարդու չապիկը նույն ուրը բարեհաճել է լվանալ: Այդ ել իհարկե, զատկից զատիկ կլինի կամ չա՛տ չա՛տ՝ հինգ նավակատիքներին... Բայց թափ են տալիս թոնդրումն ամիսը մեկ կամ յերկու անգամ... Ո՛հ,

Վոր միտս եմ բերում, գլխիս ցավը բռնում ե... Ահա այս մաքրասեր իմաստուններն են, վոր ինձ գիժ են համարում, վորովհետև համարձակում եմ ասել, վոր վորջիլն աստված չի ստեղծել, այլ դուք եք ստեղծում, ձեր անմաքրությունովը...

Դու լավ գիտես, վոր մեզանում փոքրերն իրավունք չունին մեծերին ընդդիմադրուել... Մեզանում չկա «ներեցեք», վորովհետև դա մարդավարության կվերաբերի, վորի անունը դեռ լսած չեն մերոնք: Անեծք, հայհոյանք... անլուր հայհոյանքների մեջ մտնում ե և արարողը և նրա ամենայն արարածը: Կռիվը կատարվում ե դադանակով, սրով և հրացանով: Չարակամությունը սահման չունի, վոխակալությունը ժառանգական ե, պիտի չարունակվի վորդոց վորդի: Սեր կա, անասնական, բարեկամություն՝ խաբեբայական, խընդակցություն՝ ըռպեյական, գթություն՝ բռնակալական, յեղրայրություն՝ կայենական, հայրություն՝ դադանական... Վո՛չ, յես այստեղ չեմ կարող մնալ...

Մի հատիկ հոգի, վոր այստեղ ինձ միտնալում ե, այդ իմ մայրս ե: Նրա սերը դեպի ինձ այնքան մեծ ե, վոր՝ չնայած իր կանխակալ կարծիքներին՝ հավատում ե իմ բոլոր ասածներին և հոգով չափ փառավորվում, վոր ինձ նման իմաստուն վորդի ունի:

Մի բան, վոր ինձ զարմացնում ե, այն ե, վոր հայրս վոչ միայն չի ուզում ոգնել ինձ, վոր յես ուսումս շարունակեմ, այլ իր մոտն ել չի ուզում պահել... ահա ցավն ինչ տեղ ե: Ի՞նչ արած, յես ել մտքումս դրել եմ գնալ դեպի մի կողմ: Յեթե վորջ կմնամ, ելի կտեսնենք միմյանց, իսկ յեթե վոչ մյուս կյանքումը կսպասեմ քո տեսությանը: Իմ վերջին կտակը, վոր ուզում եմ քեզ հայտնել՝ այս ե՝ — Յեթե հաջողվի՝ լավ ուսումն ստանաս, գեղացոց համար մի ամսաթերթ հրատարակիր հասկանալի լեզվով ու մտքով: Տպած խոսքը՝ ինչքան ել հիմար լինի՝ ավելի անց կկենա, քան թե ինձպեսների յերես առ յերես խոսիլը: Ի՞նչ պտուղ կարող ես սպասել

մի խոստանացած անդաստանից, վոր միայն փուչ և տատակ կարող ե բացնել: Պետք ե մշակել այդ վայրենացած անդաստանը, բարի սերմեր ցանել: Եթե մենք չենք տեսնիլ, գոնե մեր հետնորդները կտեսնեն և կվայելեն նրա պտուղները և ինձ նման անմուրազ չեն մնալ:

Քո ԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ինչի՞ց ե դժգոհ Արությունը:
2. Ի՞նչ դադափարներ ե պաշտպանում Արությունը:

Անմեքձեհալի—չմոտենալի.

Ժահահոտություն—զարչահոտություն.

Ընդդիմադրուել—հակաճառել, վեճի բռնվել.

Անլուր—չլսված.

Կանխակալ կարծիք—նախորոք ունեցած կարծիք.

ԵՇՆ ՈՒ ՍՈՒՍԿԸ

Ջրոան եչը սոխակ տեսալ:

—Մեկ ինձ նայիր,— նրան ասալ:—

ասում են՝ դու լավ ես յերգում,

բայց չգիտեմ, դո՞րդ են ասում:

Յես տկանջներ ունեմ լայն—լայն,

լավ եմ լսում ամեն մի ձայն.

բայց քո ձայնը յես չեմ լսած,

թեև ղսել չա՛տ եմ ուզած:

Այս լավ յեղավ, վոր քեզ գտա,

դե, մեկ յերգիր, մեկ բըլբըլա՛,

տեսնեմ, ուղիղ լա՞վ ես յերգում,

թե՞ իզուր են այնքան գովում:

Սոխակն անմեղ, դե, նազ չարավ



անուշ լեզուն նա բաց արավ,
 ուզեց ցույց տալ ավանակին,
 վոր չեն գովում զուր սոխակին:
 Զայնը լարեց ու սկսեց:
 Սոխակի ձա՛յն... ինչե՛ր չասեց.
 Մեկ խոսում եր ու մեկ յերգում,
 հազար իսաղով խաղացնում.
 մեկ դայլայլում, գըլգըլացնում,
 մեկ գեղգեղում, կըլկըլցնում,
 այնպես չվում, սրնգում եր,
 վոր սար ու ձոր զմայլում եր:
 Լեռ քարերն ել յարեցին ուշ,
 այնքան քաղցր եր, այնքան անուշ
 ամեն մի շունչ ու արարած
 լսում եր լուռ, ապուշ կտրած:
 Քամին կտրեց իր վզոցը,
 աղբյուրը՝ իր քըչքըչոցը:
 Վոչ մի տերև չեր սրլսրլում,
 վոչ մի թռչուն չեր ծրվրլում:
 Տավարներն ել չարածեցին,
 այլ նստեցան, ականջ դրին:
 Տավարածն ել շունչը քաշած,
 սոխակին եր լսում աղչած,
 անմեղ ժպտում ու հիանում,
 ընկերին եր ձեռքով անում:
 Մեր սոխակը, վերջը լռեց,
 իշի վճռին ականջ դրեց.
 յերկարականջ գըռգըռանը
 այսպես կտրեց դատաստանը.
 «Ե՛հ, ի՞նչ ասեմ, վատ չես յերգում,
 լավ ես չըվում, կըլկըլացնում.
 բայց չես շատ եմ ափսոսում քեզ,
 վոր չես յերգում աքլորի պես.
 աքլորին ել վոր դու տեսնես
 նրանից ել վոր դաս առնես,

այնուհետև նրա նման
 դու կը յերգես չա՛տ աննման»:
 Այդ վիճուր յերբոր լսեց
 մեր սոխակը նոր աչք բացեց.
 նա նոր տեսավ, վոր իր դիմաց
 մի զեռադլուխ եչ ե կանգնած...
 Թեին խփեց, իսկույն թռավ,
 իշի ձեռքից աղատվեցավ:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Վո՞ր տողերումն է հեղինակը սոխակի յերգը նկարագրում:
2. Ի՞նչ է ուղում հեղինակն ասել աչք առակով:

Դայլայլիչ—գեղեղալ, գեղեցիկ յերգել.

ԱԳՌԱՎՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Բախտի բերամբ,
 Թե պատահամբ,
 մի մեծ ազոավ
 մի գունդ պանիր
 դաշտում գտավ,
 կտուցն առավ,
 ծառին թառավ:
 Ո՛ր, ի՞նչ պանիր, դեղին վոսկի...
 Բայց դեռ չառած համբ, իսկի,
 աղվեսն անցավ ծառի մոտով,
 գերվեց,
 երվեց
 պանրի հոտով:



Վազեց, գնաց բերնի ջուրը
 և թուլացան կուռն ու ճուռը
 Են ժամանակ իրա ձեռն,
 ծառի տակից, աչքն ագոռային,
 հեղիկ-նազիկ
 փափկամազիկ
 բացեց լեզուն անուշ մեղուշ,
 թափեց, չափեց շաքար ու նուշ.
 «Մենք ան լա՛վ ես,
 յես քո գերին,
 քո եղ սեիկ
 վառ աչքերին,
 նուրբ ծալքերով
 դույզ թևերին:
 Մի դու մտիկ,
 եղպես քթիկ,
 եղպես ճտիկ.
 մախմուր աղին,
 խաս ու դումաշ
 ատուրան հաղին:

Գիտեմ, անշուշտ իմ քուրիկի
 ձայնն ել կըլի հրեշտակի:
 Յերգի՛, քուրի՛կ, մի՛ ամաչի,
 իմ ուղածը մի մեծ բան չի:
 Թե վոր չքնաղ եղ տեսքի հետ
 յերգելում ել յեղար վարպետ,
 ո՛ր, կդառնաս իմ սրբունհի,
 թուշունների մայր թագունհի»:
 Ագոռով աղին իրեն տված
 գովեստներից չձամբ, ուրոս՝
 ագոռավային
 բկովը մին,
 վոր չկուտ՛ց,

ստանիրն ընկալ ծառիցը ցած,
չողոքորթը ըռխեց, գնաց:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ի՞նչ ե ուզում հեղինակն այդ առաւել ասել:
2. Ինչպե՞ս ե դուքս բերված ազգավր:

Գերվեց—տարվեց, զմայլվեց.

Նուրբ—քնքուշ.

Չքնաղ—սիրուն.

ԳԱՅԼՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Գայլն անտառից
փախաւ գեղը.
— Նեղն եմ, նեղը,—
ասաւ կատվին,—
ասլան բալա,
քո հոր պատվին
մի ճաք արա.
մի տես հլա,
վորսորդ ու շուն,
թաղի, թուլա
միաս են կրծում,
ինձ հալածում,
աստված կտրի
նրանց հոտը,
մի մարդ ցույց տուր,
պահվեմ մոտը:

— Այ ցեղակից,— գոչեց կատուն,—
գնա՛ մտիր Մարոյենց տուն.

— Յես ել գիտեմ, վոր անգին ե,
բայց վոր նրա հորթն եմ կերե՛լ...
— Բկիդ կանգնեք, լավ չես արեւ,
վոր եղպես ե,
այ ամաչկոտ,
Հովսեփի մոտ...
— Ե՛, ինչ ասեմ, ես ամառը
հանկարծ չուտե՞մ նրա գառը:
— Ում ասեմ ել...
Հա՛, մեր Զաքին.
— Ես գարնանն ել
նրա մաքին...
— Ո՞վ մնաց ել.
Հա՛, երեցը:
— Ես աշնանն ել
նրա եծը...
— Ա՛յ, դու ուտես
չոռի մեծը:
Քանի՞սն յեղավ.
հինգը... վեցը...
ինչ յերեսով
գյուղը մտար.
տեղ չգտա՞ր:
Գյուղն հիմա՞ր ե,
վոր թշնամուն պատասխարե:
Ով ինչ բրթի,
են կլարթի:

Հ Ա Ր Յ

1. Ո՞ւմը նկատի ունի հեղինակը զայլին նկարագրելով:

Այսան բալա—առյուծի ձագ.

Թաղի—չան տեսակը (վորսի շուն, բարակ).

Մաքի—եղ վոչխոր.

Անիից եյի վերադառնում և անցնում հայկական մի գյուղի միջով:

Գիշերը սաստիկ անձրև եր յեկել, այնքան սաստիկ, վոր շատ պատեր ու խրճիթներ փլցրել եր:

Լուսը նոր եր բացվել: Խրճիթների յերգիկներից սկսել եյին ծխի սյունակներ խխտ ծանրությամբ բարձրանալ և տաքածովել տանիքների վրա:

Գյուղի վերջին խրճիթն եյի հասել, յերբ նրա դուռը ճուռաց, դոմի ներսում կովի բառաչը լավեց, մի քանի մանուկների ճիչեր ականջիս հասան, և առաջա դուրս յեկավ մի ալեգարդ ծերունի՝ բաճը ուսին:

Մի վայրկյան ինձ նայեց, հետո պատերի տակով անցք ընարեց քայլելու: Քիչ հետո գյուղից դուրս եյինք յեկել: Յեա ել նրա քայլերով սկսեցի դնալ:

Դեմուդեմ բարձրանալով՝ մինչև մշուշալից հորիզոնն եր տարածվում սև լեռնաշղթան:

Թանձր, սևագույն մշուշը ծանրացել եր ձորերի և հովիտների, չեռների և բլուրների շուրջը: Տեղ-տեղ յերկնքից դետին իջնող շեշտակի գծերը ցույց եյին տալիս, վոր խխտ անձրև եր տեղում զանազան կողմերում:

Ծերունին սկսել եր ավելի հանդարտ քայլել:

Նրա հնամաշ տրեխներից ջուրը հոսում եր գուլպաների մեջ, վորտը թրջում, խոնավությունը թափանցում եր բաց կուրծքը, և վերարկուի վրա մշուշից կաթիլներ եյին գիգվում:

Անցնելով, միառմի դիտում եյի յերկու կողքի արտերը: Ծառերի միայն մի քանի ակոսներն եյին ավերվել, և մեջտեղերում լճակներ եյին գոյացել:

Միքանիսն ամբողջովին վողողվել եյին: Ջրի հոսանքներն արմատախիլ եյին արել, քչել-տարել ցորենի դաբար ծիգերը և հալածել ակոսների մեջ:

Յեխ եր գոյացել ամեն մի փոքր շավղի վրա. ամեն մի փոսի մեջ սղտոր, կարմրագույն ջուր եր կլտվել,

և շատ հասկեր լողում եյին նրանց յերեսին վորպես խեղդվածներ:

— Վա՛խ, վա՛խ,—հառաչեց ծերունին և առաջ դնաց:

Բայց վնասն ընդհանրապես շատ ել մեծ չեր յերևում: Հողը դիմացել եր: Յերևում եյին բոլորովին չփչացած արտեր անգամ, ծիլերը դիմացել եյին և այժմ գվարթությամբ սկսում եյին ցցել իրենց դուխները:

— Ե՛հ, փառք ասածու,—խոսեց ծերունին, տեսնելով դրանք,—շատ ել վնաս չի յեղել:

— Քո արտն ել այդպես կլինի, ծերո՛ւկ,—սրտապլնդեցի նրան:

Անխոս՝ գլուխը չարժեց: Կասկածում եր. հայացքը միշտ դեպի հեռուներն եյին: Այդպես քայլելով մենք հեռացանք գյուղից և հետո ծովեցինք դեպի լեռները:

Ծովելիս ծերունին մի րոպե կանգ առավ և աչիստեց հեռվից նշմարել իր արտի դուրթյունը:

— Վո՞րն ե արտը:

Այն բարձրներ:

Ինչ-վոր ջրի հեղեղաաններ եյին հոսում սյնտեղ, ջրակույտեր փայլվում: Մի գուցե այդ ջրերը նրա արտի միջովն են անցել, ամեն ինչ սրբել, տարել:

Ծերունին գունատվեց:

— Տունս քանդվել ե...—մրմնջաց նա:

— Մի՞թե վնասվել ե:

— Չգիտեմ դեռ,—ասաց նա խեղդված ձայնով,—գուցե աչքերս չեն տեսնում... Ծերացել եմ...

Առաջ դնացինք: Մոտենում եյինք: Քայլերն ավելի դժվարանում եր. վերևից գրեթե ցեխի հեղեղ եր, վոր իջնում եր ցած, խառն՝ ծիլերով, ցողուններով...

Ծերունին հեռում եր. չունչը կտրվել եր: Քիչ ել քայլեցինք: Ել կանաչ չեր յերևում, ել վոչինչ չեր մնացել. ցեխի հեղեղ և ջուր եր վոր տեսնում եյինք. ավերիչ, ապականիչ հեղեղ...

Մի քանի քայլ անելուց հետո կանգ առավ ծերունին և բաճը ուսից ցած թողեց:

Իր արտի կողքին եր: Թշվա՛ռ արտ...

Փոսերի մեջ գոյացած ջրերը վերևից պատռել եյին նրանց թմբերը, ուժգնությամբ ցած հոսել և գրեթե սրբել եյին արտը:

Յերկար, կանաչ յերկար շերտեր իրար վրա, արմատախիլ, ջարդված—սահել եյին ամեն ուղղությամբ և թաթախվել ցեխով: Վոմանք մինչև վիզը խրվել, ուրիշները հազիվ եյին յերևում...

Հողն ամբողջ կանաչել եր նրանց դիակներով...

Յեվ անձրևը տեղում եր, տեղում ու իր խոչոր կաթիլներով ճղիացնում լճացած ջրերը:

Ընկալ բահը ծերունու ձեռքից, աչքերը մթնեցին, և նա տեղն ու տեղը, իր ընտանիքին կերակրող ցորենի դիակների կողքին՝ նստեց ու գլուխը ձեռքերի մեջ ծածկեց...

Ձիս քչեցի և հեռացա: Մխիթարական վոչ մի խոսք ասելու սիրտ չունեցա:

Յեվ յերբ հեռվից յետ նայեցի, տեսա թշվառ ծերունուն միշտ նույն դիրքի մեջ, նստած իր ավերված արտի կողքին, գլուխը ձեռքերին և ալեզարդ մազերը տեղացող անձրևի տակ...

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ինչո՞ւ այդքան վշտացավ ծերունին:
2. Ինչո՞ւ հեղինակը մխիթարական վոչինչ չգտավ ասելու:

Մրմնջալ—կամացուկ խոսել.

Ապականիչ—կեղտոտող.

Մխիթարական—սիրտ տվող.

ՀՐԴԵՀԸ ՆԱՎԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

(Մի պատկեր Բագվի մշակների կյանքից)

1.

Այդա, դավողն այրվում ե:

Իվան Գրիգորիչ Մարությանը մի միջահասակ, չաղ և բավական ջահիլ մարդ եր՝ յեվրոպական սև հագուստով: Նրա լիքը, ելլորակ և մաքուր սափրած յերեսի կարմիր գույնը մի վայրկյանում թռավ դժբախտ լուրը լսելու ժամանակ:

— Յե՞րբ, վոր ժամին և դավողի վո՞ր կողմից ե սկսել հրդեհը, — անհամբերությամբ և հրամայաբար հարցնում եր նա:

— Կրակը յերեացել ե մոտավորապես յերեք քառորդ ժամ սրանից առաջ, — դողդողջուն ձայնով պատասխանեց լրարերը յերկյուղածությամբ յետ ու յետ քաշվելով: — Յես նոր գործս վերջացրել և պատրաստվում եյի քնելու, յերբ ականջիս հասավ մի արաքոցի ձայն: Ձայնը սաստիկ եր, կարծես թե ամբողջ դավողը քաբուքանդ եր լինում... Յես մի քանի րոպե մնացի չվարած... Հզիտեյի ի՞նչ անել, ո՞ւր վազել: Մի կերպ խելքս գլուխս համարեցի և դուրս թռա. հենց այն վայրկյանին, յերբ յես կամենում եյի առաջ վազել, մեկ ել տեսնեմ աջ կողմից, կաթոսների բաժնից, բոցավառ ծուխը դուրս ե փչում... Իսկույն հասկացա, վոր մեծ նավթակաթսաներից մեկը պատռվել ե: Կրակը դիմում եր դեպի յուզ մաքրելու բաժինը: Մշակները դարձան եյին և վորը ալկոր, վորը հագուստով, ամենքը դիմեցին կրակ յերեացող տեղը՝ հրդեհի առաջը կապելու. յես իսկույն



առանց գործակատարից թուլյալություն խնդրելու, վազեցի քաղաք, վոր ձեզ հայտնեմ:

Իվան Գրիգորիչի կուրծքն անհամբեր շնչառությունից արագությամբ բարձրանում և ցածրանում էր: Մի քանի վայրկյան լուռ մտածելուց հետո, նա դիմեց ծառաներին, վորոնք բերանները բացած՝ ուշադրությամբ չսում եյին լրարերի խոսքերը:

— Այս վայրկյանիս ջծեք իմ կառքը. յես առանց ռոպե ուշանալու պիտի գործարան հասնեմ:

Ծառաները վազեցին աղայի հրամանը կատարելու:

— Վերջն իմ տունս կքանդեն, ինձ կսնանկացնեն, հետին աղքատության մեջ կգցեն, որվա հացին կարոտ կդարձնեն այս անիծվածները...

— Ասածո կամքն ե, աղա՛, մենք ի՞նչ անենք, մենք խո դիտմամբ չենք կրակ գցում ու այրում ձեր գործարանը...

Լրարերն այս ասելով գդակը ձեռին կանգնեց պատի տակ:

— Մշակն ո՞վ ե, վոր նրա աստվածն ո՞վ չինի, — գոռում էր Իվան Գրիգորիչը կատաղի առյուծի նման: — Մշակն աստված չունի, նրա աստվածը փայտն է: Յեթե դուք աստված ունենայիք, մի տարվա մեջ իմ գործարանը յերկու անգամ չեր այրվի: Յեթե դուք խիղճ և հոգի ունենայիք՝ ձեր կյանքը կդոհեյիք և չեյիք թողնի, վոր ձեր աղին, ձեր կերակրողին վնաս հասներ:

— Աղա, կառքը պատրաստ ե, ներս վազեց ծառան:

— Յես դնում եմ, դո՛ւ ել վազի՛ր այս ռոպեյին գործարան, — դարձավ աղան դեպի լրարերը:

Մի քանի ռոպեյից հետո յերկու սևագույն նժույգներով լծած փառավոր կառքը թանգադին, տաք մուշտակի մեջ փաթաթված Իվան Գրիգորիչին տանում էր գործարան:

Այրվող գործարանը քաղաքից յերեք վերստաչափ

հեռու յեր գտնվում: Լրաբերը ճանապարհը կարճելու համար ծովի ափով եր գնում: Լայնատարած ծովի ալիքներն շփշփոցը, գիշերվա խավար մթնոլորտի մեջ տարածվելով, անախորժ, յերկյուղալի տպավորություն եր անում մարդու վրա: Վոչ մի շնչավոր արարած, վոչ մի կենդանի առարկա չեր յերևում ծովափում, բացի այդ սև և վիթխարի մարդուց, վոր գիշերվա ուրվականի նման հսկայական քայլերով շտապում եր դեպի առաջ, խորն ավազի մեջ թաղելով իր վոտները: Հանկարծ նա կանգնեց, կարծես թե մի բան մտաբերելով և յերկու ձեռքը մեքենաբար խիելով ճակատին՝ մի բուպե անշարժ մնաց:

— Ո՛վ աստված, յեղբայրս և փոքր վորդիս հրդեհից քիչ առաջ պառկել էյին քնելու... բայց վորտե՞ղ էյին նրանք պառկել... ա՛յո, ա՛յո... մտաբերում եմ, հենց այն կողմում, ուր կաթսան տրաքվել է... նրանք, չդիմանալով մեր ընդհանուր սենյակից ցրտին, այս գիշեր տեղափոխվել էյին կաթոսների բաժինը՝ վառարանի մոտ քնելու: Աստված իմ, ի՞նչ կպատահի նրանց, յեթե ժամանակին չեն դարձնի... այրվող նավթն ուղղակի նրանց կողմն եր ցատկում... նրանք իմ աչքովս չընկան:

Յերկնակամարը կրակի յուլսից շառագունել եր, քամու գոյությունից բոցը կատաղաբար այս ու այն կողմ եր տարածվում: Ամբողջ Սե-քսդաքը ծուխի մեջ թաղվել եր: Լրաբերն սկսեց իր հոգնած վոտներին ուժ տալ:

2

Տեղ հասնելով՝ Իվան Գրիգորիչի առաջին հայացքը հաղիվ կարողացավ ճանաչել կրակի և ծուխի մեջ կորած գործարանը: Սե-քսդաքի հասարակությունը պատեղ եր հրդեհի շուրջը՝ կաղմելով մի ողաձև չրջան, վորի մեջտեղը այրվում եր մի ընդարձակ խարույկ: Այս ու այն

կողմերից վազում էյին մարդիկ, վորոնց դեմքերի վրա դարմացման նշաններ բոլորովին չէյին նկատվում: Այսպիսի և սրանից ավելի գորեղ հրդեհները նրանց համար սովորական դեպքեր են:

— Աստված սիրե՛ք... մոտեցե՛ք... ոգնեցե՛ք... մի վախենա՛ք... յես փո՛ղ կտամ, կվարձատրեմ՝ ոգնողներին.— յեղավ Իվան Գրիգորիչի առաջին բացականչությունը: Նա գլխակոր վազելով ամբոխի միջից՝ ձգտում եր դեպի կրակը:

— Մի՛ մոտենա՛ք, աղա՛... առաջ մի՛ վաղե՛ք, վտանգալի յե.— դոչեցին այս ու այն կեղմից, ամբոխի միջից յես մղելով նրան:

Բոցը յերկու գորեղ մասերի յեր բաժանվել, վորոնցից մեկը դուրս եր դալիս մի հարկանի տան փլատակված կոտորից, դոներից ու պատուհաններից.— այրվում եր յուղ մաքրելու բաժինը:

Գործարանի բակը խառնված եր խառնիճադանճ ամբոխով: Վառ գնելու տեղ չկար: Իվան Գրիգորիչը բաղմության առաջ կանգնած՝ կարգադրություններ եր անում: Ամբոխի միջից միջանիսը զանազան խորհուրդներ էյին տալիս նրան:

— Այդ միջոցներով անհնարին է բան առաջացնել: Հարկավոր է Նորելի գործարանից հրաչեջ նասոսներ բերել տալ,—ասում եր մեկը:

— Այո, այո, միայն Նորելի գործիքները կարող են այդ կրակին հաղթել,—ավելացնում է մի ուրիշը:

Սրանք հարևան գործարանատերեր էյին, վորոնք վոչ այնքան Իվան Գրիգորիչի մասին էյին հոգում, վորքան վախենում էյին, վոր մի գուցե հրդեհը մինչև իրանց գործարանները հասնի:

Իվան Գրիգորիչը չեր լսում նրանց:

— Ոգնեցե՛ք... շտապեցե՛ք... յես փո՛ղ կտամ... ջուր հասցրե՛ք, ի՞նչ եք սառել, անպիտաններ... քանդե՛ք

ցիք դուք իմ տունը, սրկանե՛ր... գողե՛ր... անպաղա՛կ-
նե՛ր,— անդադար հայհոյում եր նա մշակներին, չվա-
րած այս ու այն կողմ վազվզելով։

Հրդեհը շիջելուն՝ բացի իվան Գրիգորիչի գործա-
բանի մշակներից, ոգնում եյին և ուրիշ գործարանների
մշակներ ու կողմնակի մարդիկ։

Մի քանիսն իվան Գրիգորիչի մշակներից անդի-
տակցաբար այն աստիճան մոտեցել եյին կրակին, վոր
ամբոխը նրանց փոխարեն սարսափում եր։ Տոթը խեղ-
դում եր նրանց. կրակի տաքությունը կիզում եր նրանց
կիսամերկ մարմինները. խոշոր կայծերն անձրևի նման
հեղեղում եյին նրանց գլխին, բայց խորատուզված իրանց
գործի մեջ՝ կարծես նրանք վռչինչ չեյին դդում։

Ամեն վայրկյան նրանց նավթաթափա ցնցոտիներն
սպառնում եյին բոցավառվել թափվող կայծերից։ Մի-
քանի ուրիշ բանվորներ այդ թշվառներին վերջին
փտանդից ապահովելու համար բավական հեռվից մի
փոքրիկ նասոսով ջուր եյին սրսկում նրանց վրա։

Բոցը դորսնում եր... փախե՛ք... հեռացե՛ք պատը
քանդվո՛ւմ ե, — միաբերան դուռաց հանկարծ ամբոխը՝
սեղմելով և ավելի յետ մղելով։

Բարձրացավ մի խուլ վորոտաձայն, մի՛ ձայն, վոր
նմանվում եր հարյուրավոր հրացանների միաժամանակ
արձակման ձայնին։ Մի վայրկյանում մթնեց բոլորը և
ամեն ինչ կորավ թանձր խավարի մեջ։ Բոցը, ծուխը,
կրակը, մուրը և խորտակված պատի հողափռչին խառ-
նվելով իրար՝ աներևույթացրին հրաշք մշակներին։

— Վա՛յ գլուխս... վա՛յ... վա՛յ մեջքս կոտրվեց...
ո՛հ, աստված... ոգնեցե՛ք,— լսվում եր խավար գե-
հենի միջին։

— Վոսներս փչրեցին... վայ... վայ... ա՛հ, խեղդ-
վեցի, աստված... ոգնեցե՛ք... դո՛ւքս բերեք ինձ այս-
տեղից, վռչինչ չեմ տեսնում,— գոռում եյին մի ուրիշ
կողմից։

— Չե՛ղքս... ձե՛ղքս... ա՛յ... ա՛յ... ա՛յ... ա՛յ...
մի՛ մոտենա՛ք, աստված սիրե՛ք... այրվում ե ձե՛ղքս...
ո՛հ... ո՛հ...

— Ոգնեցե՛ք... ոգնեցե՛ք... խղճացե՛ք... մար-
մինս այրվում ե... չո՛ւտ, հող ածեցե՛ք վրաս...
ջո՛ւր... ջո՛ւր... ջո՛ւր...

Տեսարանը սոսկալի յեր։ Սա տարիքն անցկացրած
մի ծերունի յեր, վորի դյուրաբորբոք ցնցոտիները բո-
ցավառվել եյին և խաչում եյին նրա մարմինը կենդանի-
կենդանի։

Իվան Գրիգորիչը յերեսը շուռ տվեց, նրա նրբացած
ջղերն անդոր եյին դիմանալ մի այդպիսի այլանդակ
պատկերի։ Ամբոխի միջից շատերը սիրտ առնելով վա-
ղեցին առաջ։ Ուժեղներից մեկը մի գորեղ հարվածով
բոցավառված ծերունուն գլոբեց գետին, մնացյալներն
սկսեցին այս ու այն կողմից հողով ծածկել նրա մար-
մինը, կիսակենդան թաղելով վողորմելի զառամյալին։
Այդ միակ միջոցն եր, վորով հնարավոր եր հանդցնել
նրա այրվող ցնցոտիները։

— Նաչվեցի՛... ո՛հ... ո՛հ... այրվեցի՛,— խուլ
ձայնով հառաչում եր ծերունին հողի տակից։ Նրա դեմ-
քն այնչափ այլանդակվել եր, վոր ներկա յեղողներից
շատերը սարսափով ծածկում եյին իրենց աչքերը՝ նրան
չտեսնելու համար։

Ինչպես դժոխային անդունդի հատակից, լսվում եր
վեց այրված մշակների սիրտ պատռող մորմոքները։
Թավարվածներից յերկուսն արդեն անհնչացած եյին։
Նրանց այրված ու այլանդակված դեմքերն այլևս չեյին
կրում իրենց վրա մարդկային դեմքի վոչ մի նշան։ Նը-
րանց աչքերի բիրբերը դուրս եյին ցցվել, ինչպես խորո-
ված շագանակներ՝ մոխրի մեջ։ Գլխի ու յերեսի մազերի
ու հոնքերի հեռքերն անգամ չկային։ Նրանց դուռխներն
նմանվում եյին թե՛ կրակի միջից դուրս բերված մսի
կոտորների։ Չորս մարդ աշխատում եյին սրանց դիակնե-
րը մի կողմ քաշել։

Այդ դիակներինց մի քանի քայլ հեռավորության վրա մի յերիտասարդ մշակ, նստած գետնի վրա, իր ձեռները հողի մեջ տրորելով, բացականչում եր.

— Ձեռքե՛րս... ո՛ւֆ... ո՛ւֆ... խաչվեցի՛ն... տապակվեցին...

Նրա թեժացած աչքերինց գլորվեցին արտասուքի մի քանի կաթիլներ. նա, ձեռները տանելով դեպի աչքերը, թրջեց իր պոկած մատների ծայրերը, կարծես թե այդ կաթիլները կարող էյին զովացնել նրա սիրտը:

Ամբոխը խառնվել եր այնպես, վոր վոչ վոք այլևս ուշադրություն չեր դարձնում հրդեհի վրա, վորն այդ ժամանակ սկսել եր փոքր առ փոքր մեղմանալ:

Իվան Գրիգորիչը դռում եր.— Աստվա՛ծ սիրե՛ք... ոգնեցե՛ք... հրդեհը մի՛ մոռանաք... այդ վիրավորվածներին հետո ել կարելի չե ժողովել, բայց գործարանս, գործարանս ձեռքից գնում ե:

Բայց Իվան Գրիգորիչի դռուցների վրա ուշադրություն դարձնողներ քիչ չեղան. աշխատում էյին նրա հարևան գործարանատերերի մշակները. տեղերը նրանց ստիպում էյին չհեռանալ գործելուց, մինչև վոր բոցը չդադարի իրենց գործարաններին վտանգ սպառնալուց:

— Մենք չենք կարող այդ թշվառներին անտեր ու անոգնական թողնել ու հրդեհի մատին աշխատել,— գոռում էյին ամբոխի միջինց դեպի Իվան Գրիգորիչը.— յեթե այդքան մարդիկ մի բոսեյում գոհ են դառնում հրդեհին, ուրեմն թո՛ղ նա անխնա լափի քո անիծյալ գործարանդ ել, քեզ ել, վոր այդ թշվառ զոհերի կորուստյան պատճառն եք:

— Այո՛, այո՛: Դու յես դրանց այրելու պատճառը, յեթե դու ժամանակին քո անիծյալ նավթակաթսաները ե վառարանը չինել տայիր, այդ դժբախտությունը չեր պատահի վո՛չ քեզ, վո՛չ ել այդ խեղճերին:

Գործակատարը, վոր Իվան Գրիգորիչին չվաքի նման հետևում եր, դարձավ դեպի նա և ասեց.

— Իվան Գրիգորիչ, խորհուրդ եմ տալիս հեռու կանգնել այդ չարամիտներից. ո՛վ գիտե, ձեզ ի՞նչ վնաս կհասցեն, նրանք մեր մշակների ընկերակիցներն են. նրանք այժմ դադանացած են և, աստված գիտե, թե ինչե՛ր չեն մտածում:

Բայց Իվան Գրիգորիչը բանի տեղ չեր դնում վոչ ամբոխի սպառնալիքը և վոչ ել գործակատարի խորհուրդը. նրա ուշքն ու միտքը կենտրոնացած եր միայն և միայն հրդեհի վրա: Նա ամբողջ մարմնով դողում եր, թե ահա կրակը հասնելու յե ֆոտոգենով լիքը տակառների պահեստին, ուր հաղար լիքը տակառներ կային: Սակայն այդ յերկյուղն ավելորդ եր, վորովհետև հրդեհն այլևս այնպես սաստիկ չեր՝ ինչպես տաս բոսե առաջ:

3

Քամին դադարել եր, բոցն այլևս կատաղաբար այս ու այն կողմ չեր տարածվում, այլ հանդարտ և ուղիղ գծով բարձրանում եր վեր:

Այդ ժամանակ հանկարծ մի բարձրահասակ մարդ լազելով ամբոխին մոտեցավ. նրա դեմքի վրա նկատելի էյին խորին հուսահատության և անորոշ յերկյուղի նշաններ: Նրա ծունկերը ծալվում էյին և դժվարությամբ հնազանդվում նրա շարժվելուն: Սա արդեն մեզ հայտնի լրարերն եր:

— Թողե՛ք... թողե՛ք... տեսնեմ ո՞ւր են... վորդիս, յեղբայրներս... աստվա՛ծ իմ... նրանք ո՞ւր են... մի՞թե այրվել վերջացել են նրանք...

Ամբոխը ճանապարհ տվեց նրան, և նա շտապով մտավ մեջտեղ:

— Ո՞ւր եք, վորտե՞ղ եք, խոսեցե՛ք... Սարգիս, Գասպար... ա՛խ, այս Բեյրութն ե, իմ յեղբոր վորդի՛ն... ա՛խ, միթե դո՞ւ ել, դո՞ւ ել ես այրվել, Բեյրութ...:

— Յես... այո... բայց իմը վոչինչ, խեղճ հայրս, ծերունին... նա մեռավ... ահա նա... մեռավ նա, մինչև վերջը... իր ընտանիքի անունը հիշելով...

Մեհրաբը մոտեցավ իր վորդուն, բայց վերջինս՝ արտասուքն աչքերում՝ ցույց տվեց նրա յեղբոր՝ ծերունի Սարգսի գիտակը։ Մի րոպե Մեհրաբը մնաց քարացած, նրա արտասուքից չոր, ցամաքած աչքերը մեքենայաբար դառնում էին կամ իր ծերունի յեղբոր, կամ վորդու՝ Գառաշի այրված ու կուչ յեկած ձեռքերի կամ իր յեղբոր վորդու Բեյբութի կաշվից մերկացած աջ թևի վրա։ Իսկ ամբոխի զայրացած ուշադրությունը նրա վրա չէր։

— Ո՞ւմ մեղքն է... ո՞վ է պատճառն այս գոհերի... ո՞ւմնից կարող եմ առնել վրեժը... մի՞թե կրակից... — Այս ասելով նա յերկու ձեռներով սկսեց ուժգին հարվածներ տալ իր բաց, ալեխառն մազերով ծածկված, գլխին։

— Վա՛յ... յես ի՞նչ պատասխանեմ քո դավալենքին... յես ի՞նչ պիտի ասեմ քո պառավ կնոջը, նրա աչքը ճանապարհին և մնացել... նա սպասում է իր ծերունի մարդուն, վորք քաղաք է գնացել փող վաստակելու։ Էա՛վ վաստակեցիր...

Իվան Գրիգորիչը լսելով այդ գոռոցը, մոտեցավ մի րոպե ամբոխին։

— Ի՞նչ էս այստեղ գոռոցոց բարձրացրել, խելագար... ի՞նչ բղավելու ժամանակ է... գործարանս ձեռից գնում է, գու աշատեղ դռում էս, վաղի՛ր, ասում եմ, ոգնիր...

Մեհրաբը վոչինչ չէր լսում, նա, յերեսն ի վար ընկած իր յեղբոր գիտակի վրա, բառաչում էր։ Ամբոխը մնաց զայրացած Իվան Գրիգորիչի անտեղի հրամանի վրա։

— Նրա յեղբայրն այրվել, մոխիր է դարձել, նրա վորդու ձեռները խորովել են, նրա յեղբոր վորդու աջ

թևը կուչ է յեկել այրված, իսկ դու այժմ այդ դժբախտից ողնությո՞ւն էս պահանջում։ Անխիղճ, անաստված, նա այդ թշվառության մեջ ինչպե՞ս կարող է ոգնել անիծված գործարանին, — գոռացին ամբոխի միջից մեքենի տաք գլուխներ։

— Միևնույն է, աշտուհետե նրա գոռալն ել ողում չի տա. թող կրակը հանդարտվի, այնուհետե ինչքան կամենա՝ կարող է գոռ-գոռալ։ Վե՛ր կաց, ասում եմ, — դարձավ նա Մեհրաբին ու կոչի ծայրով մի հարված տվեց նրան։

Մեհրաբը մեքենայաբար գլուխը բարձրացրեց, դառը տանջանքի կնիքը դրոշմվել էր նրա ճակատի վրա։ Նրա աչքերը փայլում էին, դեմքն արտահայտում էր խելադար բարկություն։ Նա այդ դրության մեջ նմանվում էր մի կատաղի և հուսահատված առյուծի, վորը պատրաստվում է հարձակվել թշնամու վրա։

Մի վայրկյան նա այդ անչարժության մեջ մնաց, Իվան Գրիգորիչը կես բարկացած և կես յերկյուղի դեմքով չվարած նայում էր նրան։

Հանկարծ Մեհրաբը կայծակի արագությամբ վեր թռավ տեղից։

— Հա՛... հա՛... ճշմարիտ է ասում աղան... պետք է նրա հրամանը կատարել, պետք է ոգնել, յես պարտավոր եմ աշխատել...

Նա կամեցավ առաջ շարժվել, բայց ծունկերը չհաս-գանդվեցին։ Նրա գլուխը ծանրացավ և նրա վիթխարի մարմինը կայծակահարի նման անշնչացավ, թափալվեց Իվան Գրիգորիչի վրաների առաջ, իր յեղբոր սեացած գիտակի վրա։

— Գործարա՛նս, գործարա՛նս, աստված սիրեք,
նա փչանում ե... տունս քանդվեց,—բացականչում եր
ի վան Գրիգորիչը:

Դողդոջուն—դողդողացող.

Յերկյուղածությամբ—վախվախելով.

Խառնիճաղանճ—խառնված, անկարգ.

Կիզել—այրել.

Դյուրաբորբոք—չուտ վառվող.

Ֆոտոգեն—նավթ.

Կայծակահար—կայծակի իրիած.

Ք Ո Չ Ը

Ահա գարնան հետ և շարան-շարան,
դաշտավայրերից դեպի զով սարեր,
ձգվեց սայլերի, ուղտերի քարվան—
փախչում են շոգից թե՛ թուրք, թե՛ հայեր:
Թնդում են ձորում գանգի հնչյուններ,
ձիերի խրխինջ, պայտերի դուփյուն,
մեկ-մեկի կցած անվերջ քարվանսներ
քաշում և նսուր, ահեղ մոնչում.
Վորր տանում և ալաչխի քեչան,
կուժն ու խնոցին, ճիպոտն ու չաթան,
մորն ել զարդարված գիր ու փնջերով՝
որորվում, անցնում լեռան լանջերով:
Բայց նառն ինքնագոհ քայլում և հանդարտ
բոժոժ ու զանգեր վզին ու կրծքին,
և որորելով կապերտներ ու դարդ,
գեղեցիկ հարսն և տանում իր մեջքին.
մերթ բարկանալով կանգնում և հպարտ,

մերթ փրփուր թափում կատղած բերանով,
մերթ յերկար շուրթը կախելով բարդ-բարդ,
նա սլարձենում և գեղեցիկ բեռով:
Բռնել և ճամբեն խիստ իրարանցում.
դուփում են ձիեր, սանձերը կրծում.
աղնիվ մետաքսից վոսկեթել գործած
աղաջարիներ թամքերին ձգած,
հուժկու կրծքերից կապած թալիսման,
արեմելյան ճոխ արծաթն ու վոսկին,
ճերմակ դաթիլան, քողն ամպի նման—
փուփոմ են սիրուն հարսների դեմքին:

Լեռների տո՛նն և մարդ ու անասուն
ուրախ յերգելով դիմում են սարեր,
մոռնալով ձմռան քաշած վախառուն,
ծաղիկ փնջելով անցնում են ձորեր:
Անցնում են արագ քոչ-քոչի միջով,
դարնան արևից փայլում են դենքեր,
և թարմ, կենսարույր թավիչ կանաչով
բացվում են, ժպտում սարմորի դեմքեր:
Փոքրիկ յերեսան պինդ մեջքին կապած՝
լեղճ հովվի կինն ել մաղում և փոռքով,
ոգնում և մարդուն գոհ և սրտաբաց,
բախտի մորոշած ծանր միճակով:
Մայրում են, բայում դառնուկն ու մաքին,
թնդում կույերի, հորթերի բառաչ.
Խախ տրտնդալով դոմեյր ձագին
կանչում և դանդաղ՝ մաղելով առաջ:
Վազում են հոգնած շները հոտի
և յեղուն հանած թանչին են տալիս.
Լսվում և հանկարծ ձայնը յակոտի,
վոր քոչից ընկած՝ կայանչ և գալիս:
Քարվանսի ծայրը սարերը հասավ,
հասավ ու ձուլվեց թուխ ամպերի հետ.
մրան-մրանի լեռնից բուսավ,
ծաղիկների մեջ գույն-գույն, սիլավետ.

ալաչուխ, դադա անվերջ վրաններ,
չրջան կազմելով սառն աղբրի ափին,
ինչպես ծեր արծվի կարկատած բներ,
հենվեցին մեկ-մեկ բարձր քարափին:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Քանի՞ մասի կրթանեք այս հատվածը և ի՞նչպես կան-
վանեք յուրաքանչյուրին:

2. Առանձին-առանձին ի՞նչ ամբողջական պատկերներ ունի
այս հատվածը:

Պայտ—նալ.

Նառը—կարավանի առջևից դնացող ուղտը.

Բոժոժ—ուղտերի ու այլ անասունների վզի մանր ու կլոր դան-
դակները:

Թալիսման—կախարդանք.

Սիզավետ—կանաչավետ.

ԳՈՒԹԱՆԻ ՅԵՐՁԸ

Արի՛, գութա՛ն, վարի՛, գութա՛ն,
որն եկել է՝ ճաշ դառել,
առը շուռ տո՛ւր, խոփիդ դուրբան,
հո՛, հորովե՛լ, հո՛, հորովե՛լ:
Քաշի՛ր, յեղը, ուսիդ մատաղ,
քաշի՛ր՝ քաշենք, վար անենք.
Ճիպտին արա՛ քշի՛ր, հոտաղ,—
մեր սև որին ճար անենք:

Պարտքատերը գանգատ գնաց,
քյոխվեն կգա, կծեծի,
տերտերն որհնեց, անվարձ մնաց
կրարկանա, կանխի:

Են որն յեկան, թովջի արին,
հարկ են ուզում տերության.
Ի՞նչ տամ կոռին ու բեգյարին...
վարի՛, վարի՛, ի՛մ գութան:

Ձեռս պահաս, ուժս հատած,
հաղար ու մի ցավի տեր,
ինձ են նայում մերկ ու սոված՝
մի տուն լիքը մանուկներ:

Արի՛, գութա՛ն, վարի՛, գութա՛ն,
որն եկել է՝ ճաշ դառել,
առը շուռ տո՛ւր, խոփիդ դուրբան,
հո՛, հորովե՛լ, հո՛, հորովե՛լ:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ի՞նչն է նկարագրում բանաստեղծն այս յերգի մեջ:

2. Ինչո՞վ է տարբերվում բանաստեղծութունն աղճակ դըր-
ված քերց:

Կոռ—ճրի, ստիպողական աշխատանք.

Բեգյար—հարկ, տուրք.

Քչեց գառները մեր հովիվ հսկան,
յեղավ Սասունի սարերն աննաման.

«Եյ ջան, սարե՛ր,
Սասմա սարե՛ր...»

Վոր կանչեց նրա ձենից ահալոր
դղորդ—դըմբդըմբոցն ընկավ սար ու ձոր,
վայրի գազաններ բներից փախան,
քարեքար ընկան, դատարկուն յեղան:
Դավիթը ընկավ նրանց յետեից,
վորին մի սարից, վորին մի ձորից—
աղվես, նապաստակ, գել, յեղնիկ բռնեց,
հավաքեց, բերավ, գառներին խառնեց,
իրիկվան քչեց վողջ Սասմա քաղաք:
Կաղկանձ ու վոռնո՛ց, աղմո՛ւկ, աղաղա՛կ...
Քաղքցիք հանկարծ, մին ել են տեսան՝
գալիս են հրես անհամար դաղան.
«Վա՛յ, հաբա՛յ, փախե՛ք»...
մեծեր, յերեսեք
սրտաճաք յեղած,
գործները թողած,
վորը տուն ընկավ, վորը ժամ, խանութ,
ու ամուր փակեց դո՛ւռն ու լուսամուտ:
Դավիթը յեկավ, կանգնեց մեյդանում.
— Վա՛հ, ես մարդիկ ի՛նչ վաղ են քնում...
Հե՛յ ուլատեր, հե՛յ գառնատեր,
յեկե՛ք շուտով, բացեք դռներ.
ով մինն ուներ, տասն եմ բերել,
ով տասն ուներ—քսանն արել...
Շուտով յեկեք, յեկե՛ք, տարե՛ք,
ձեր գառն ու ուլ գոմերն արեք:
Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
ինքն ել մեկնվեց քաղքի մեյդանում,
զլուխը դրավ մի քարի՝ մնաց

ու մուշ—մուշ քնեց մինչև լուսաբաց:
Լուսին իշխաններ յեղան միասին,
գնացին Ձենով Ոհանին ասին.
— տո Ձենով Ոհան, տո մահի տարած,
ես խենթը բերիր, արիր գառնարած,
վոչ գառն ե ջոկում, վոչ գելն ու աղվես.
գազանով լցրեց մեր քաղաքն եսպես.
աստված՝ կսիրես՝ դիր ուրիշ բանի,
թե չե ես խալխին լեղաճաք կանի:

ԱՀՄԱԴԸ

1

Յես իմ մանկության դարուններն անց եմ կացրել
մեր սարերում: Շատ եյի սիրում իմ տատոնց տունն ու
միշտ այնտեղ եյի լինում: Իմ քեռիներից ամենից փոք-
րը՝ Ահմադը— հովիվ եր:

Նա ինձ տանում եր, ման եր ածում գառների մեջ.
հետը հանդից հաղարձի կարմիր ճյուղեր եր բերում ինձ
համար, իսկ իրիկունները հանում եր սրինգն ու ածում:

Ու աստղալի, լուսնյակ գիշերները, ահագին խա-
րույկի շուրջը բոլորած, ծափ եյին տալի, խնդում եյին
իմ պապն ու տատը, իմ քեռիները, իսկ յես թիթեռի
նման թրթռում, պար եյի գալի նրանց չրջանի մեջ:

Ահմադ թուրքի անուն ե, դրա համար ել, յերբ մենք
խոզի միս եյինք ուտում, միշտ տանեցիք հանաք եյին
անում, ծաղրում, ծիծաղում եյին Ահմադի վրա, թե
Ահմադը հայացավ, Ահմադը հայացավ...

Իհարկե, անունը յոտոր կասեր թուրք ե. բայց հենց
ներս մտներ, տեսներ, թե Ահմադն ինչպես ե ժաժ գա-
լի տանը, հերիք եր, իսկույն կիմանար, վոր տան սիրե-
լի տղան ե:

Ում կամենում եր, տուն եր բերում, պատվում,
ճամբա դնում: Աղքատը վոգորմություն ուզեր, թե հա-
րեանը հացփոխ, իր ձեռքով տաշտից վերցնում եր, տա-
լիս: Տան աղջիկներին ու փոքրերին հրամայում եր,
ծեծում եր, սիրում եր, ինչպես և մյուս քեռիներս:
Անասունների համար հողին տալիս եր: Մինը հիվանդա-
նալիս գրեթե ինքն ել հետն եր հիվանդանում, ենքան եր
սիրում: Ինքն ել ենպես սիրելի յեր ամենքին: Ահմադը
հիվանդանում եր թե չե, մեր ուրախությունն ել հետը
կտրում եր: Ու ամբողջ ուրը տատս ու պապս չորս կողմը
պտտվում եյին, ինչ վոր լավ բան եյին գտնում, շուրջն
եյին հավաքում, խեղրում եյին, թե ուրիշ ինչ կուզի
սիրտը:

2

Մի առավոտ ել վեր կացա, տեսնեմ՝ բոլոր տանեցիք
տխուր են: Իմ տատն արտասովելով քթքթում եր, ման
եր գալի անկյուններում ու ինքը չեր իմանում, թե ինչ
եր անում: Հարսներն ու աղջիկերը լուռ, տխուր, ներս
ու դուրս եյին անում: Վրանի դռան նստած խոսում եր
իմ պապը, իսկ մի քիչ հեռու գլխակոր նստած եյին
քեռիներս:

— Աստված լինի քո ոգնականը, բալա ջան,—
խոսում եր պապս: Չոր քարին դնալիս՝ չոր քարն ել կա-
նաչի քեզ համար: Պակաս որդ խնդությունով անց կե-
նա... Դե, վեր կաց, որն անց ե կենում, ճամբեդ յեր-
կար ե: Վեր կաց, բալա ջան:

Ահմադը չուխի փեշով աչքերը սրբեց, վեր կացավ,
յեկավ մոտեցավ իմ պապին: Պապս դրկեց, համբուրեց
Ահմադին, ու աչքերը լցվեցին արտասուքով:

— Գո աշխատանքը մեզ հալալ արա, Ահմադ ջան,
մեր աղն ու հացն ել քեզ հալալ լինի, քո մոր կաթնի
պես: Մեզ մտիցդ գցես վոչ: Թե աջողություն ունենաս՝
իմացրու, վոր մենք ել ուրախանանք, թե պակասություն

ունենաս՝ իմացրու, վոր հարեհաս լինենք: Դե, գնա,
քեզ մատաղ, աստված բարի ճամբա տա:

Ապա թե տատս գրկեց, համբուրեց Ահմադին,
հետո մնացածները շաց լինելով ձեռն առան: Ապուշ
կտրած փոքրերիս ել Ահմադը համբուրեց և մի յերկու
կով, հորթ, գամեշ, ձագ, մի կտրկան վոչխար, մի բար-
ձած եշ առաջն արած, յերկու շուն ել յետը գցած, ճա-
նապարհ ընկավ:

Մյուս քեռիներս ուղեկցում եյին Ահմադին:

— Աստված բարի ճամբա տա, Ահմադ ջան, գնաս
բարով, բալա ջան,— ձեռքը ճակատին դրած յետևից
ձայն եր տալի պապս:

3

Ահմադն անցավ սարի մյուս կողմը, մյուս քեռի-
ներս վերադարձան: «Բայց ինչո՞ւ եյին լաց լինում մեր
տանը, քեռի Ահմադն ո՞ւր գնաց», մտածում եյի յես:

— Ահմադն ուր գնաց, Նանի,— հարցրի իմ տա-
տին:

— Իրենց տուն դնաց— պատասխանեց տատս:

— Իրենց տունը վո՞րն ե...

— Ուրիշ տեղ ե:

— Ահմադը ո՞վ եր վոր...:


— Ահմադը թուրք եր, մեր ծառան եր: Ե՛, քանի
տարի մեր տանն եր...: Հիմի իր իրավունքն ստավ ու
դնա՛ց...:

— Բա ել չի՞ դալու:

— Չե՛, բալա ջան, դնա՛ց...:

Գ Ե Լ Ը

Ծիրան անունով մի յեզն ունեյինք: Մի ձմեռ եղ-
յեզը կորավ: Ախպերս ինձ դրկեց ման գալու: Յես ել
եռպես 16—18 տարեկան ջահել տղա յեմ: Գնացի գեղի



չորս կողմը ման յեկա ման— չգտա: Գոմահանդ ունենք,
ենքան ել գեղիցը հեռու չի: Ասի՝ յեզը սովոր ե, կարելի
յե եղ կողմն ըլի գնացած: Գնացի եղ գոմահանդը: Գնա-
ցի, ես գոմը նայեցի, են գոմը նայեցի, վերջը տեսնեմ՝
դուռստ վոր յեզը մի գոմումն ե: Յեզը դուրս արի. դուրս
գամ տեսնեմ արդեն մութն ընկնելու վրա յե: Սիրտս մի
ահ ընկավ: Տեսնում եմ, վոր լուսով չեմ կարող գեղը
հասնեմ: Մտածում եմ. գնա՛մ—չգնա՛մ:

Ի՞նչ անեմ...:

Չորս կողմս ամալի ձյունապատ դաշտ, չեն չկա,
ձեն չկա. ձեռս ել մի ճիպոտ ու մի դանակ:

Ի՞նչ պետք ե անեմ: Ասածու անունը տվի, յեզն ա-
ռաջս արի, քեցի: Մի քիչ տեղ անց եյի կացել. հան-
կարծ իրիկվան են դառը քամու հետ մի տխուր ձեն ըն-
կավ ականջովս: Կանդեցի, ականջ դրի...:

Տեսնեմ գիլի վռնոց ե. ո՛ւր...:

Ո՛ւր... ես վռնոցին միացավ ամբողջ խումբն ու
սարսափով լցվեց դաշտը: Մտիկ տամ՝ վոր աջ կողմս,
հեռվում, մթան մեջ, ջուխտ ջուխտ վառված ճրագների
մի բազմություն ե շարժվում...: Ել ի՞նչ. ձեռաց հառ-
կացա, վոր գելերի աչքերն են— սոված բոլուկ ե...:
Յեզը յետ տվի դեպի գոմերն ու քշում եմ, վո՞նց եմ վա-
զում...: Յետ նայեմ, վոր արդեն գալիս են: Յեզը թող
արի փախա, ընկա գոմը: Ընկա գոմը, բարձրացա սների
գլխներին գերանների վրա դատարկ տեղեր են լի-
նում ե՛...:

— Հա՛, իմանում ենք, կոնդերի վրա:

— Հա՛, եղ կոնդերից մեկին վեր ելա: Դեռ չեյի
տեղափոխվել— մին ել տեսնեմ յեզանս գոռոցը բարձ-
րացավ: Զարմանք բան ե, թե ենքան տարածությունն
ինչպե՞ս մի յերկու բույեյումը կտրեցին ու հասան:

— Վա՛, գիլի վոտին ինչը կհասնի,— խոսեց քեռի
Անդրիասը:— Են սարե գլխիցը վոր մի բան նկատեց՝ մին
ել կտեսնես կողքիդ դուրս յեկավ: Դրա համար են ասում
ելի, թե՛ գելն աղբեյիլ ե:

— Հա՛, են եյի ասում,— շարունակեց չորագյալցի

Ավոն:—Յեղանս գոռոցը բարձրացավ ու իսկույն ել կըտ-
րեց, խրխռոցն ընկավ: Խրխռոցն ել կտրեց, միայն գե-
լերի ժընգժընգոցն եմ լսում, ու լսում եմ՝ վոնց են
լափում...:

— Վա՛յ Ծիրան ջան... դուրս թռավ սրտիցս:

Բայց ի՞նչ Ծիրանի ժամանակն է: Յես իմ գլուխն եմ
լաց ըլում: Մտածում եմ թե՛ ես լավ եր, յեղնովը կըլեն
մինչև կլուսանա, կամ կկշտանան ու կգնան, կամ, ասում
եմ, ինձ չեն գտնիլ...: Դու մի ասիլ՝ սոված գիլի բո-
լո՛ւկ, յես հիստուն ասեմ դու հարյուր իմացի, ձեռաց
հախոել են, ու մին ել տեսնեմ, մութը գոմը լցվեցին են
ջուխտ ջուխտ վառած ճրագները ունենե՞րը բաց ա-
րած...:

Գտան...

Յեկել են լցվել, ներքեից աղա՛հ-աղա՛հ ինձ են մտիկ
անում: Յես ել չորացել եմ մնացել վերևը գերանին
կպած: Մտիկ արին մտիկ ու թող արին դուրս գնացին:

Շունչս յետ յեկավ: Ասի՝ «փառքդ շատ ըլի աստո՞ծ,
ես եր աղատվեցի»...:

Դեռ աստծու փառքը բերանումս, մին ել ինչ եմ
լսում: Իմ ուղղությամբ վերեւից կտուրը քանդում են,
չանգերովը հողը յետ են տալի: Արդեն լսում եմ չան-
գերը կոճերին են գիպչում...:

Սառը քրտինքը վրա տվեց...: Շտապեցի տեղս փո-
խեցի, անց կացա մյուս կոնդի վրա կուչ յեկա:

Բաց արին, կոճը վեր կալան, տեսան տակին չկամ:

Ելի յեկան ներքե: Մտիկ արին, վոր մյուս կոնդի
վրա յեմ. յետ դուրս գնացին: Հիմի ես կոնդի վերեւից
սկսեցին քանդել կտուրը:

Դարձյալ տեղս փոխեցի: Եսպեսով՝ նրանք քանդե-
լով, յես տեղս փոխելով՝ հասանք վերջին կոնդին:

Ել ո՞ւր գնամ:

Յեկան մտիկ արին կատաղած ու յետ գնացին: Քան-
դում են, վո՛նց են քանդում...:

Մի սուր զանակ ունեյի գրպանումս, հանեցի, բաց
արի ու ձեռքիս բռնած՝ մտքումս աղոթք եմ անում.—
տեր աստո՞ծ, դու ինձ ազատ անես ես նեղ տեղիցը...:

Իսկ հենց անգամիս վերևը քանդում են: Փանդելով
հասան կոճերին: Հասան կոճերին. մինը կոճերի արան-
քովը թաթը մեկնեց, վոր կոճը յետ քաշի: Թաթը բռ-
նեցի ու են սուր զանակովը գլուխ կտրեցի...: Թաթը
փախցրեց, վոռնալով, կոնձկոնձալով յետ գնաց ու
կտերն իրարով անցան: Իմացել եյի, վոր գելերի մինը
յեթե վիրավորվեց՝ մյուսները վրա են թափում, նրան
ուտում: Ասի՝ ուրեմն սրան ուտում են: Հիմի սպասում
եմ, վոր սրան կուտեն կպրծնեն, յես կգան: Ելի զանակս
ձեռիս պատրաստ սպասում եմ:

Ականջս ձենի յե: Գիշերվա մի ժամին՝ վոնց վոր
յերազում՝ մի բարակ ձեն եմ լսում:

— Ավո հե՛յ...

Ինձ են կանչում...:

— Տեր աստո՞ծ, մի՞թե ինձ են կանչում...: Մի՞թե
ախպերս ե...: Մի՞թե մերոնք են...: Գոմից ձեն եմ տա-
լիս, գոռում եմ:

— Աղանիկ հե՛յ... Եստեղ ե՛մ... Ղոմումն ե՛մ...
գելերն ինձ ուտում ե՛ն... Ողնեցեք հե՛յ...

Ելի նրանք ձեն են տալի, իմ ձենը չեն լսում, թեև
յես շարունակ կանչում եմ:

Մին ել տեսնեմ հրացանները տրոքեցին, յետևից
լավեցին հեռացող գելերի կաղկանձն ու մարդկանց հա-
րահոցը: Պարզ ճանաչեցի ախպորս ու մեր գեղացի-
տղերանց ամեն մեկի ձենը:

— Ավո հե՛յ...

— Եստեղ ե՛մ... Եստեղ ե՛մ... կենդանի յե՛մ...:
Ներս թափեցին Ղոմը:

— Փաթք քեզ աստո՞ծ... փառք քեզ աստո՞ծ, տրա-
խացած ու զարմացած կանչում են ամենքը: Յո՞ւժ յեկա

վերջին կոնդի վրից: Ախպորս գերկն ընկա ու սկսեցի հեկակալ:

— Եւ չաց մի ըլի, գնա աստծուն փառք տուր, վոր ետոր նոր մորից ծնվեցիր, — կանչեցին ես ու ես կողմից ու ինձ դուրս բերին. դուրսը, ուր թափված եյին մեր Ծիրան յեզան վոսկորները:

Դեռ լուսը չեր բացվել:

Հեռվից լսվում եր գելերի վոռնոցը:

Հ Ա Ր Ց

1. Ուրիշ ի՞նչ պատմություններ գիտեք դայլերի մասին:

Սմայի—անմարդարնակ.

Բոլոսի—խումբ.

Կոնդ—գերան.

Աղբեյի—հրեշտակ, հողեառ.

Հախոեի—լափել.

ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

(Հեֆիաթ)

Լինում են, չեն լինում, յերկու աղքատ ախպեր են լինում: Մտածում են՝ ինչ անեն, վոնց անեն, վոր իրենց տունը պահեն: Վճռում են՝ փոքրը տանը մնա, մեծը գնա մի ունեւորի մոտ ծառա մանի, ոռճիկ ստանա, զրկի տուն:

Եսպես ել մեծը վեր ե կենում, դնում մի հարուստի մոտ ծառա մտնում:

Ժամանակ նշանակում են մինչև մին ել գարնան կկվի ձեն ածելը: Ես հարուստը մի չլսված պայման ե

դնում ծառային: Ասում ե. «Մինչև ես ժամանակը թե դու բարկանաս՝ դու հազար մանեթի տուգանք տաս ինձ, թե յես բարկանամ՝ յես տամ»:

— Յես վոր հազար մանեթ չունեմ, վո՞րանդից տամ, — ասում ե ծառան:

— Բան չկա, փոխարենն ինձ տասը տարի ճրի կծառայես:

Տղեն մին վախենում ե ես տարորինակ պայմանից, մին ել մտածում ե, թե՝ ի՞նչ պետք ե պատահի: Ինչ ուզում են անեն, յես եմ ու չեմ բարկանալ, պրծավ՝ գնաց: Իսկ թե՛ իրենք կբարկանան, թող իրենք ել տուժեն իրենց դրած պայմանով:

Ասում ե՝ լավ. համաճայնում ե: Պայմանը կապում են, ու մտնում ե ծառայության:

Մյուս որը վաղ տերը վեր ե կացնում ծառային, դըրկում ե արտը հնձելու:

— Գնա՛, — ասում ե, — քանի լուս ե, հնձի, վոր մութն ընկնի, կդաս:

Ծառան գնում ե, ամբողջ որը հնձում, իրիկունը դալիս ե տուն: Տերը հարցնում ե.

— Եդ ո՞ւր յեկար:

— Դե արեւ մեր մտավ, յես ել յեկա:

— Չե՛, եդպես չի: Յես քե՛զ ասել եմ՝ քանի լուս ե՛ պետք ե հնձես: Արեւ մեր մտավ, բայց տես, նրա ախպեր լուսնյակը դուրս յեկավ: Սա ի՞նչ պակաս ե լուս տալի...

— Եդ վո՞նց կլինի... — զարմանում ե ծառան:

— Հը՞, դու արդեն բարկանում ես, — հարցնում ե տերը:

— Չե՛, չեմ բարկանում... յես միայն ասում եյի հողնած եմ... միքիչ հանգստանամ... — կըլըղում ե վախեցած ծառան ու դնում ե նորից հնձելու:

Հնձում ե, հնձում, մինչև լուսնյակը մեր ե մըտնում: Բայց լուսնյակը մեր ե մտնում թե չե, դարձյալ

արեգակն եւ դուրս գալի: Ծառան ուժաստատ արտում վեր եւ ընկնում:

— Վա՛յ, քու արտն եւ հարամ ըլի, քու հացն եւ, քու տված ուճիկն եւ... — սկսում ե հայհոյել հուսա-հատված:

— Հը՞, դու բարկանո՞ւմ ես, — կանգնում ե գլխին հարուստը: — Յերը վոր բարկանում ես, մեր պայմանը պայման ե: Ել հասես, թե քեզ հետ առանց իրավունքի վարվեցին:

Ու պայմանի ուժով ստիպում ե՝ ծառան կամ հա-ղար մտնեթ առեգանք տա, կամ տասը տարի ձրի ծա-ռայի:

Ծառան մնում ե կրակի մեջ: Հաղար մանեթ չուներ, թե տար, հոգին ազատ աներ. տասը տարի յեւ ես տեսա՞յ մարդու ծառայել անկարելի բան եր: Միտք ե անում, միտք, վերջը հաղար մանեթի պարտամուրհակ ե տալի հարուստին, դառն ու դատարկ վերադառնում տուն:

— Հը՛, ի՞նչ արիր, — հարցնում ե փոքր ախպերը: Ու մեծ ախպերը նստում ե, գլուխն յեկածը պտտում, ինչպէս վոր պատահել եր:

— Բան չկա, — ասում ե փոքրը, — դարդ մի՛ անի, դու տանը կաց, հիմի յեւ յես գնամ:

Վեր ե կենում հիմի յեւ փոքր ախպերն ե գնում ծա-ռա մտնում ելի նույն հարուստի մոտ:

Հարուստը դարձյալ վորոչում ե մինչեւ դարնան կիվի ձեն ածելը, ու պայման ե գնում, վոր յեթե ծառան բարկանա, հաղար մանեթ առեգանք տա կամ տասը տա-րի ձրի ծառայի, թե ինքը բարկանա, հաղար մանեթ տա ու եւ որից ել ծառան ազատ ե:

— Ձե՛, եդ ըլի ե, — հակառակում ե սղեն: — Թե դու բարկանաս, դու ինձ յերկու հաղար մանեթ տաս, թե յես բարկանամ, յես քեզ յերկու հաղար մանեթ տամ, կամ քսան տարի ձրի ծառայեմ:

— Լավ, — ուրախանում ե հարուստը: Պայմանը

կապում են, ու այժմ ել փոքր ախպերն ե մտնում ծառա-յության:

Առաջուր լուսանում ե, ես ծառան վեր չի կենում տեղիցը: Տերը դուրս ե գնում, տուն ե գալի, ես ծառան դեռ քնած ե:

— Ս՛յ աղա, դե վեր կաց ե՛, որը ճաշ դառավ:

— Հը՞, բարկանո՞ւմ ես... — գլուխը վեր ե քաշում ծառան:

— Ձե՛, չեմ բարկանում, — վախեցած պատասխա-նում ե տերը, — միայն ասում եմ՝ պետք ե արտը գնանք հնձելու:

— Հա, վոր եդ ես ասում, վոչինչ, կգնանք, ի՛նչ ես վազում:

Վերջապէս ծառան վեր ե կենում, սկսում ե տրեխ-ները հագնել: Տերը դուրս ե գնում, ներս ե գալի, սա դեռ տրեխները հագնում ե:

— Ս՛յ աղա, դե չուտ արա, հագի յե...

— Հը՛, հո չե՞ս բարկանում:

— Ձե՛, ո՞վ ե բարկանում, յես միայն ուզում ե յի տանը՝ ուշանում ենք...

— Հա՛, եդ ուրիշ բան ե. թե չե՛ պայմանը պայ-ման ե:

Մինչեւ ծառան տրեխները հագնում ե, մինչեւ արտն են գնում, ճաշ ե դառնում:

— Ել ինչ հնձելու ժամանակ ե, — ասում ե ծա-ռան, — տեսնում ես՝ ամենքն ել ճաշում են, մենք ել մեր ճաշն ուտենք՝ հետո:

Նստում են, ճաշն ուտում: Ծաշից հետո յեւ ասում ե. «Մշակ մարդիկ ենք, սկսեք ե միքիչ քնենք հանգստա-նանք, թե չե՞»: Գլուխը կոխում ե խոտերի մեջն ու քնում մինչեւ իրիկուն:

— Տո՛, վեր կաց ե՛, միթեց ե՛, ուրիշները հնձեցին, մեր արտը մնաց... Վա՛յ քու դեսը զրկողի վիզը կտորի, վա՛յ քու կերածն ել հարամ ըլի, քու արածն ել... Ես

ի՞նչ կրակի մեջ ընկա...—սկսում է գոռգոռալ Հուսա-
հատված տերը:

— Հը՞, չլինի՞ թե բարկանում ես,— գլուխը վեր ե
քաշում ծառան:

— Ձե՛, ո՞վ ե բարկանում, յես ես եյի ասում, թե՛
մթնել ե, տուն գնալու ժամանակն ե:

— Հա՛, եդ ուրիշ բան ե, գնանք, թե չե հո մեր
պայմանը գիտես. վա՛յ նրա մեղքը, ով բարկացավ:

Գալիս են տուն: Տեսնում են՝ Հյուր ե յեկել:

Ծառային զրկում ե, թե՛ գնա վոչխար մորթի:

— Վո՞րը:

— Վորը կպատահի:

Ծառան գնում ե: Միքիչ հետո լուր են բերում հա-
րուստին, թե՛ հասի, վոր քու ծառան ամբողջ հոռ-
կոտորեց: Ես հարուստը վազում ե, տեսնում ե՝ ճիշտ
վոր, ինչ վոչխար ունի, բոլորը ծառան մորթել ե: Դըլ-
խին տալիս ե, գոռում:

— Ես ի՞նչ ես արել, ա՛յ անաստված, քու տունը
քանդվի, ինչ իմ տունը քանդեցիր...

— Դու ասիր՝ «վոր վոչխարը պատահի՛ մորթի»,
յես ել յեկա, բոլորը պատահեցին, բոլորը մորթոտեցի.
ուրիշ ավել-պակաս ի՞նչ եմ արել,— հանգիստ պատառ-
խանում ե ծառան,— բայց կարծեմ դու բարկանում
ես...

— Ձե՛, բարկանում չեմ, միայն ափսոսս գալիս ե,
վոր եսքան ապրանքս փչացավ...

— Լավ, վոր բարկանում չես, է՛լ կծառայեմ:

Հարուստը մտածում ե՝ ի՞նչ անի, վո՞նց անի, վոր
ես ծառայիցն ազատվի: Պայման ե կապել մինչե մին ել
գարնան կկվի ձեն ածելը, այնինչ դեռ նոր են մտել
ձմեռը, դեռ վո՞րտեղ են գարունն ու կկուն...

Միտք ե անում, միտք, մի հնար ե մտածում: Կնոջը
տանում ե, անտառում մի ծառի վրա հանում ու պատ-
վիրում, վոր «կուկու» կանչի: Ինքը գալիս ե, ծառային
տանում, թե՛ արի գնանք անտառը վորտի: Հենց ան-

տառն են մտնում թե չե, կինը ծառի վրա կանչում ե
— «կուկու՛ւ, կուկու՛ւ»:

— Ըհը՛, աչքդ լույս,— ասում ե ծառային տերը,—
կկուն կանչեց, ժամանակդ լրացավ...

Տղեն գլխի յե ընկնում տիրոջ խորամանկությունը:

— Ձե՛,— ասում ե,— ո՞վ ե լսել, վոր տարու ես
յեղանալին, ձմեռվա կիսին, կկուն ձեն ածի, վոր սա ձեն
ե ածում: Յես պետք ե ես կկվին սպանեմ, սա ի՞նչ կկու-
յե...

Ասում ե ու հրացանը քաշում ե դեպի ծառը:

Տերը գոռալով ընկնում ե առաջը.

— Վա՛յ չգարկես, աստծու սիրուն... սե լինի քու
պատահելու ուրը, ես ի՞նչ փորձանք եր, վոր յես ընկա
մեջը...

— Հը՞, չլինի՞ թե բարկանում ես...

— Հա՛, ախպեր, հերիք եր. արի՛ ինչ տուգանք
տալու յեմ, տամ, քեզանից ազատվեմ: Իմ դրած պայ-
մանն ե՝ յես ել պետք ե տուժեմ: Հիմի նոր եմ հասկա-
նում են հին խոսքը, թե՛ «մարդ ինչ անի, իրեն կանի»:

Եսպես հարուստը խելոքանում ե, իսկ փոքր ախպե-
րը մեծ ախպոր տված պարտքի թուղթը պատռում ե,
հազար մանեթ տուգանքն ել առնում ու վերադառնում
տուն:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ո՞ւմ կողմն ե հեղինակի համակրանքը:
2. Ի՞նչ նպատակ եր հետապնդում աղայի առաջարկած պայ-
մանը:
3. Ի՞նչպես ե մտածում փոքր յեղբայրն այդ դրությունից
ազատվելու համար:

Յես ու Գարո՝ բիճեն անցնում էյինք Լոռու ձորով։

— Հե՛յ, տիրացո՛ւ— ձայն տվա՛մ նա։

— Համմե՛։

— Հրամանդդ շատ։ Յես տեսնում եմ, վոր ես մեր նոր ուսում առածները շատ աշխարհքից դուրս մարդիկ են, դու սրան ի՞նչ կասես։

— Ինչո՞ւ, Գարո՛ բիճա։

— Նրա համար, վոր հենց դիտեն՝ ամեն բան մե- նակ իրենք են հասկանում, իրենցից առաջ ել վոչ մարդիկ են յեղել, վոչ բան են հասկացել։ Մին ել կտեսնես՝ բռնեցին ու գլխիդ գելի ավետարան կարդացին— հա՛ ես ճանճ պահիր, ես արբեչումի ճիճու պահիր, եսպես մածուն չինիր, եսպես ցանի՛ր, եսպես հնձի՛ր... Տո՛, հեր որհնած, մի առաջ հարցրու, տես՝ եդ բաները դրանք ել միտք են արել, թե չե. նրանից յետը՝ թեկուզ ուշունց տուր։

— Յետո մի՞տք եք արել վոր, Գարո բիճա։

— Ա՛խպեր, ա՛յ, յես հիմա որինակի համար՝ մի՛նն սսեմ դու տես. մենք ել հացակեր մարդիկ ենք, բան ենք հասկանո՞ւմ, թե չե։

— Մի աշուն մեր Դավոն գնաց քաղաքը խոզ ծախելու։ Մի ճանանչ մարդ արբեչումի ճիճվի սերմ եր տվել թե՛ տարեք ձեր տեղն առաջ բերեք։ Ճամփա պահեցինք, մինչև գարունը բաց ելա՛մ։ Գարունը վոր բաց ելա՛մ, վոնց վոր խրատ եր տվել՝ ես ճիճվի սերմը բերինք մեր խիղանի ծոցում դրինք, վոր տաքանան, դուրս գան։ Դուրս եկան տեղի ձերի չափ մանր, սն՝ զաղեր։ Տիրացո՛ւ։

— Համմե՛։

— Ես ձեր ուսմանականները թե դիտեն՝ արբեչումի ճիճուն ի՞նչ կուտի։

— Թթան տերե։

— Ապրես, գրաւոտ ա։ Գնացի ձորից մի չալակ

թթան տերե բերի, կապեցի մենճ տան ամբարի վոտիցն ու ճիճուն վրեն ածի։ Ինչքան մարդ եկա՛մ նայելու, վոչ-վոքի տուն չթողինք՝ վոր աչքով չտան, ասինք՝ թող մի տեսնենք՝ ի՛նչ ա դուրս գալիս։ Ա՛յ տղա, եդ անտեր ճիճուները մի քանի որ կացան ու կոտորվեցին։ Հիմա թե ասենք նրանից եթ, վոր դոմեչի ձաղը շատ եր մոտ կապած, վոտնատուկ եր ապիս, թե նրանից եր, վոր հավերը տուն եյին թափում՝ կացահարում. դե վո՞նց ասենք։ Հո չեյինք կարող հավերը կոտորել կամ ձագն սպանել։ Թե ասենք անձրևիցն եր, վոր յերգիկով ներս եր թափվում, մին ել մարդ միտք ա անում՝ թե բա քաղաքումն անձրև չի գալի՞... Մի խոսքով՝ բան դուռի չեկա՛մ։ Տեսանք վոր մեր յերկրումն արբեչումի ճիճուն ածում չի, բան չի դառնում։ Դե՛, գարմանալու ինչ կա՛յոր. ենպես յերկիր կա՛ հավք չի ապրում, ենպես յերկիր կա՛ ցորեն չի դուրս գալի. ամեն աշխարք մի տեսակ բնություն ունի. բայց ես մեր նոր ուսում առածներն ետքան ել չեն հասկանում։

Ճանանչ—ճանոթ.

Արբեչում—մեռաքո.

Խիղան—կին.

Ջաղեր—բաներ.

ՄԵ՛կ ԵԼ, ՄԵ՛կ ԵԼ

Հե՛յ, ձե՛զ մատաղ, բանվո՛ր տղերք,
մե՛կ ել, մե՛կ ել, մի գա՛րկ տվեք,
մի գա՛րկ տվեք ցարի գահին,
վոր խորտակվի նա հիմնովին...

Միահամուռ մեր ուժերով,
հերոսների արյան գնով
թեև ընկավ ցարն իր գահից,
բայց չի ջարդված միանգամից:

Այժմ ել ցարն է մեզ աղաչում,
վոր խնայենք վերջին շնչում.
բայց, ձե՛ր մատաղ, բանվոր տղերք
մե՛կ ել, մե՛կ ել, մի զարկ տվեք...

Մի զա՛րկ տվեք ցարի գահին,
վոր խորտակվի նա հիմնովին...

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ո՞ւմն է ուղղում բանաստեղծն իր խոսքը:
2. Ինչո՞ւ յեր անհատեհա՞ «մեկե՛լ, մեկե՛լ» զարկ տալ:

Միահամուռ—միատեղ, միասին:

ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

Նորից յեկա ալյեյության
զործարանի պարիսպներին,
յերկաթակուռ ալն շենքերին,
վորոնք մի որ
չունչ տվեցին իմ յերգերին:

Ահա մտա նրա շեմքով—
ինձ վողջունեց արթուն սուլիչ.
մեքենաներն ուրախացած՝
ու խենթացած՝
արձակեցին յերկաթե ճիչ:

Իրար անցան ճախարակներ,
ժիր փոկերն ու ստուտակներ,
չողեմուրճը հպարտ թնդաց
ու վորոտաց՝
— Դեռ չե՛մ հոգնել, դեռ չե՛մ հոգնել:

Նրանց խմբով ձայնակեցին
չարաճճի հազար մուրճեր,
ծլվլալով զրնդացին,
կլկլացին՝
վորպես ուրախ դեղձանիկներ:

Յեվ այս ժխոր—համերգի մեջ
մեծ քուրայից ժայթքեց վոստնում.
այդ անհանգիստ կայծն եր անշեջ—
առավոտյան՝
նոր կյանքի յերգն եր սլատրաստում:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ի՞նչը չունչ տվեց բանաստեղծի յերգերին:
2. Այս վոստանվորի մեջ բանաստեղծն ի՞նչ է պատկերացնում:
3. Ի՞նչն է համերգ համարում բանաստեղծը և ինչո՞ւ:

Պարիսպ—բարձր և հաստ պատ.
Դեղձանիկ—յերգող թռչունների մի տեսակը.
Ժխոր—խառնիխուռն.
Ժայթքել—զուրա թափել.
Անշեջ—չմարող.

Քսանվեց եյին...

նրանք ամենքն ել ջահել ու յեռուն,
նրանք ամենքն եւ նորաշունչ դարուն—
փնջած մեխակներ—քսանվեց ընկեր:

Կռիւ՛ եր զարկել
անգղների դեմ Քսանվեցն այն,
և անհավատար և դյուցադնական
այն մեծ կռվի մեջ նա գերի ընկել:

Ու մի առաւոտ,
յերբ աստղերը կաթ՝ դեռ չեյին հանդել,
Ախչա-Կումայի դաշտում ավազոտ—
վեհ Քսանվեցին բերին կրակել...

Յերկու-յերկու շարք,
արձանի նման կանգնել են նրանք,
դունտո ու հպարտ, լուռ են, չեն խոսում,
արհամարհանքով մահին սպասում...

— Կացեք մի վայրկյան,—
հանկարծ վորոտաց սև դահլճներին
ընկեր Շահումյան.—
յերջանիկ ենք մենք, վոր հիմա կընկնենք
յերադած մահով, ջահել ու վայել
կոմունարներին.

Բայց լավ իմացեք, վոր հենց իսկ վաղը
սպասում ե ձեզ խայտառակ մահը—
վայել չներին...

—Մենք այդ լավ գիտենք...
Յերերաց մի ձայն... ու չանցավ վայրկյան՝

զնդացիրներից Քսանվեցն այն
հնձած արտի պես կող-կողի ընկան...

Ինացքը յետ դնաց...

Մինչ Քսանվեցը իրարու զրկած՝
Ախչա-Կումայի ավազոտ դոդում
ամեն լուսածեղ կոմունարների
հիմն են յերգում:

ՆՈՐ ԿՅԱՆՔ

... Զուգել ես նորից դաշտ, անտառ ու լեռ,
դարուն, ամեն տեղ նոր կյանք ես վառել.
Իմ սրտում ել ես թևերդ փռել,
իմ հոգում ել ես հրդեհել նոր սեր:

Յեւ ահա կրկին զվարթ ու ջահել,
դուրս յելա ախուր մենության բանտից.
սլաշծառ աչքերդ վողջունում են ինձ,
և յես չեմ կարող իմ ճիշը պահել:

Բացել ես իմ դեմ վոսկեղեն հեռուն,
ծաղկել ես սարում, անտառում, արտում...
ուրիշ յերգեր են հնչում իմ սրտում—
վողջուն քեզ, արեւ, վողջուն քեզ, դարուն:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ի՞նչպես ե նկարագրել բանաստեղծը դարունը:
2. Ուրիշ ի՞նչ յերգեր են, վոր հնչում են բանաստեղծի սրտում:

— Ապրե՛լ...

— Ապրե՛լ միայն կարմիր գարնան,
յերբ ջրերն են իրար խառնվում,
գետեր դառնում,
յերբ կանաչն է հասակ առնում—
փարթամանում.

Ապրե՛լ միայն կարմիր գարնան:

— Կովե՛լ...

— Կովե՛լ միայն կարմիր գարնան,
յերբ վորոտն է ահեղ թնդում,
յերբ կայծակն է յերկինք քանդում,
կռիվների բոցում քառս,
տարերքների խուլ ովկիանոս:

— Մեռնե՛լ...

— Մեռնե՛լ միայն կարմիր գարնան,
յերբ հեղեղն է լեռներ խոցում,
յերբ սելավն է ուղի բացում,
ինչ կա անպետք տանում ի՛ր հետ:
անցած կյանքի ել չկա հետք...

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ի՞նչ նմանութիւն կա «կարմիր գարնան» և «նոր կյանք»
բանաստեղծութիւնների միջև:

2. Ի՞նչ տարբերութիւն կա այդ բանաստեղծութիւնների
միջև:

Յէս կանգնած եմ վայրի ժայռի կատարին,
բա՛րձր, բա՛րձր,—հեռավոր ու մենավոր,
այնտեղ ցածում դեռ նիրհում են դաշտ ու ձոր,
դեռ խավար է այնտեղ դաժան ու լուին:

Սակայն շուտով կատարներից հեռանիստ
արեն այնտեղ հուր կլթափե և վոսկի,
և կցնծան դաշտերը լուռ ու հանգիստ,
յերկիրն անհուն՝ կարօտ կյանքի ու խօսքի:

Յե՛վ դու կերպես, դարձնած աշխարհ, իմ առաջ,
կարճագանքես իմ վողջույնին սիրառատ,
կլսեմ յես դարձյալ աղմուկ ու շառաչ
ու կսիրեմ հեքիաթային առորյաղ:

Լուռթյուն է, մութ է այնտեղ, սակայն իմ
սրտում արդեն արշալույս է՝ հարությո՛ւն,—
վողջույն ձեզ մութ ուղիներում յերկրային,
իմ յեղբայրնե՛ր, հեռուներում ու բանտում:

Հ Ա Ր Ց

1. Ի՞նչ արեւածաղի և արեւի մասին է խոսում բանաստեղծը:

Մենավոր—մենակ.

Հեռանիստ—հեռավոր, հեռվում նստած.

Հուր—կրակ.

Դաժան—անդուլթ.

Անհուն—անսահման.

— Լսո՞ւմ եք... սպա՛սեք մի փոքր, յետ ձեզ կպատմեմ բոլորը սկզբից...

Գնո՞ւմ եք... լս'՛վ, յետ կպատմեմ ծաղիկներին ու խոտերին...

— Մերո՛ւն կակաջնե՛ր. լս'՛վ լսեցե՛ք արևի պատմութ՛յունը...

Աղջիկս հիվանդ եր...

Գիտե՞ք, նա յե՛լ ձեզ նման մի ծաղիկ եր, նախշու՛նիկ դեմքով, փոսեկզանդուր մաղերով...

Աղջիկս հիվանդ եր...

Բժիշկը յեկավ, իջավ մեր բնակարանը: Նա ախուր եր: Ինչո՞ւ... հա՛, հիշում եմ, նա չե՛ր սիրում ներքևի հարկերը:

Նա իջավ ներքև, նայեց իմ աղջկան, նայեց սենյակի պատերին.

— Խոնավ է, — ասաց, — պիտի փոխեք բնակարանը, պիտի արևկող սենյակ ձարեք:

— Քա՛նի յերեխա ունե՛ք, — հարցրեց:

— Յերեքն եյին. յերկուսը մեռան... մնաց այս մեկը... Ազատե՛ք իմ աղջկան, նա մեր տան փողին ե...

Նա ինչ-վար դեզ գրեց ու ախուր դեմքով դուրս գնաց:

— Հայրե՛կ, ի՞նչ գրեց բժիշկը, — հարցրեց աղջիկս:

— Արե՛ դրեց, սի՛րելիս, արե՛ դրեց, փոք քեզ վրա փայլի ե դու առողջանաս:

Ու են որը գնացի արև փնտռելու. գնացի չատ հեռու ու վերջապես գտա արևկող մի բնակարան:

— Մերո՛ւն կակաջներ, արևի կարմիր զափակներ, ափսիս լավ չե՞ր՝ ձեզ մոտ բերեյիք իմ վոսկեծամիկ աղջկան:

Դուք նրան կղուղեյիք կարմիր ու կանաչ...

Բայց, հա՛, դիտե՛մ, դուք հաց չեյիք տալ իմ աղջկան՝ դուք սնվում եք վաղորդյան ցողով...

Լսե՛ք, յետ դեռ չեմ վերջացրել...

...Մյուս առավոտ պիտի տանեյի աղջկանս արևի տուն, բայց յերբ լուսացավ, նա ինձ կանչեց. ձեռքս բռնեց ու փակեց աչքերը:

Հետո յեկան մարդիկ ե նրան տարան...

Ու յերբ վոսկեծամիկ աղջիկս հեռացավ մեզանից, մեր տան փողին ել նրա հետ գնաց:

Մենք բոլորս այրվեցինք լաչուց, ու յետ դարձա արևի հիվանդ:

Յետ գնում եյի, նստում փոքրիկ դերեզմանի մոտ և սպասում արևածագին:

Ու միշտ տեսնում եյի Լուսիկին արևը դրկած և իր մաղերը փռած նրա վրա...

Բայց յերբ պատմում եյի արևի մասին, կինս ու մայրս չեյին հավատում. նրանք կարծում եյին, թե խելագարվել եմ և փողրում եյին այրված, ցամաքած աչքերով:

Ու մի որ ել յես դեմեցի արևին.

— Հղոր արև, — ասացի, — մի մե՛ծ պանդառ ունե՛մ, քեզանից.

Ինչո՞ւ դու մի հատ չողքդ խնայեցիր իմ աղջկան, ինչո՞ւ սպանեցիր ու տարար իմ Լուսիկին:

Նա ախրեց ու մթնեց:

— Գնա, — ասաց, — գնա՛, հայտնի՛ր աշխարհին, ասա՛ վերևի հարկն արևի շողքերը խլեց, ստվեր ձգեց ներքևի հարկին ու սպանեց են վոսկեհեր աղջկան...

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ինչո՞ւ բժիշկը չե՛ր սիրում ներքևի հարկերը:

2. Ո՞վքեր եյին ապրում վերի հարկում:

Վոսկեհեր—վոսկեղույն մաղերով.

Ահա կրկին մեզ մոտ դարուն,
 Յերևանում ահա կրկին
 դարունն անմար բույր է վառում
 և բորբոքում աշխուժ գրգիռ:
 Յոթը դարուն ահա արդեն՝
 Հեռու սրից, ահից, մահից,
 ծլում են վառ, պայծառ թուփեր
 արևի տակ խորհրդային:

Գարուն, դարուն Յերևանում,
 Յերևանում ահա նորից
 շնչում է խոր, թնդում անհուն:
 Հիշում ես, սիրտ դարուն մի այլ,
 յերբ տնկվեցին ծառերն այս նոր,
 յերբ մեր բոբիկ մանկանց նման
 նրանք դեռ մերկ, նրանք տկլոր—
 յերբ մեր լուսե մանկանց նման
 այնպես վտիտ, այնպես բարակ—
 դեռ չուրջը սով, դեռ չուրջը մահ—
 չարք կանգնեցին այսպեղ նրանք:
 մեր մանկանց պես տկլոր, վտիտ
 ծառերն այս, յերբ կեցան յերթի՝
 չատե՞րն արդյոք հավատացին
 նրանց պայծառ առավոտին.—
 տե՛ս ինչպե՛ս են փթթել հիմա,
 հասակ առել ու կանաչել—
 տես՝ ինչպե՛ս են նրանք աճել,
 մեր ջուսեղեն մանկանց նման...

Ահա կրկին մեզ մոտ դարուն,
 Յերևանում ահա կրկին
 դարունն անմար բույր է վառում,
 և բորբոքում աշխուժ գրգիռ:
 Յոթը դարուն ահա արդեն՝
 Հեռու սրից, ահից, մահից
 բացվում են վառ, աճում այսպես
 մանկիկները խորհրդային...
 Յոթը դարուն արդեն ահա
 բոյ են քաշում ծառերն այս մեր...
 վորբեր եյին նրանք առաջ—
 հիմա կայտառ պիտենեներ...
 Տես ինչպե՛ս են նրանք քայլում՝
 մայիսմեկյան յեւած յերթի.
 նրանց դեմքին— խինդը փայլուն,
 շրթունքներին— վառքը վարդի:
 Տես՝ ինչքա՛ն է քայլքը հաստատ,
 ինչքա՛ն նրանց յերթը աշխուժ,
 նրանք անդուլ, նրանք վստահ,
 նրանց սրտում կորով և ուժ...

ԼՆՆԻՆ

(Հատված)

Գիտե՞ք թե աշխարհի արդանդից
 ինչքա՛ն հանճարեղ մարդիկ,
 ինչքա՛ն, ինչքա՛ն Կրոմվել,
 կամ Հնդիկ Գանդի—
 անթիվ
 յեղել են,

կան դեռ
ու կգան—
այնինչ Իլլիչը— մեկ է,
ուրիշ Իլլիչ— դժգոհ թե,
ուրիշ Իլլիչ— չկա:
Դասակարգը
դար դարի յետևից
կերտել է Իլլիչին,
դասակարգը
դար դարի յետևից
Հյուսիս է նյութել:
Անգամ ջրկիրը Տերեթի
ալի է Իլլիչի ուղեղին—
մի թել:

Թել-թել,
նյարդ-նյարդի յետևից,
նյարդից թե քո,
թե իմ—
առել է դասակարգը,
ալի է Լենինին:
Թել թել,
դար-դարի յետևից
Հյուսիս է դասակարգը—
բարդ
կանխա:

Յեղ հիմա—
Իլլիչը
վախճանված...
մեռած կամ,
կամ չկա:
Չէ,
պրոլետար,

Իլլիչը— մեջդ է,
իմ մեջ է,
նրա մեջ է,
Իլլիչը— կա:

Կա՛ դասակարգը:
Դասակարգը—
պարզել է Լենինին իրրե գեղի:
Դասակարգը հակադրել է հին—
եր
Լենինին:
Ու կարգե հին—
Լենինի ՁՄ:

Ե՛ր,
դո՛ւք,
Ռոկֆելլեր,
Ստի՛նես,
Մո՛րգան կամ,
շո՞ւմ էք՝
մենք դեռ կգա՛նք.
մեր բանակը կանցնի դեռ ձեր աշխարհով:
Դեռ կգա Իլլիչը,
վոր մտնի համաշխարհային Սոցիալիզմ:

ԾԻՐԱՆԻ ՏԱՓ

Թեկուզ անունը Ծիրանի տափ է, բայց և ծիրանի
վոչ մի ծառ չկա այնտեղ: Գետի ափին, քարաժայռերի
ճեղքերում մացառներ կան, քրքրված ցախավելի պես
դիք-դիք ցցված: Ծիրանի տափի առավելութունը քա-
միններից պաշտպանված լինելն է և ջրի մոտիկութունը.

մերում, յերբ դարնան սկզբին բորան ե լինում, անձրևա-
խառն քամի, չորանը վոչխարը դեպի ձորն ե քշում և
պատասպարան տալիս լերկ Ծիրանի տափի ժայռերի յե-
տեմ: Այժերը մացառներ են կրծում: Վոչխարը՝ գլուխն
իրար չեքի մեջ՝ վորոճում ե: Հոտի մեջ և վոչ մի վոչ-
խար բորան որերին գլուխը վեր չի հանի:

Ծիրանի տափը հիշատակելու արժանի վոչինչ չեը
ունենա, յեթե նա յերկու գյուղի՝ Միրի և Մրոցի միջև
անվերջ շարունակվող կռիվների, խոսք ու զրույցի ա-
ռարկա չդառնար, յեթե նրանք մահակներով կռիվ չտա-
լին, յերկու հարևան գյուղերը—Մրոցն ու Միրը:

Յերկու գյուղերն ել գետի ձախ ափին են ընկած,
Մրոցը՝ վերև, իսկ Միրը՝ ներքև:

Մրոցն ու Միրը հավասար ծխեր ունեն և առաջնե-
րում, յերբ մահակներով կռիվ եյին տալիս Ծիրանի տա-
փի համար, այնպես եր պատահում, վոր մի տարի Մրոցն
եր հաղթում, հաջորդ տարին՝ Միրը, կամ յերկուսն ել
չարզված վերադառնում եյին, վորովհետև Ծիրանի տա-
փի համար համարյա հավասար մահակներ եյին դարկ-
վում յերկուստեք:

Մրոցն ել եր այժ ու վոչխար պահում, Միրն ել,
վերի գյուղումն ել կար յեկեղեցի, ներքևի գյուղումն
ել: Շատ անգամ միաժամանակ եյին բացվում ուշունցի
պարկերը: Վերևի գյուղում, պատի տակ նստոտած ալե-
վորներից վոմանք հոնի կարմիր փայտերը մեկնում եյին
Միրի կողմը, հայհոյում:

— Միրն ել չեն ա՞, վառես՝ խանձահոտ չի գա: Մեր
աղբյուրումն են նրանք խմոր հունցում...

Գուցե հենց այդ ժամանակ Միրի ալետրներն ել եյին
անիծում վերի գյուղերին և ջահելների սրտում պապե-
նական վոխը թեժ պահում:

Վոչ վոր չեր հիշում վոչ Մրոցում և վոչ ել Միրում,
թե յերբ ծագեց առաջին թշնամությունը Ծիրանի տափի
համար:

Յեթե Մրոցին եյին հարցնում, հազար ու մի պատ-

մություն եյին անում, թե իրենցն ե Ծիրանի տափը,
«իւնջիւնքի» ձեռքով քաշած պլան ունեն, թղթեր կան:

— Ես ե, յես իմ ձեռքերով եմ ենտեղ կուրգանի քա-
րերը սահմանի վրա շարել...

— Իմ միտս ե, վոր հորս վոչխարը գիշերն ել եր
Ծիրանի տափում մնում:

— Միրի սահմանը Ծիրանի տափից ել շատ դենն
ա... են մեր հայրական հողն ա...

Իհարկե, Մրոցը միայն այդ չեր ասում և յերբեք
մեկից մեկ չեյին խոսում, յեթե մեկը հարցներ նրանց
Ծիրանի տափի մասին: Վրա եյին տալիս, իրար հրմըշտ-
կում, ամեն մեկն աշխատում եր առաջ ընկնել և չինով-
նիկին պատմել իր մտքինը, իր լսածը՝ հաստատելու,
վոր Ծիրանի տափը Մրոցինն ե: Շատերն այնքան եյին
հեռու գնում, այնպես եյին հորինում, վոր մոտին կանգ-
նած հարևանն ել չեր հավատում նրա ասածին, բայց
լուծում եր, մտքում ծիծաղում, գլխով անում, վոր չինով-
նիկը հավատա նրա ասածին: Չե՞ վոր խոսքը Ծիրանի
տափի մասին եր, գետի ափին բուսած մացառների, գյու-
ղի սահմաններն ել ավելի լայնացնելու մասին:

Բայց վեճը, շատ խոսելը և բարձր կանչելը չեր վո-
րոշում: Չինովնիկի գնալուց հետո Մրոցում շուտով և
շատ ծածուկ իրար մեջ հավաքում եյին այն դումարը,
վորի մասին գիշերվա կերուխումի ժամանակ ակնաբ-
կել եր քաղաքից յեկած «մեծավորը» և ավելացրել.

— Չեր ոգտի համար եմ ասում, դուք գիտեք, մե-
նակ ինձ համար չեմ ուզում:

Չինովնիկը Միր ել եր գնում: Ներքևի գյուղն աշխա-
տում եր ավելի ճոխ ընդունել նրան, սրա-նրա տնից
հավաքում եյին հարմար իրեր, մի տնից մաքուր բարձ,
մյուսից՝ գյուղի միակ լավ կարպետը, տունը զարդա-
րում, հարսերի վրա բարկանում, վոր փոչի չանեն, ա-
պա սենյակը սարքելուց, խոնարհ գլուխ տալիս յեկվո-
րին, ներս տանում:

Վոմանք յեկողների ձիերն եյին տեղավորում, գա-

բի տալիս և խոնարհաբար, ռամկի խղճությամբ, ժըպտում մեծավորի պահակի առաջ, նրան ել լավություն տնում, մտածելով, վոր դուցե այդ ել ոգնի Ծիրանի տափի տնվերջ վեճին:

Այսպես շատ տարիներ յեկել են, գնացել, յերկու գյուղից ել շատ յուղ ու պանիր, գորգ ու կարպետ են տարել հաղար ու մի չինովնիկ և տարածի համեմատ ել հատկացրել Ծիրանի տափը՝ մերթ Միրին, մերթ Մրոցին, կռիվների աղբյուր ստեղծել, ամեն տարի մացառուտի կանաչ տերեւները բացվելու հետ յերկու գյուղումն ել թեժացրել զայրույթը Ծիրանի տափի համար...

Մինչև Խորհրդային որերը յեկան:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ինչո՞ւ ժամանակի իշխանության ներկայացուցիչները չեն լուծում Մրոցի և Միրի վեճը:
2. Խոչ գեր եյին խաղում այն ժամանակ պետական չինովնիկները:
3. Համեմատեցե՞լ են գյուղն այսօրվա մեր նոր գյուղի հետ և ցույց տվե՞ք տարբերությունը:

Ինչի՞նք—ինժեներ, ճարտարապետ.
Ռամիկ—հասարակ գյուղացի.
Թեժացնել—բորբոքել.

ՁՈՐԲԱՆ

Տունը գյուղի ծայրին ե, ճանապարհի կողքին: Յեթե գյուղը ման պաք, ել ուրիշ ներկած գարսպս չեք ճարի: Կապույտ ներկ միայն նրա հաստ ու ամուր դարսպսի վրա կա:

Յեւ յեթե բաց են դռները, վողոցից կարելի չե տեսնել բախն ու տան սրահը:

Բակում բացոթյա մի արհեստանոց կա: Մեծ ու փոքր մուրճեր, սղոցներ, պայտառի գործիքներ, անխլաների ողեր, սոնկներ, վոր չորանում են արելի տակ:

Ամեն օր մի քանի բանվոր ե աշխատեցնում: Մեկը ցեխապատ ե տնում, նոր գոմի պատերը շարում, մյուսը քար ե տաշում, իսկ ինքն ել իր վորդիների հետ լուսաբացից մինչև արեւմուտ աշխատում ե:

Իբրեւ չե, վոր գյուղում, յեթե մեկը լավ աշխատող ե, ասում են.

— Զորբա Ռսեփի ճանկն ընկնի, մի շարաթ ել չի դիմանա:

Վարձը կալին ե տալու ցորենով: Իսկ մինչ այդ, յեղածից բաժին ե հանում: Յեթե մի ծուռ դեբան իրեն պետք չի, տալիս ե արհեստավորին, տանի՝ խանգարված կտուրի գերանը փոխի: Կալին հաշվից դուրս ե գալու:

Բակի տնկյունում զինվորական մի խոհանոց կա՝ կաթսան ժանդոտած, խողովակը ծուռ:

Մորեխի տարին մի փութ կորեկով ե առել: Մտքում դրել ե կաթսան հարմարեցնել արաղ քաշելու, իսկ մնացած յերկաթեղենը ծախել:

Խոհանոցի մոտ ընկած ե յերկանիվ մի սայլ, կռիվներից մնացած: Կարգի յե բերել, ներկել և դործ ե ածում, յերբեմն ել քրեհով տալիս:

Տանը կից՝ պարտեզն ե, գյուղի ամենալավ պարտեզը, ծառերը շարեշար, դանադան տեսակի, պատվաստած: Միայն նրա այդում կան պատվաստած ծառեր:

Պարտեզի մոտ՝ բանջարանոցը, վորի մի անկյունում մեղունների տասներկու արկղ կա կարգով շարած:

Պարտեզն ու բանջարանոցը բարձր ցեխապատով ե պարսպած, փողոցից միայն ծառի վերին ճյուղերն են յերևում:

Յեթե մի չի վանդ մեղր ուղի կամ ձմեռը՝ թթու խոն-
ձոր, Ոսեփի ներկած դարպասն են ծեծելու:

— Ձկա, — կասի, — ի՞նչ եր, մի քանի խնձոր — կամ՝
ճանճը ես տարի ոգուտ չտվա՞մ, — և յեթե լավ գին տար,
— սպասիր տեսնեմ, — կասի և մառանը կիջնի:

Ընդարձակ քակն ընկած ե տան առաջ, վոր չորս
լուսավոր սենյակ ունի, փեղկերով, ապակած: Սենյակ-
ներում դորդ ու կարպետ կա, սպառերին խալի, յերկու
լավ մահճակալ, սպիտակ սղոճից ինքնայնո, ամսենեք
ու բաժակներ:

Ոսեփն առաջ խանութպան եր, գյուղումն եր առու-
ծախս անում:

Այն ժամանակից ե պահել և պատերազմի տարիներ-
ից՝ խալին ու սնդուկները լի՝ պինդ թագցրել մառանի
մի անկյունում:

Խաղաղության հետ ամեն տարի նրա տունը լցվում
ե, պահածը դուրս ե հանում և ավելացնում անընդհատ:

Գյուղում նրան «քոռ գայլ» են ասում: Յեղ յեթե
խոսքը վեր ե դալիս Ոսեփի վրա, մի ջահել վրա յե բե-
րում:

— Նրա ամբարում հլա ինչե՞ր կան...

Իսկ իրեն վոր նայես, բամփես՝ տղի պես գետնին
կկպչի, չղար՝ դարմանով պահած ձիու պես, այտու-
կըրները դուրս ընկած: Նայում ես դեմքին, ասես վորդը
կերած կարտոշկա լինի, աչքերը վորքրիկ, բոլով ծակած,
ունքերը կատարյալ բեխ, փափախի մազերից չի ջուկ-
վում:

Բայց զորքա յե: Չորս ձի ունի, սեփական դուրթան,
վոր նոր ե առել: Յեթե ուղենա, դուրթան մենակ լծելու
չափ յեզներ ունի... բայց մենակ չի լծում: Հարաքաշ
ե անում, յեղանց մի ջուխտն ել գոմում պահում:

Ձեռքից յեկածը չի խնայում: Ձեռքափող ե տալիս,
տոկոս առնում կամ գարնան սերմացու տալիս, կալին
մեկին յերկու տոսնում: Յեթե գյուղում մեկը վորոչում
ե մի վորչիար մորթել, միսը ծախելու և յեթե մենակ ու-

ժը չի պատում, Ոսեփը միշտ ընկերանում ե, աժան պա-
տահած վորչիարն առնում և մորթում:

Ականջին ե հասնում, վոր գյուղում մեկը ծախու
դերան ունի կամ քար ե ծախում, ույժ չունի նոր չենք
չինելու, Ոսեփն աչքերը ճաճպացնելով դալիս կանգնած
ե, գինը նաղդ ե տալիս:

Ինչպե՞ս ել գիտե հարեանի թույլ կողմը: Մի ուռի
տեսնի, կկանգնի, աչքի պոչով կնայի, մտքում կհաշ-
վի, թե քանի տախտակ դուրս կղա և ծառի տիրոջ տես-
նելիս կասի:

— Են մարադիս մի գերան ա պակաս, ծառդ ծա-
խիր՝ առնեմ:

Ծառը դեռ արմատի վրա Ոսեփի սեփականն ե, մի
տարի յել կմնա, յերկու տարի յել, վորչինչ, ավելի յե
հաստանում:

Հ Ա Ր Ց

1. Ի՞նչպես ե ձեռք բերել Ոսեփն իր հարստությունը:

Պայտառ — պայտ չինող.

Պարսպած — պատերով շրջապատած.

Հարաքաշ — ընկերովի.

ՆԻԳՅԱՐԸ

Իրիկնապահ եր:

Նեղ փողոցը յերկու կողմից հուլի պատերով յեզեր-
ված՝ գնում եր դեպի քաղաքի գետեղոր: Անձուղարձ
չկար: Միայն մի թուրք բոստանչի անխառն հասած եր
ավանակի վրա՝ կանաչի յեր տանում քաղաքի մեջ: Գե-
տեղից յերկու թրքուհիներ յեկան, մտան այդ փողոցը:

Նրանցից մինի յերեսը բաց եր, միայն շալը գլխին կապած, մյուսը չաղբայով եր, բայց մտնելով փողոցի ամայության մեջ՝ յերեսը բաց արեց:

Նիգյարն եր: Նա ուրախ քրքշալով ու կատակելով՝ դնում եր ընկերուհու հետ:

Նրանք մտան մի մեծ շինքի բարձրապարիստ բակը: Դիմացի վրձավոր շենքի ճակատը ցույց եր տալիս, վոր աշխատող ուղարկում կամ սպրեկ ե ինչվոր մեծատուն:

Նախկին խանի տունն եր այդ, այժմ՝ թուրք կանանց ակումբը:

Նիգյարն ու ընկերուհին մտան շենքի դռնից և բարձրացան վեր: Ճենադակած աղյուսները դուրսդուրս շերտերով աշխուժացնում եյին սանդուխքի առաստաղը:

Վերեն աղմուկ կար: Օհվ իրոք, յերբ ներս մտան նախասենյակ, տեսան թրքուհիների և պատանիների մի բազմություն, վոր լցրել եր սենյակներն ու սրահը:

— Ահա Նիգյարն ել յեկավ, — խոսեց ուրախ ձայնով մի աղջիկ, վորի կարճ կտրած մազերն ու բաց յերեսը չեյին թաղցնում սակայն, վոր նա թուրք կանանց խավար դասիցն ե:

— Հավաքույթն սկսվում ե, Զեյնա՛ր, — հարցրեց նրան Նիգյարի ընկերուհին:

— Այո՛, շուտով, շուտով, մնացին մի քանի հոգի: Գնացե՛ք սրահը:

Նիգյարն ու ընկերուհին մտան սրահը և տեղ գրավեցին նստարաններից մեկի վրա:

Սրահը դասարանի յեր նման: Բայց պատուհանների գունավոր տալիկներն ու առաստաղի սադաֆե և այլ քարերի գույնզգույն քանդակադարձերն ու վրձական խաղերը նրան հանդիսավոր տեսք եյին տալիս: Դիմացը բեմն եր, մի անկյունում՝ գրատախտակը: Մի զաշնամուր, մի գրոշակ, հայելիներ, պլակատներ, Լեռնինը, դիագրամներ — այս ամենն իրար կողքի՝ սրահին տալիս եյին տարորինակ աշխուժություն:

Նստարանները յերկշար եյին. մի շարքը բռնել եյին

կանայք ու աղջիկները, մյուսը՝ յերիտասարդներն ու մի յերկու հասակավոր տղամարդիկ:

Պուլ մուտոցը բռնել եր սրահն ու մյուս սենյակները: Ամենքն ուրախ եյին ու հանդիսավոր:

Նստարանների դիմաց սեղանի յետև նստած եյին թուրք կոմյերիտականներ, վերոնց մեջ և մի կոմյերիտուհի: Նրանք խորհրդակցում եյին:

Նստարանների կանանց շարքում շոտլանդացիներ: Հպարտ կեցվածքով աղջիկներ, սուսուկիւս, չաղբավոր ու չալ կապած կանայք՝ լրջություն եյին տալիս հավաքույթին: Տղամարդկանց շարքն ավելի աշխույժ եր: Այստեղ նստած պատանիները կատակում եյին, ծիծաղում և գողունի նայում կանանց կողմը:

— Ընկերներ՛ը, բոլորն ել յեկել են, սկսենք, — ասաց մի յերիտասարդ՝ նախասենյակից ներս մտնելով: Նա մոտեցավ նախադահլիսի սեղանին:

Նիգյարը ձգվեց և արմունկները հենելով սեղանին, աչքերը հռեց այն կողմը:

Կոմյերիտական լյուրոնն այդ ուրը հավաքույթ եր կազմակերպել՝ նոր թեկնածու անդամների ընդունման կարգը բացատրելու համար:

Զեկուցող կոմյերիտուհին բացատրեց կոմյերիտական նպատակներն ու ընդունման կարգը: Նա նշումն ձայնով և փաղաքող շեշտով համոզում եր դեն դեղ չաղբան, սովորել, մտնելով կոմյերիտական շարքերը՝ լուրջ պատրաստվել՝ թեկնածությունից իսկական անդամության անցնելու համար:

Նախադահլի կարգաց թեկնածուների ցուցակը, վորի մեջ կար նաև Նիգյարի անունը: Սա կարմրեց և դլուխը կախեց: Աննկատելի կերպով նա արդեն բացել եր գեմքը:

Նիգյարը յետ նայեց ընադարար:

Զարմանք, թե՞ սարսափ... յետևի նստարաններից մեկի յետևը նկատեց Ասադին, իր ամուսնուն, վոր գեղ-

նաճ, պղնձադեմ, արձանի պես անշարժ՝ դիտում եր սրահը:

Նա դեմքը չփնչփեց դեպի նախագահական սեղանը, բայց ել վռնեց չեր տեսնում: Գողի զգացումով նա սեղմեց Փաթմայի ձեռքը և աչքով արեց: Փաթման յետ նայեց և նկատելով Ասադին՝ փափսաց:

— Վոչինչ, մի բան կանենք, մի՛ շփոթվի:

— Լավ չեղավ, — շնչաց Նիզյարը, — ի՞նչ պետք եր եստեղ գալը...

— Հենց մի անգամ թող ամեն բան իմանա, վերջանա դնա, — ասաց Փաթման վճռական ձայնով:

Նիզյարը բնազդորեն յերեսը կիսով չափ ծածկեց ու կծկվեց: Իր անելիք քայլերը — չադրան գցելը և կոմսոմոլ մտնելը, վոր հեռվից, Ասադի բացակայությանը, նրան հեշտ եյին թվում, այս բոպեյիս բարձր ժայռի պես կանգնեցին նրա առջև՝ իբրև մի անմաղցելի ճանապարհ:

Թե ինչ եր կատարվում շուրջը, չեր լսում: Նա միայն զգում եր իր սրտի բաբախոցը:

Ծափահարության տարափը դեռ չկտրված՝ նախագահը կարդաց հանկարծ Նիզյարի անունը: Փաթման բրդեց նրա կողը, վոր վեր կենա: Նիզյարը կարկամեց, ավելի կծկվեց ու մնաց նույն դիրքում:

— Հը՛, ի՞նչ չեղավ, — հարցրեց նախագահը, — ամաչո՞ւմ ե:

Բոլորը ծիծաղեցին, և ծափահարությունը սաստկացավ:

— Ասե՛ք վեր կենա: Ընկե՛ր Բայրամ կղի, վե՛ր կացե՛ք, մի՛ քաշվեք, — ձայն տվին դեռից դենից:

Նիզյարը լաց եր յինում:

— Ե՛, չեղավ, եղպես կոմսոմոլ չի լինի: Լա՛վ մտածեցե՛ք ձեր անելիքի վրա, — հանդիմանեց նախագահը և ներողամիտ ժպտաց ու սպասեց հետևանքին:

— Դե վեր կաց, ամսթ ե: Մի՛ վախի, վեր կաց, — ասաց Փաթման: Նիզյարը աչքերը սրբեց և վեր կացավ:

Փաթման ձեռը գցեց նրա չադրին, վոր բանա, բայց նախագահն արգելեց:

— Վո՛չ, մի՛ գոռեք, ի՛նքը թող բանա՝ թե ուզում ե:

Նիզյարը դեն գցեց չադրան և յերեսը բացեց: Ծափահարությունների տարափը սաստկացավ կարկտի պես և խլացրեց Նիզյարի հոգեկան խռովքը:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Պատմվածքի վո՞ր տողերումն և հեղինակը թուրք կնոջ կենցաղի մեջ մտած փոփոխությունները նկարագրում:

2. Ինչո՞ւ յեր քաշվում Նիզյարն իր ամուսնու ներկայությունից:

Քանդակարդիկ — քանդակներով զարդարել:

Կեցվածք — դիրք:

Բայրամ — կղի — Բայրամի աղջիկ:

Անմաղցելի — բարձրանալու համար անհնարին:

ՄԱՅԻՍԱԿԱՆ

Մեր աշխարհում — մայիս ու չող,
մեր աշխարհում — յեռանդ ու յեռք,
արևափայլ յերանդ ու յերգ
մեր աշխարհում — մայիս ու չող:

Նոր դարերին պատգամ հուշող
միլիոն հույզեր, մկան ու ձեռք:
մեր աշխարհում — մայիս ու չող,
մեր աշխարհում յեռանդ ու յեռք:

Հեռվում դեռ կան այնքան վայրեր,
ուր մայրին ե արյուն, վառող,
աղատ կյանքի այնպես կարոտ—
Հեռվում դեռ կան այնքան վայրեր,
ուր կան մարդիկ, վորդիք, մայրեր՝
արեւագուրկ, ցասկոտ, աջոտ.
Հեռվում դեռ կան այնքան վայրեր,
ուր մայրին ե արյուն, վառող...

Մենք քայլում ենք խիտ շարքերով,
մենք ու նրանք՝ դեպի գալիք—
մորսկա շաչող հսկա ալիք—
մենք քայլում ենք խիտ շարքերով:
Աշխատանքի զիւ գարկերով
մենք կփռենք լույս ու բարիք.
մենք քայլում ենք խիտ շարքերով,
մենք ու նրանք՝ դեպի գալիք...

Քանիսը դեռ կրնկնեն գետին
այս պայքարումը վճռական.
մինչ հաղթանակը վերջնական—
քանիսը դեռ կրնկնեն գետին:
Յեւ կուղեկցեն մեր մեծ յերթին
դեռ քրքիջները շնական.
քանիսը դեռ կրնկնեն գետին
այս պայքարումը վճռական...

Կտատանվեն ճամբի կեսին
շարքումը մեր քանիսը դեռ,
քանի վախկոտ ու մեղկ սրտեր
կտատանվեն ճամբի կեսին:
Յեւ կերպակն սրերը սին
ու կրփուն քանի ստեր.
կտատանվեն ճամբի կեսին
շարքումը մեր քանիսը դեռ...

Հաղթանակովը վերջնական
մենք կջնջենք ցավ ու դավեր,
կխորտակենք խարխուլ նավեր—
Հաղթանակովը վերջնական:
Յերթումը մեր մեծ, վճռական—
մենք կփռենք կյանք ու ավեր.
Հաղթանակովը վերջնական
մենք կջնջենք ցավ ու դավեր...

Ցասկոտ-բարեացկոտ, դայրույթով լի.
Յերանդ—դույն.
Դավ—խարդախություն, դավաճանություն.
Խարխուլ—կիսաքանդ.

ԼԵՆԻՆ

(Հատված)

1.

Հիմի, աշխարհի ամեն մի մասում,
չրջում ե նա մի՛շտ ու մի՛շտ,
այնտեղ, ուր մարդու քրտինքն ե հոսում,
ուր վոր գրկանք կա ու վիշտ:

Հիմի, այս ժամին Ռուրում, Մադրիդում
և կամ Պարիզում, այլուր—
հզորահզոր զորանցքն ե դիտում
ուղղմադղերի հարյուր:

Մտանում նա շարքերին շաչող,
շարքերին խոժոռ, անոթի,
վողջույն ե տալիս մտերիմ կանչով,
վոնց վոր հնամյա ծանոթի:

Յեւ շնորհում ե նրանց ականջին
խոսքեր վառ՝ լուսե գալիքի,
ու ձայնակցում են նրա գոռ կանչին՝
չարքերը հուզվող ալիքի...

2

Մեր վառ աշխարհի ամեն մի մասում
չըջում ե նա մի՛շտ ու մի՛շտ,
ու հազար—հազար մանկիկներ հառուն
այժմս խլրտում են անվիշտ:

Պիոներական գնդերն են հուզված,
թմբուկն ե թափով թնդում.
Իլլիչը հիմի շարքերին ձուլված—
յերգում ե, հուզվում, խնդում:

Յեւ փոքրի՛կ—փոքրի՛կ հոկտեմբերիկներ—
դեռ թոթով, թիթեռ, անո՛ւժ.
Լենին պապիկը ժպտում ե հեաներ
ու շոյում նրանց անո՛ւշ:

Դու թուխ ու թոթով թմբիլիկ թմբկահար,
թող թմբուկդ թունդ թնդա՛,
Իլլիչի հետք թող սավետական
մեր շայն աշխարհը խնդա...

ՁԱԼԱՆԿԸ

Շատ բան կարելի չե պատմել շների մասին, բայց
այն, ինչ ուզում եմ պատմել— վերաբերում ե առայժմ
մեր շանը, վորը վաղուց արդեն չկա:

Մեր Ձալանկը մի ան, բրդոտ շուն էր, կուրծքն ու
վիզը ճերմակ, վոր հեռվից թվում էր սպիտակ վզկապ:
Փոքրուց նրա ականջներն ու պոչը կտրել էյին, այդ
պատճառով ամառը սաստիկ տանջվում էր ճանճերի ձե-
ռից. հողը փոս էր անում—մեջը պառկում, կամ ժամե-
րով մտնում էր թփերի ու լոբիների մեջ, և դուրս էր գա-
լիս այն ժամանակ միայն, յերբ անծանոթ վտանաձայն
էր լսում բախում կամ անցնող շան հոտ էր առնում: Ձա-
մանալի չէր սիրում մուրացկաններին. կարծես վոխերիմ
թշնամի լիներ: Հարձակվում, հաչում էր սարսափելի
յեռանդով, կատաղությամբ ու աշխատում ամեն կերպ
միասել նրանց: Բայց, դրա փոխարեն, անտարբեր էր
դեպի լավ հագնված մարդիկ... Հաչում էր նրանց վրա
այնչափ, վոր իմացնի, թե մարդ ե գալիս... Իսկ քյոխ-
վի կամ գոլթի վրա իսկի չէր ել հաչում. մի յերկու բե-
րան «հաֆ» էր անում կլանչելու պես ու մոռոցով քաշ-
վում մի կողմ: Վախենում էր...

Յես այն ժամանակ չեյի հասկանում դրա պատճա-
ռը, բայց հիմա մտածում եմ, վոր Ձալանկը, յերեւի ըն-
դորինակում էր մեզ. ի՛նչ վերաբերմունք մենք ունեյինք
դեպի մարդիկ, նույնն ուներ և նա: Մենք մուրացկան-
ներին չեյինք սիրում, չէր սիրում և նա. քյոխվից և դըզ-
րից վախենում էյինք—վախենում էր և Ձալանկը...

Դրան հակառակ—մենք սիրում էյինք մեր տավարին
—սիրում էր և նա... Յեթե պատահեր, որինակ, մեր
յեղներն առանց հսկողի մնային դաշտում, Ձալանկը
կմնար նրանց մոտ, նույնիսկ առավոտից մինչև յերեկո
կհսկեր քաղցած, և յերեկոյան միայն, յերբ յեզները
գային տուն—նա ել հեաները կգար...

Կամ, որինակ, մայրս հավերին կուտ էր տալիս:
պատահում էր, վոր հավերի մեջ լինում էյին հարեանի
հավեր: Մայրս՝ «ոտա՛ր, ոտա՛ր» ասելով՝ քշում էր
դրանց, վոր մերձեց կուտը չխլին... Ձալանկը, վոր լավ
ճանաչում էր մեր հավերին, յերբեմն՝ յերբ մայրս չէր
նկատում ոտար հավերին—ինքը ցատկում էր կուտ ու-

սող համբերի մեջ և «ոտարներին» քչում, — ընկնում եր նախ մեկի յետևից, ու թրթռացնելով հալածում նրան այս ու այն կողմ. հանգստանում եր միայն, յերբ նրան թոցնում եր ցանկապատի մյուս կողմը. Հետո գալիս եր մյուսներին...

Ձմեռը հայրս Չալանկին կապում եր մեր գոմի դռան առաջ, ուր հայրս յերեկոները խոտ եր դնում նրա համար, վոր տեղը փափուկ ու սաք լինի: Հայրս Չալանկին գոմի դռանը կապում եր նրա համար, վոր դող գալու դեպքում իմացնի, վորովհետև դոմը գտնվում եր մեր տնից բաժական հեռու: Յեթե պատահեր, դուռը կտորեցին և ամբողջ տաժարը տանեցին — չեցինք իմանալ:

— Քնածն ու մեռածը մին ա, — ասում եր հայրս և միշտ զգուշացնում, վոր յեթե ինքը, պատահեց, տանը չեղավ, մենք չմոռանանք Չալանկին կապել գոմի չարդախում:

Յեվ, պետք է ասած, Չալանկի պատճառով թե նրա աչից, մեր գոմից բան չեր գողացվում: Հայրս հավատացած եր, վոր մի բան պատահելիս, Չալանկը հաչոցով կիմացներ: Իսկ Չալանկը յերբեք սուտ չեր հաչում... Իսկ արդեն հայտնի եր:

Ու ահա ձմռան մի գիշեր, յերբ մեր տանը բոլորս խոր քնած էինք, — հանկարծ դարթեցինք ինչ-վոր տարորինակ ձայներից: Մեկը գիպչում եր մեր դռանը, չանգոռում այն և ինչ-վոր, մրմռոցի նման, ձայներ հանում:

Ամենից առաջ դարթեցինք յես ու մայրս: Հայրս, սովորաբար, խոր եր քնում. մինչև չհրեցիր — չեր դարթնի: Մի քանի անգամ ահանջ դնելով այդ տարորինակ ձայներին, մայրս դարթեցրեց հորս:

— Տես մի են ինչ է, վոր դուռը չանգոռում է, — ասաց մայրս:

Այդ բոպեցին դռան չանգոռոցը կրկնվեց. նորից մեկը գիպավ դռանը և լսից զսպված կլանչոց:

— Շուն ա՞, — հարցրեց հայրս տարախուսած, ան-

կողնում նստելով: Ապա վեր-կացավ, արխալուխը քցեց ուսերին ու զնաց դեպի դուռը:

Բայց մայրս չթողեց դուռը բանալ:

— Կատաղած շուն կըլի, աման, բաց մի՛ անի:

Հայրս նայեց լուսամուտից, բայց բան չնկատելով, լուսամուտի մի փեղկը բաց արավ ու գլուխը դուրս հանեց:

— Դե կո՛րի, — պոռաց նա և, հետ դառնալով, ասաց. — Մեր շունն ա կապը կտրել ա...

— Բա ին՞ ա դուռը չանգոռում, — ասաց մայրս: Չլինի սոված ա:

— Ձե՛, հենց իրեկունը, գոմը փակելուց հետո յեմ հաց տվել, — պատասխանեց հայրս: — Ո՛վ գիտի, գիլի հոտ ա առել, վախից կապը կտրել, դեռն ա յեկել...

Ու հայրս, ուսերին քցած արխալուխը մի կողմ դնելով, ուղում եր կրկին անկողին մտնել, յերբ շունը, վոր լուել եր, նորից գիպավ դռանն ու կլանչեց:

— Ձե՛: Սա, իսկ վոր գիլի հոտ ա առել, — կրկնեց հայրս: — Վախից կլանչում ա...

Ու նորից բարկացավ վրան:

— Դե կորի՛, անպետք...

Չալանկն ընդհատեց կլանչոցը, բայց դարձյալ դուռն ուղղ գիպավ:

— Քեզ պես հաղարն ըլի, ես ցրտին դուրս չեմ գա, — ասաց հայրս ու մտավ անկողին:

Շունը, դռան յետևից, կարծես զգաց այդ բանը, և ավելի անհանգստացավ. սկսեց դարձյալ կլանչել և թաթը դռանը քսել...

Կլանչում եր, թաթը քսում դռանն ու մի առժամ լռում, սպասում: Տեսնելով՝ ձայն չենք տալիս — չարու-նակում եր չանգոռոցն ու կլանչը:

Յերբ շատ կրկնեց այդ, հայրս ել չհամբերեց, վեր կացավ բարկացած և, առանց վորեւե բան քցելու ուսե-

րին, դուռը բաց արավ, դռան յետնը դրված ձեռնամուխ-
տը վերցրեց ու... շանը.

— Ա՛յ քեզ, քոսոտ անտեր...

Շունը կլանչելով փախավ:

Հայրս նորից տուն յեկավ, դուռը փակեց և մտավ
անկողին:

— Կատաղեալ, չի թողնում մարդ քնի,— ասաց
բարկացած:

Բայց հազիվ անկողին եր մտել— շունը դարձյալ յե-
կավ, դարձյալ դռնովը դիպավ ու կլանչեց: Հայրս ու-
ղում եր ելի բարկանալ, բայց այս անգամ մայրս խոր-
հուրդ տվեց վերկենալ տեսնել ինչ է պատահել:

— Ես շունն իսկի եսպես չի արել: Զլինի՞ր գոմը գո-
ղա մտել,— կասկած հայտնեց նա:

— Յես կարծում եմ դեյա տեսել, դրանից է փախ-
չում,— ասաց հայրս, դժգոհ վեր կենալով ու հագնվե-
լով:— Յեթե գող ըլեր՝ կհաչեր: Շունը մենակ գել տես-
նելիս չի հաչում:

— Դե վոր եղպես ա, թվանք վերցրու,— խորհուրդ
տվեց մայրս անհանդստացած:— Սոված գելեր կլինեն,
կվնասեն...

Հայրս ալդպես ել արավ. հագնվելուց հետո՝ վերց-
րեց տան անկյունում կախված մեր հին թափանչան ու
սկսեց վառող լցնել:

— Դու ել վե՛ր կաց, այ վորդի,— ասաց մայրս:

— Վեր կաց, ճրագը վառի, հորդ հետ գնա: Գելերը
ճրագի լուսից վախենում են...

Ասաց ու ինքն ել վեր կացավ:

Յեվ մինչ հայրս հրադանը կլցներ— յես հագնվեցի
արագ, դայլ տեսնելու ցանկությամբ տարված: Շատ ելի
լսել գայլերի մասին, բայց չեյի տեսել... Ճրագը գտա-
վառեցի և հորս հետ դուռս յեկա:

Դուռը բաց արինք թե չե— Զալանկը, կապի կտորը
վզին, դիպավ հորս փոտքերին, կլանչեց ու պռաջ վազեց:
Բայց հայրս կանգ առավ չուրջը նայելու: Յես

նույնպես նայեցի. դայլ չի՞ր յերևում արդյոք... Ցուրտ
եր. ձյուն... Գետինը, տանիքները, պատերը, ծառերը
— ամեն ինչ— ծածկված եր ձյունով... Թեև անլուսին գի-
շեր եր, սպիտակի վրա ամեն ինչ յերևում եր պարզ, բայց
դայլ չկար... այսինքն չկային զուգը ճրագի պես վառվող
աչքեր, ինչպես պատմել եր մայրս:

«Յերեւի գոմի մոտ ե», մտածեցի:

Շունը, վոր առաջ եր գնացել, նկատելով հորս ու իմ
կանգ առնելը, յետ դարձավ իսկույն, կլանչեց ու կրկին
առաջ ընկավ, շուտ շուտ յետ՝ հորս յերեսին նայելով:
ուզում եր կարծես հասկացնել, վոր հետեւենք իրեն:

Հայրս, հրացանը պատրաստ բռնած, ելի հորս կող-
մին աչք ածելով, յես ել նրա հետ, քայլ առ քայլ գնա-
ցինք շան յետևից:

Զալանկը վազում—գնում եր մինչև գոմի դուռը,
այնտեղից վազում գալիս հորս մոտ, կլանչում և դար-
ձյալ գնում դեպի գոմը:

Այս բանը կրկնեց մի քանի անգամ, և հայրս այլևս
առանց շուրջը նայելու, շտապեց դեպի գոմը:

— Եստեղ ինչ վոր բան կա,— ասաց նա ու քայլերն
արագացրեց:

Յես, ճրագը ձեռիս, հետեւեցի նրան:

Զալանկը, գոմի դռան առջև կանգնելով, սկսեց
կլանչել ու անհանգիստ շարժումներ անել:

Հայրս անմիջապես բացեց գոմի դուռը, և յերբ
մտանք ներս ու յես ճրագով լուսավորեցի գոմը—մեր
աչքին պարզվեց հետեյալ տեսարանը:

Մեր մեծ կովը ծնել եր. հորթն աղբի մեջ ընկած՝
մզգում եր և ուզում բարձրանալ: Բայց չեր կարողանում:
Իսկ մայրը բառաչելով՝ անհանգիստ շուտ եր գալիս յեր-
կու կողմի վրա, կապը ձիգ տալիս՝ դուռնչը հորթին հասց-
նելու... Ու չեր կարողանում:

— Հայրս իսկույն վերցրեց հորթը՝ մաքրեց. աղ
արավ ու դրավ մոր առաջ... Յեվ մինչ հայրս հորթը
մաքրում, աղ եր անում, Զալանկը, ուրախ կլանչելով:

Թաչկոտում եր դես ու դեն: Հետո, յերբ հայրս հորթը
դրեց մօր առաջ, Չալանկը նստեց և դունչը թաթերին
դրած՝ սկսեց բարի աչքերով նայել կովին ու հորթին,
վարժ դարձյալ, ժամանակ առ ժամանակ, մզողում եր
թույլ ձայնով և փորձում վեր կենալ, կանգնել թույլ
վտակների վրա... Այդ տեսնելով՝ Չալանկն ուրախություն
նից կլանչ-կլանչում եր և կտրած պոչը շարժում:

— Այ կեցցես, Չալանկ, — ասում եր հայրս նրա
գլուխը շոյելով: — Յես քեզ գուր տեղը ծեծեցի:

Պարզվեց, այսպիսով, վոր Չալանկը դրսից լսելով
գոմում կատարվող անհանգստությունը — կապը կտրել
եր յեկել մեզ իմացնելու:

Այդ որվանից մենք սկսեցինք սիրել Չալանկին ա-
ռանձին սիրով: Յեվ յերբ պատահում եր, վոր նա հա-
չում, կլանչում եր դուրսը — միշտ ուշադիր ելինք նրա
ձայնին: Գիտեյինք, վոր Չալանկը սուտ չի հաչի: — Շու-
նքն իմաստուն կենդանի ա, — ասում եր հայրս այդ դեպ-
քից հետո: — Շանն ախպոր պես պաի սիրել...

Հ Ա Ր Յ

1. Ի՞նչ պատմություններ գիտեք չների և մյուս կենդանի-
ների մասին:

ԶԱՆԳՎԻ ՅԵՐԳԸ

Իր հին յերգով,
նույն յեղերքով,
ջրի, ժայռի
զվարթ զանգով
փոխրվում ե—
հոգնած Զանգուն:

Դիչերն անքուն
իր հոսանքում,
ցերեկը գոլ,
փոխրվում ե—
այն հին Զանգուն:

Շուրջը նրա—
ժայռ ու քարափ,
դեմը նրա—
արտեր պարապ:

Արտերին ջուր,
արտերին ճոխ
կյանքի խնձույք,
ու խրինջուն
Զանգվին՝ նոր յերթ,
Զանգվին՝ նոր յերգ,—
լուսակոհակ
արտ ու ափեր,
լուսարձակման
զվարթ ծափեր:
— Զանգվին՝ նոր յերթ,
— Զանգվին՝ նոր յերգ:

Գոլ—առջ.

Լուսակոհակ—լույսով փոփոխված ալիք.

ՊՂՆՁԻ ՀԱՄԱՐ

1.

Յերեկոյան, վերջին պայթեցումից հետո, յերկրա-
բան Սեյանը հալսատիացրեց, վոր արդեն պղնձաքարի
չրջանն են թևակոխում: Փեշերի ծայրերն յերեվացին,—

Թուղիտում եր դես ու դեն: Հետո, յերբ հայրս հորթը
դրեց մոր առաջ, Չալանկը նստեց և դուռնը թաթերին
դրած՝ սկսեց բարի աչքերով նայել կովին ու հորթին,
վորը դարձյալ, ժամանակ առ ժամանակ, մզողում եր
թույլ ձայնով և փորձում վեր կենալ, կանգնել թույլ
փոտերի վրա... Այդ տեսնելով՝ Չալանկն ուրախություն
նրից կլանչ-կլանչում եր և կտրած պոչը շարժում:

— Այ կեցցե՛ս, Չալանկ,—ասում եր հայրս նրա
գլուխը շոյելով:—Յես քեզ զուր տեղը ծեծեցի:

Պարզվեց, այսպիսով, վոր Չալանկը դրսից լսելով
գոմում կատարվող անհանգստությունը—կապը կտրել
եր յեկել մեզ իմացնելու:

Այդ որվանից մենք սկսեցինք սիրել Չալանկին ա-
ռանձին սիրով: Յեվ յերբ պատահում եր, վոր նա հա-
չում, կլանչում եր դուրսը—միշտ ուշադիր ելինք նրա
ձայնին: Գիտեյինք, վոր Չալանկը սուտ չի հաչի:—Շու-
նրն իմաստուն կենդանի ա,—ասում եր հայրս այդ դեպ-
քից հետո:—Շանն ախպոր պես պաի սիրել...

Հ Ա Ր Յ

1. Ի՞նչ պատմություններ գիտեք չների և մյուս կենդանի-
ների մասին:

ԶԱՆԳՎԻ ՅԵՐԳԸ

Իր հին յերգով,
նույն յեղերքով,
ջրի, ժայռի
զվարթ զանգով
փոլորվում ե—
հոգնած Զանգուն:

Գիշերն անքուն
իր հոսանքում,
ցերեկը գոլ,
փոլորվում ե—
այն հին Զանգուն:

Շուրջը նրա—
ժայռ ու քարափ,
դեմը նրա—
արտեր պարսպ:

Արտերին ջուր,
արտերին ճոխ
կյանքի խնձույք,
ու խրխնջուն
Զանգվին՝ նոր յերթ,
Զանգվին՝ նոր յերգ,—
լուսակոհակ
արտ ու ափեր,
լուսարձակման
զվարթ ծափեր:
— Զանգվին՝ նոր յերթ,
— Զանգվին՝ նոր յերգ:

Գոլ—առջ.

Լուսակոհակ—լույսով փողողված ալիք.

ՊՂՆՁԻ ՀԱՄԱՐ

1.

Յերեկոյան, վերջին պայթեցումից հետո, յերկրա-
բան Սևյանը հալածատիացրեց, վոր արդեն պղնձաքարի
չրջանն են թևակոխում: Փեշերի ծայրերն յերևվացին,—

ասաց նա, — դե՛հ, ձեզ տեսնեմ, տղե՛րք, մնացածը ձեզ եմ թողնում:

«Փեշերի» յերևալը տեղի ունեցավ և հուղմունքով լեցրեց Ռահիմին: Նա չեր իմանում, թե վո՞ր ուրը, վո՞ր ժամին պիտի հասնեյին բուն մարմնին: Յե՞րբ եր լինելու վերջին հաղթանակը:

«Փեշերի» յերևալը տեղի ունեցավ մոտավորապես յերեկոյան ժամի 10-ին: Ռահիմը հաստատապես վճռեց հանքից դուրս չգալ՝ մինչև յերրորդ լայնացման դոնայի իսկական բացումը: Բոլոր կոմյերիտականները ծակիչներով քվեարկեցին Ռահիմի վորոշման ոգտին:

— Ի՞նչ կարող եմ ասել, — կատակում եր Միշա Շկուրովը, — այս չախտերում մենք պղինձ ենք փնտռում, սակայն վոսկի՛լ յենք գտել: Ահա՛, Ռահիմ Զալատո՛յը, յերբ նա ասում ե մնանք, ուրեմն պիտի մնանք: Չե՞ վոր վոսկին ավելի թանկագին մետաղ ե, քան պղինձը: Չե՞, վոր Ռահիմ Զալատոյը մեզ համար ավելի քաղցր ե ու սիրելի, քան թե քոնն ու հանգիստը: Գալի՛ս ե, Ռահիմ, մնում ենք... Այս գիշերը վերջին գիշերն ե... մե՛կ, յերկո՛ւ և պատրա՛ստ ե:

Նրանց կապույտ ձեռները սրտագին համերաշխու թյամբ իրար բաղխվեցին:

21

Յերբ բոլոր կողմերից ժայռերն արդեն ծակոտված եյին, դրվեցին դինամիտները:

— Մի՛շկա, յես ասում եմ՝ այս վերջին դինամիտներն են լինելու... — ասաց Ռահիմը, — ել չենք ծակի փնտռելու համար, այլ կծակենք շահագործման համար:

Մինչ նրանք խոսում եյին, դինամիտներն սկսեցին դղրդալ: Ընդերքը ցնցվեց: Կարբիդի լապտերները մարեցին: Հազիվ պայթեց վերջին դինամիտը, յերբ Ռահիմն իսկույն վառեց իր լապտերը և դեպի փլված ժայռը սլացավ:

— Իմ ձեռքերո՛վ պետք ե բռնեմ առաջին կոշտերը, Մի՛շկա, իմ ձեռքերո՛վ:

Շնչափառ նա հասավ պայթեցված վայրը, լապտերը կախեց մի ժայռից և կռացավ հանքաքարի շեղջի վրա:

Յերրորդ լայնացման դոնան դանված եր...

Ընդերք—դեռնի խորքերը.

Շեղջ—կույտ.

ՍԵՎԱՆԻ ՏՈՒՆԸ

(Հատված «Ռուշանի Քարափից»)

Կեսր հողում, կես հարկանի,
մի կոնածե յերգիկ ուսին,
թոնրի վրա հնոց քուրսին—
եսպես ե տունը Սևանի:
Սակայն յեթե մի քիչ մնա,
ու աչքերիդ դեմ լուսանա,—
դու կտեսնես հին քուրսու քով
Հայամուտից գնած վարկով
մի գեղեցիկ դրասեղան՝
մոմաշորե սիրոց վրան:
Հետո Լենին յերկու հատոր,
վիեննական մի թիկնաթու:
Մի քիչ այն կողմ մրոտ պատին
հին հիշատակ մի պլակատի:
Հետո կրկին և՛ պլակատներ,
և նկարներ մեծ դեմքերի,
վոր պոկվեց են, նորից փակցվել,
վոր գեղնել են ու գունատվել
հնադարյան թոնրի մրեց:

Ու խայտաբղետ սլափատներէց
վար, անկյունում, պատի տակին
կճուճներ կան հաղարամյա,
տարրեր ձևի ու հասակի:
Յեւ նրանց մոտ, վորպէս տեսիլ
դեռ չհայտնված մի թշնամու,
վորպէս ոտար քաղաքացի,
պըտընել է մի պրիմուս:
Թիկն են տվել գոմի դռան
յերկու սաճեն տաշած քարի:
Ու հացենու տասը գերան՝
դնված ելի Հայաստանից:
Այդ—Գարսեանն անցյալ տարի
ցանկանում էր շինել նոր տուն,
դուրս դալ խավար դետնափորից
ապրել առողջ, մաքուր ոգում:
Սակայն, յերբ վոր մեջ անդ յեկավ
կոյիսդաղման հարցը գյուղի,
նա թողեց տունը սեփական,
և բնորեց ուրիշ ուղի:
Վո՛չ թե չինել փոքրիկ մի հյուղ
խառնափնթոր կույտերում այն,
այլ կոտուցել կոյեկտիվ գյուղ
սլափափոր, լուսավոր, լայն:

Խայտաբղետ—դանաղանաղույն, գունաղեղ.
Հյուղ—հողի խրճիթ.

ՎԵՃ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Հատված «Ռուշանի քարափից»)

Լցվում է հողան ծխով, աղմուկով
ու նավթի լամպի մշուշով դեղին:

Կոյեկտիվ մասն Մաղաքանց Մուքն
համոզում է դեռ քաղար Մուշեղին,
վոր սա իր եչի ընթացքը չեղի,
մանի կոյեկտիվ, միասին գնան,
դառնան որինակ ընդհանուր գեղին,
այլ վոչ թե վերջում ամոթով մնան:
Մուշեղը փափկում, կակղում է կարծես.
— Չգրվենք, Լաչին, հա՞... ընկեր Հովա...
Լաչինը գլուխը ձեռներին բարձել,
դեռ միտք է անում լուռ ու վրդովված.
և կոյեկտիվի բերքը հաղթական
դարձել է հուշված մտքերի սունին.
— Ախպեր, ցանեցին, լավ եղ ստացան,
եյ սրանց թոփի գյուլա չի բռնի:
— Հայրաթ կստանանք,—պարծեցավ Վաստի,—
ցանեցինք դրած, արինք չարքացան,
վախտին, դիտուլթյամբ, գյուղատնտեսով.
չըջան ել տվեց յերկաթե դուխան,
խակ յեկող տարի տրակտոր կտան:
— Նդպես վոր անի, մամս ել կցանի,—
ասավ հեգնությամբ Թորոյենց Գարոն:
Գործերը թողած ամբողջ դարնանից
բջիջ, կոմսոմոլ, գյուղխորհուրդ ու վոկ
հենց կոյեկտիվի չվանն են մանում:
— Բաս ել ո՞ւմ չվան պիտի մանեյին:
Պարզ է, մեղ համար: Նո՞ր ես իմանում:
Չեյին ոգնելու հո կուլակներին:
Ու սիրտ է տալիս Մուքն բոլորին,—
— Յեկ, ուստա քարհատ, քաղար—Անաստաս,
մեր պետությունը մեղ չի մոլորի,
այլ ցույց է տալիս հաստատ ճանապարհ:

Հ Ա Ր Ց

1. Իմացե՛ք, այդ բանաստեղծության մեջ ովքե՞ր կոյեկտի
կողմնակիցներն են, ովքե՞ր թշնամիները:

1

Իմ յերկրի լեռներում առատ ե արեգակի լույսը, և լեռների լանջին տապ ե լինում յուրաքանչյուր ցերեկ: Այնտեղ դեղնագույն արտերի հատ ու կտոր չեքտեքն են փռված անկանոն շարքերով. իսկ վերևում, դեպի սարի գագաթը, դեռ չի հասել վոչ մի փայտե դուխան: Այնտեղ քարքարոտ հողը պղնձագույն ե և կարմրին ե տալիս հեռվից: Մի կողմում մի ճեղքվածք, մյուս կողմում՝ անկանոն սարի սապատը. և այդ ամենը պղնձագույն: Յե՛վ այդ ամենի վրա իր լույսն ու տապն ե հորդում արևը, իմ յերկրի հուրհրան արևը:

Ներքևում, ուր այլևս գառնվալը չկա, և հարթ դաշտավայրն ե փռվում, ներքևում՝ ուղիներ են անցնում գալարապտույտ, ուղիներ են անցնում մանեման. իսկ այդ ուղիներով սայլերն են անցնում՝ կմախքի նման ցրցուն կողափայտերով: Անիվների մազուխը վերջացել ե, և անիվները ճռում են ինչ վոր հնորյա յերգ՝ յերևար ճանապարհի և դանդաղ յեղասայլի մասին: Գլորվող անիվների ձգած ստվերները ծածկում են յեղների վտանահետքերը և իրենց յետևից թողնում են փխրուն հեռք՝ ճանապարհի դեղին հողի վրա: Դեղին ե ճանապարհի փռչին, դեղին են ոգոստոսյան արտերը, դեղին են յեղները, վոր չծված են այդ հնամյա սայլին:

...Յե՛վ դեղին ե արևը, հուրհրան արևը...

2

Աթոն արևը շատ եր սիրում. նույնիսկ այն ժամանակ, յերբ վեգ խաղալ ել չգիտեր, նա սիրում եր արևը: Յերբ իրենց ախոռից միակ կոփն ու յերկու յեղները տանում եր դուրս՝ խառնելու հանդ պնացող նախրի հետ, նա արևին եր նայում ու ժպտում եր: Ժպտում եր ծագող արևին:

Յերբ վերադառնում եր տուն հաց ուտելու, նա սիրուն արևի մասին եր մտածում: Գիշեր պատահում, վոր նա տանը հաց ուտեր: Վերցնում եր նանի թխած բոբուններից մեկը և կրծելով դուրս եր դնում տանից:

Հասնելով կալերին՝ Աթոն ներս եր վազում, ընկերներին գտնելու համար: Յե՛վ յերբ գտնում եր նրանց, նրանք գնում եյին դեղերից մեկի չվաքում խաղ անելու, կամ գնում եյին կալերից դուրս՝ ճանապարհի, լայն ճանապարհի վրա վաղ տալու համար: Յե՛վ ով ամենից առաջ հաններ քարե կամուրջին, նա կլինեք այդ որվա բոլոր խաղերի առաջնորդը:

Հորիզոնի մի անկյունից դուրս եր գալիս ամպի մի փոքրիկ պատառ: Հետո նա մեծանում եր ու իր մի ծայրով ծածկում եր արևը: Չարմացած Աթոն վեր եր նայում դեպի յերկինքը, ու կանչում եր արևին, դասադրել մեջ սովորած վառանավորով.

Արև', արև', յե՛կ-յե՛կ, գիղի քարին վե՛ր յեկ...

Հաճախ արևը վոչ գալիս եր, վոչ ել գիղի քարին եր վեր գալիս: Սկսվում եր անձրևը: Չարահատված՝ Աթոն տուն եր վազում՝ ճանապարհին կրկնելով:

— Թո՛ն ա՛րա, թաթա՛վ արա, գարի՛ հացը բոլ ա՛րա...

Չար տղա յեր Աթոն: Դրա համար եր, վոր տանը նրան մի քիչ ծեծում եյին, յերբ «խաղի յետև ընկած» տան գործը մտահան եր անում» նա:

3

Բայց Աթոն գործը «մտահան» անող տղա չեր:

Յերբ տասնհինգ տարեկան տղա դարձավ նա, արդեն իր հոր «աջ կուռն եր»՝ ինչպես ասում եյին դրացիները: Իսկ հայրն ասում եր.

— Ա՛յ բալամ, մենք ել խո հարուստ չե՞նք, վոր մշակ պահենք: Մենք մեր ուժով պիտի յոլա դնանք:

Լույսը բացվելիս վեր եր կենում Աթոն ու հաղնում

եր շորերը: Յերբ աղբորի արկին կռացած նա լվացվում, պրծնում եր, նայում եր յերկնքին:

— Եսոր արե ա լինելու...

Յեթե կողքին մեկը լիներ, այդպես կասեր նա, իսկ յեթե մենակ ինքը լիներ, այդպես կմտածեր: Հետո կշար տուն ու տնից ել կընար դաշտ՝ աչխատելու:

Խալար ե գյուղը, բայց լույսն արդեն մտնում ե այնտեղ: Խալարը հետ ե քաշվում ու կծկվում ե: Աթոյի հայրը վորքան ել անուսում, ելի հո գիտեր ուսումի ոգուտը: Նա Աթոյին տվել եր սովորելու գյուղի դպրոցում: զրա համար ել խիղճը հանգիստ եր: Իսկ Աթոն շատ ուրախ եր, վոր կարգալ գիտե ու բացի դասագրքերից՝ նույնիսկ թերթ կարդալ կարող ե:

4

— Հո՛, հո՛, մարա՛լ յեզ, հո՛, հո՛, ջեյրա՛ն յեզ, հո՛ մարալ, հո՛ ջեյրան...

Փխրուն հողը ճեղքվում եր գութանի յերկաթե խողից ե վեց գույգ յեղներն ավելի առաջ եյին անցնում: Վեց գույգ յեզ, վեց րնաանիք, վեց հոտաղ: Մի գութան ու մի մաճկալ: Լավ են ասում, վոր «գեղ կանդնի, գերան կկոտրի»: Եսոր Պետոյենց արտն են վարում, եզուց Աթոյենցը, մյուս որը մյուսինը ե եղպես յուր կզնան:

Մեկը հորովել եր զլում, իսկ հետո վեց հոտաղ միասին զիլ ձայնով հնչեցնում եյին:

— Հորովել՛ հո՛...

Հետո մյուս հոտաղն եր հորովելի խոսքերն ասում ե նորից խոսմբը ձայնակցում եր: Իսկ յերբ վոր չուում եյին բոլորը, Աթոն շարունակում եր յերգել: Այս անգամ արդեն նա յերգում եր «դասագրքի հորովելը»:

Ահա ծագեց կարմիր արե,
տաք ե պայծառ ե որը,
դե՛, քաչեցեք, սիրուն յեղներ,
առա՛ջ տարեք արորը:

Խալար եր գյուղը, բայց լույսն արդեն մտել ե այնտեղ: Առաջին կարմիր դրոշակը պարզվեց մի խրճիթի ծայրին, ե այդ խրճիթում գյուղխորհրդի զրատենյակը տեղավորվեց:

Յերկրորդ կարմիր դրոշակի տակ դպրոցն եր, իսկ յերրորդի տակ՝ խրճիթ-ընթերցարանը:

Միքանի կրծքեր զարդարվեցին կարմիր նշաններով, վորոնց վրա քարտուղար Սերգոն մեծ գծավորությամբ կարդաց ուսուերեն WRM բառերը: Ասենք՝ եդ մասին բոլորն ել գիտեյին: Բայց թե վոր տառն եր R-ն, W-ն կամ M-ն, եդ միայն Սերգոն գիտեր: Ե՛յ գիդի ուսում, ուսուերեն լեզո՛ւ...

Աթոն այդ յերեկո արտից տուն եր վերադառնում, սայլի վրա բարձած հասկի դեղի հետ: Հայրը գալիս եր Աթոյի հետ ե մի գույգ դեղին յեղները դանդաղ շարժվում եյին: Աղբյուրի մոտ հանդիպեց Յեղոն:

— Աթո՛, արի, բան եմ ասում:

Աթոն ճիպոտը տվեց հորն ու մոտեցալ:

— Չե՞ս գալի ժողովի:

— Ի՞նչ ժողով:

— Կոմսոմոլի...

— Հա՞...

— Ըմ...

— Գնա՛նք:

Գյուղում յերկար ժամանակ խոսում եյին կոմսոմոլի մասին: Յերիտասարդներն անհամբեր սպասում եյին բջիջի կազմելուն: Հարեան գյուղում արդեն «կոմսոմոլ» կար, վորն ուներ տասնչորս անդամ:

Մենք ինչո՞վ ենք պակաս, մտածում եր յուրաքանչյուր յերիտասարդ, վոր կոչա ուներ բր ձեռքի վրա ե վոտքերին սովորական տրեխ:

Եդ որը լավ որ եր: Շատ լավ որ եր: Բջիջ կազմա-

կերպվեց, անդամներ ընդունեցին, հետո զեկուցում յեղավ. իսկ մի ամիս հետո արդեն ինչե՛ր չեղան... Դարի հողերից մինչև պուճուր քարափը, վանքի արտից մինչև լեն «չոչը» զրնգում եր կոմսոմոլի անունը: Սիրողներ ել յեղան, չսիրողներ ել: Ու զարմանալի բան: Ով վոր կոմսոմոլին չեր սիրում, նա յոթ-ութ լծկան ուներ տանը և ուրիշ շատ բան: Նրանց հին լեզվով «համփա» յեն ասում, իսկ նոր լեզվով «կուլակ»:

6

Իմ յերկրի լեռներում առատ ե արեգակի լույսը և լեռների լանջին տապ ե լինում յուրաքանչյուր ցերեկ: Վոսկեղեղին ճանապարհի վոսկեղեղին փոշու միջով քաղաք ե գնում Աթոն:

Են յե՞րբ եր, մի տարի առաջ եր, թե՞ մի դար առաջ եր, յերբ Աթոն գրվեց կոմսոմոլի մեջ ու շա՛տ քիչ բան գիտեր: Են յե՞րբ եր, յերեք ամիս առաջ եր, թե՞ յերեք տարի առաջ եր, վոր Աթոյին գրկեցին քաղաք կուսակցական դպրոց, սովորելու: Են յե՞րբ եր, մի շարաթ առաջ եր, թե՞ մի տարի առաջ եր, վոր Աթոն արձակուրդ առավ ու գնաց իրենց գյուղը:

Իսկ հիմա, յոթնորյա արձակուրդը լրացել ե, և Աթոն նորից գնում ե քաղաք, կուսակցական դպրոց:

— Վորդիս մի կտոր հացի տեր ելավ, — մտածում եր Աթոյի հայրը:

— Մարդամեջ մտավ, — ասում եյին գյուղացիք:

— Ես ուսումն ել մի ուրիշ տեսակ արե ե, վոր լուսավորում ե, — մրմնջում եր ինքը՝ Աթոն:

Պայծառ եր արևը իմ յերկրի պղնձադույն լեռների տաք լանջերին. բայց ավելի պայծառ ե արևը կուսակցական դպրոցում: Դրա մասին Աթոն շատ ե մտածել: Յերբ առաջին անգամ ներս մտավ դպրոցի դռներից, իրեն մի քիչ նեղված եր զգում: Յերկու որ հետո ընտելա-

ցավ ու տեսավ, վոր բոլոր ընկերներն ել իր պես կոչա ձեռքեր ունեյին: Մենակ թե նրանցից մի մասի ձեռքերը մուրճի կոթից եյին կոչտացել, մնացածներինը՝ մանդաղի ու մաճի: Յեվ Աթոն զգաց, վոր նրանցից յուրաքանչյուրն եղ դպրոցից տանելու յե մի արե, պայծառ ու շուտավոր:

Հե՛յ գիտի Աթո՛, մեռա՛ծ Աթո: Եգուց մյուս որը, մեկ ել տեսար ավարտեցիր ու հայդե, դեպի գյուղ...

7

Չա՛խկ, չո՛ւխկ, չա՛խկ, չո՛ւխկ... Վո՞ր տարվանից ե մնացել այդ փայտե որորոցը: Աթոն ել ե նրա մեջ պառկել: Նանեյին վոր հավատաս, Աթոյի հայրն ել ե այն որորոցում անցկացրել իր որը, ծծկեր ժամանակ:

Չա՛խկ, չո՛ւխկ, չա՛խկ, չո՛ւխկ: Իսկ հիմի՞ ով ե անուշ քնել այդ հին որորոցի մեջ: Ո՞ւմ յերեխան ե դա: Աթոյի՞նը: Այ գետինը մտած Աթո, գեռ յերեկ մի մատ յերեխա եյիր, իսկ հիմա դու ինքդ յերեխա ունեցար:

Նանեն որորոցի մոտ նստած, որորում ե կիմային: Յերբեմն նրա դեմքի պառաված խորշոմները յեա են գնում ու նա իր թոռան հանգստի համար յերցում ե մի հի՛ն, հի՛ն յերգ: Չա՛խկ, չո՛ւխկ, նորից որորովում ե որորոցը, չխկչխկում են որորոցի փայտից կախված կոճե՛րը, և յերեխան քնում ե հանգիստ:

Յերեխի մայրը, կոմսոմոլիստիկա Սիրուչը՝ մի չորի կտոր գլխին կապած՝ աշխատում ե կաթնարտելում: Յերբ յերեկոյան դաշտից տուն յեկան կովերը, նա նրստեց փոքրիկ աթոռակի վրա ու սկսեց կթել նրանց: Նրա սպիտակ մասների հպումից դուրս եր ցայտում սպիտակ կոթր դուլլի մեջ՝ այնտեղ սպիտակ պղպջակներ առաջացնելով:

Հանկարծ դանդաղացան Սիրուչի մասների հպումները, նա ուղղվեց աթոռակի վրա, ձեռքը դեմ տվեց

ծնոտին ու սկսեց մտածել՝ դեմքի վրա խաղացնելով հա-
ղիվ նշմարելի մի ժպիտ:

Կիմա՛...:

Հոկտեմբերի՛կ Կիմա՛:

Պիոնե՛ր Կիմա՛:

Կոմսոմոլի՛ստ Կիմա՛:

Կոմունի՛ստ Կիմա՛...:

Կովը խլշկոտած նայում եր: Կողքի մսուրի մոտից
լսվեց մի ծիծաղի ձայն, ու յերևաց Մանիչակը:

— Ա՛ղջի, կովը խի՞ չես կթում:

Սիրուշը բարձր ծիծաղեց ու շարունակեց իր գոր-
ծը:

8

Չա՛խկ, չո՛ւխկ, չա՛խկ, չո՛ւխկ, քնի՛ր, Կիմա՛: Քո
հայրը՝ Աթոն աշխատում է գալառում: Նա կուսակցա-
կան դպրոցն ավարտել է ու հիմի եղ բոլոր գյուղերում
ցրում է իր բերած արևը, հուրհրան, պայծառ արևը:

Խճիթների առաստաղների սևացած գերանների
տակ ինչքա՛ն մեծ ուժ կա ամբարված... Մրոտ առաս-
տաղների տակ վաղվա կառուցողներն ու ստեղծագոր-
ծողները դեռ վեպ են խաղում, կամ կրծոտում են բոքո-
նի կտորները:

Աթոն տուն է վերադառնում: Ցերեկվա արևը, ամ-
ռան արևը այրում եր չրջապատն իր տապով և փռում եր
իր առատ լույսը:

Ես ճանապարհով նա շա՛տ է անցել: Մի ժամանակ
ուրիշ կերպ, իսկ հիմա ուրի՛շ:

Մի ժամանակ նա իր հոգում ուներ մի արև, լուսա-
վոր ու տաք. իսկ հիմա յերկու արև ունի: Մեկն են, վոր
վառվում է յերկնքում, մյուսն են արևը, վոր Աթոյի
նման շատերը ձեռք բերեցին հետո: Մեկը մյուսից ա-
վելի լուսավոր, ավելի տաք... պայծառ...

Աթոյենց տան դուռը ճռռաց, ժպտերես ներս մտավ
կուսակցական Աթոն:

Դրսում փայլում եր արևը հուրհրան արևը...

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Վո՞ր չրջանի հալ գյուղն է նկարագրված առաջին չորս
հատվածում. ինչի՞ց է յերևում:

2. Ի՞նչ փոփոխություններ մասն գյուղը (վերջին չորս հատ-
վածում), յե՞րբ և ինչի՞ շնորհիվ:

3. Ի՞նչ յերկու իմաստով է գործածված «արև» բառը:

4. Հասարակական վո՞ր շերտերից էին կուս. դպրոցի ուսա-
նողները:

Խորշում—կնճիռ.

Նշմարելի—նկատելի.

ՆԱՄՍԿ ԳՅՈՒՂԻՑ

Սիրելի իմ բարեկամ, ներիւր,
վոր այսքան ուշ եմ նամակ գրում.
գարնան գրոհի այս որերին
նամակի ժամանակ չի մնում:

Նույնիսկ մուսան, իմ լիրիկ մուսան,
յերեսը դարձրել է ինձանից...
այսոր յես նրան հեռվից տեսա՝
նստած աղեղվող ծիածանին...

Այնքան փոխված է գյուղը, այնքա՛ն,
քիչ բանով է նման այն գյուղին,
ուր հինգ տարի առաջ ընկա.
և ուր այնչափ հին բաներ թողի:

Աճե՛լ է կոլեկտիվը, աճե՛լ
և ընդգրկել մոտ կեսը գյուղի:

դժուժ է և նա, ով դուրս է մնացել,
վոր միայն այդ է ճամբան ուղիղ:

Այս գարնանը առաջին անգամ
տրակտորը հոնդաց մեր հանդում.
հենց այդ ուր, թանկագին բարեկամ
կոլեկտիվ մտան մոտ քսան տուն:

Այս գարունը շատ անձրևոտ էր,
չնայած դրան պայման դրինք՝
ցանքսը լրիվ կատարել և դեռ
մոտ գյուղն էլ առնել բուժքիրի:

Զիմանաս, թե այնքան հեշտ էր,
դա իսկական կոխվ էր կարծես.
հենց այդպիսով է, պետք է շեշտել,
վոր վճռում ենք բաղմաթիվ հարցեր:

Մեր կուսբջիջը փոքր է սակայն
համախմբելով ուժերն ի մի
վարում է մարտն այդ հերոսական,
գյուղի մասնանները հանած կովի...

Յերեկ յես «Ցասումը» հիշեցի...
գյուղխորհրդում ազմկոտ նիստ էր,
քարտուղարին դուրս քշեցինք,
սպարզվեց, վոր նա ոպորտունիստ էր:

Մի կուլակի պահել էր... հանգիստ.
ցուցակում գրել էր. — «միջակ է».
— եդ վո՞նց — հարցրեց մի կոմսոմոլիստ, —
թե նա միջակ է, դու... միջատ ես...

Պատկերացնում եյի մտքիս մեջ
այդտեղ կուլակին — գաղազած շուն.
բայց դրսից գյուղացի յես նա «խեղճ»,
եյությամբ նա մի սարդ է՝ բուրժույ:

Այնքան խորամանկ է նա, այնքան,
«միամիտ, անուսում գեղացի»,
այնպես է խոսում, կարծես ընկած՝
«խեղճը» կարոտ է որվա հացի:

Սակայն հենց վոր մի հարմար տեղ դա՝
ցույց կտա նա ժանիք և մագիլ,
ցույց կտա նա իր մոուլթը ներկած,
մի խոսքով, դայլ մի՝ դարձած մաքի:

Շատ է փոխվել մեր այս գյուղացին,
մանավանդ նա, կոլխոզում վոր կա,
հետևիք նրա նիստ ու կացին,
շատ բան կա իր մեջ բանվորական:

Կանայք ել... դեռ կան հարս ու կեսուր՝
տեղ-տեղ չխոսկան. թոնիր, աման...
բայց այս ամսից բացում ենք մսուր
կոմունի ճուտիկների համար...

Դու կարդա տողերիս արանքում
այն, վոր կիսատ թողեցի ակամա.
դժվար է գրել մի նամակում
այն ամենն, ինչ արվում է հիմա:

Հ Ա Ր 8

1. Ի՞նչ տարբերություն կա գյուղի մասին գրված այս նա-
մակի և Արությունի Մանվելին դրած նամակի մեջ:

ՏԱՐԵԴԱՐՁԻ ՅԵՐԳ:

Հաղթանակի տարեդարձ,
պայքարների նոր խթան,
թող շեփորեմ յերգը քո,
յերգը կուվի սրբնթաց,
յերգը կարմիր հաղթության
նոր մարտերը բորբոքող:

Նոյեմբերյան սուրը մերկ
իմ աչքերում չողա թող
և չափադե սրտում իմ,
չողը դառնա կուվի յերգ
և բանակին մեր հաղթող
հանե վերջին յերդումի:

Փարրիկներում, հանքերում
բանվորական ձեռքեր պիրկ
բարձրանան նոր լարումով,
ու կուվի մեր յեռուն
հաղթանակի դիրք առ դիրք՝
վերջին դիրքի առումով:

Համայնական դաշտերում
հափաքական կամքը թող
բարձրանա նոր հորձանքով,
ու նոր գյուղը՝ աններում
հին կապերը կտրատող՝
ապրի, չնչի նոր կյանքով:

Նոյեմբերյան տարեդարձ,
հաղթանակի խնդու թշուն,
հաղթանակի նոր դրոշ:

այդ հաղթությամբ վեհապանծ
մեծ կառուցման ճակատում
թող բորբոքվի նոր դրոշ:

Սրբնթաց—արագ սլացող.
Շափադե—փայլ տա.
Պիրկ—ջլուտ, ուժեղ.

ՔԱՐՏԱՇՆԵՐ

Այս մեր փողոցում, քարոտ փողոցում
կառուցում են շենք վարդազույն քարից,
այնտեղ ամեն ուր փայտ են սղոցում,
ու քար են տաշում մարդիկ իրար կից:

Յեվ քարերի հետ մաշվում են նրանք,
տաշվում են վորպես քարերը զեմի,
շենքը յեյնում ե, բարձրանում չարք-չարք՝
ասես ժպտում ե քո առաջ հիմի:

Յեվ ախամայից սիրտս խնդում ե,
վոր ամեն մի մարդ քարերի վրա
իր մկանների ուժը դնում ե,
վոր այդ գեղեցիկ շենքը բարձրանա:

Այս մեր փողոցում, քարոտ փողոցում
կառուցում են շենք վարդազույն քարից,
այնտեղ ամեն ուր փայտ են սղոցում,
ու քար են տաշում մարդիկ իրար կից:

Կտուրման ժամին ընկավ մի բանվոր
 իրա բարձունքից ու վռվեց գետնին.
 Հողին հանձնեցինք մենք չուքով ախոր
 պաշտառ հերոսի գետնաթավալ գին:
 Ընկեր, կյանքը քո տվիր մեր կյանքին,
 հերոսի փառքով դու խաղաղ քնի.
 դրանով հասար մի նոր բարձունքի՝
 վորտեղից յերբեք, յերբեք չես ընկնի:

Հ Ա Ր Յ

1. Ի՞նչպես եք հասկանում վերջին յերկու տողը:

Գետնաթավալ—Գետնին գլորված.

Դի—դիակ.

ՍԻՔԻՐՈՒՄ

Տեսա Սիբիրը յես,
 Կուղնեցկստորոյր մեծ,
 վիթխարի գոմնաներ
 ու մարդիկ,
 հաղթանակ տեսա յես
 ու հալոցք մետաղի,
 մետաղի պես տոկուն
 բյուր մարտիկ:

Տեսա հերոսական
 այն մեծ բանակը մեր,
 խանդավառ տեսա յես՝
 պայքարում,
 նրանց կամքը հաղթող
 և ույժը տեսա յես՝

ամեն մի աղյուսում
 ու քարում:

Այնտեղ գիշերը յես
 ցերեկի պես տեսա,
 ցերեկը՝ նույնպես
 ցերեկի,
 աշխատանքը համառ,
 կյանքն անմար տեսա—
 սոցիալիստական
 վերելքի:

Տայգաները կտրած
 մարդիկ տեսա այնտեղ,
 վորոնք յելել եյին
 պայքարի,
 վորոնք յեկել եյին
 իրենց ույժը տալու
 Սիբիրի յերկաթին
 ու քարին:

Կիրգիզների հզոր
 բանակներ տեսա յես,
 քրտնած ճակատներով
 և արի,
 աչքերի մեջ նրանց
 ուժի կրակ տեսա,
 ճայների մեջ կամքը
 վիթխարի:

Յեվ այս բոյորի մեջ
 յես արևը տեսա
 սոցիալիստական
 Սիբիրի,
 սիրտս վառվեց նրանց

կրակներով անմար,
բարենները ավի
իմ յերկրի:

Տոկուն—դիմացկուն.

Մարտիկ—սպառնալից, կռիվող.

ԱՔԱՂԱՂՆԵՐ

I.

Յերբ նայում եմ յես մեր մանուկներին խաղին՝
մանկությունս եմ հիշում և իմ աքաղաղին:

Հնչում եր մութի մեջ լուսականչը նրա,
զանգի զոզա՛նջի պես փռվում մեր տան վրա:

Նա՛ յեր առաջինը չողն արևի կտցում,
ու բակի մեջ, հպարտ կատարը վեր ցցում:

Նա՛ յեր առաջինը հանում մեզ խոր քնից,
ճիչով, աղաղակով դուրս չարտում տնից:

Նրա ձայնն եր հնչում գյուղի թաղից մի թաղ,
դեռ չեր հաղթել նրան և վռչ մի աքաղաղ:

II.

Ապրում եյի հեռու մի քրդական գյուղում.
Թիթեռի պես անհող թռչում եյի, խաղում:

Այնտեղ ունեյի յես քուրդ ընկերներ այնքան,
վորոնք առողջ եյին, բայց աղքատ ու աղքատ:

Ու քաջ եյին նրանց հայրերը վիթխարի,
բայց լուռ՝ ապրում եյին Հասան—բեգին դերի:

Նա, վոր իշխում եր մեծ մի դավառի վրա,
ունեք խաչներ, նախիր, ունեք քյոչք ու սարա.

Նա, վոր թե քուրդ, թե հայ աշխատավոր մարդուն
արորում եր, քամում, դիզում հարստություն:

III

Յես մի անգամ ջոկված ընկերներին խաղից,
բռնեցի իմ սիրուն, չալ—չալ աքաղաղին:

Այնքա՛ն խելոք եր նա, հայացքն այնքա՛ն բարի,
սիրում եր իմ բռից ուտել արծաթ դարի:

Թողնում եր, վոր յես իր կատարը համբուրեմ,
տանեմ մոտիկ առուն, սառը ջրով ջրեմ.

Տանեմ մոտիկ բակեր, սարքեմ տուր ու կռիվ,
ուրիշ աքաղաղի բմբուլը տար ցրիվ...

Ի՛նչ կհասներ մանկան չարածճի խաղին
և իմ սիրո՛ւն, սիրո՛ւն, չալ—չալ աքաղաղին:

IV.

Մի օր, գրկած յես իմ չալ—չալ աքաղաղին,
խառնվեցի իմ քուրդ ընկերների խաղին:

Մեկ ել կոկորդով տուր ճչաց փոքրիկ Հասուն.
— Յեկե՛ք, աքաղաղի կռիվ սարքենք եսոր:

— Սարքե՛նք, — ասացի յես, առանց մի յերկյուղի.—
կուզեք բերեք անգամ բեգի աքաղաղին:

— Բեզի աքաղա՞ղին... Ի՞նչ ասացիր, Հիմա՛ր,
զնամ Հիմա բերեմ կովացնելու համար:

Գնաց: Ու քիչ հետո բարձր սարայից մեծ,
բեզի տղայի հետ՝ աքաղաղը բերեց...

V.

...Կովում եյին յերկու աքաղաղներ բախում,
կտուցներով իրար մարմինները ծակում:

Իմբուլը բարձրանում և իջնում եր ներքև,
նրանց կտուցներն ալ արյուն եր ներկել:

Մեկ ել փոքրիկ բեզի աքաղաղը փախալ,
արյան մուգ կաթիլներ փոշու վրա թողած:

Նայեց բեզի տղան չալ-չալ աքաղաղին,
ապա հրամայեց մոտիկ կանգնած խոխին:—

— Ղուլա՛մ, բռնիր ինձ տուր աքաղաղին ես չալ.
Թե չե՝ փորիդ կտամ յես դյուլլա ու խանչալ...

VI.

— Բռնիր, ասում եմ քեզ— ամբողջ կոկորդով նա
ճչում եր բարկությամբ,— դե չուտ, բռնի՛ր, զնա՛...:

Հասոն ուղեց վազի, իսկ յես նրան ասի,—

— Չե՛մ տա, դո՛ւր ե խոսում իր խանչալի մասին:

— Չե՛ս տա՛, չես վախենո՞ւմ... Հիմա քեզ ցույց կտամ.
Ա իմ Թեխ խրեց մի կրճատղ ատամ:

Յես ճչացի ցավից ու բուռնցքով տվի,
նա դեպի քյոչք փախալ, դեմքով արյունովիկ:

...Քյոչքից մի մարդ յեկալ, պինդ խմեց իմ կողին,
ու տարալ իմ սիրուն,— չալ-չալ աքաղաղին...

Ղուլամ—ծառա.

ԲԱԼԻԿԻՆ

Արդեն մեծանում եմ և դարունը թողած՝
ամռան մեջ եմ մտնում:— Արդեն մեծանում եմ:
Իսկ դու, իմ լա՛վ բալիկ, խարտիչահեր տղաս,
կյանքն ալ դրոշն իր դեմդ ծածանում ե:
Յերբ մեծանաս, դառնաս դարարածյուղ մի ծառ՝
կճերմակեմ ինքս, ճերմակ, վոնց աղացի.
Բայց կկանաչե՛մ յես, Թե դու դառնաս պայծառ,
բտալինյան դարի մարտիկ քաղաքացի:

Խարտիչահեր—չեկ մազերով.

ԻՎԱՆՆԵՆ

I

— Սի՛դո, է՛յ Սի՛դո,— կանչում եր Իվանեն իր
կնոջը, վոր խոր քուն եր մտեց,— ա՛ կնիկ, չե՞ս լսում:
Ես ինչ ծանր քուն ե յեկել վրան,— փնթփնթնում եր ինքն
իրեն Իվանեն:

— Ի՞նչ յեղալ, ի՞նչ ե պատահել, ա՛յ մարդ, ի՞նչ

ես վեր կացել ես կեսգիշերին ու ճայնդ դրել: Չե՞ս
թողնի, վոր գիշերները գոնե հանգիստ քնենք:

— Ախր հազար ու մի գործ ունեմ, ա՛յ կնիկ, չտա-
պում եմ...

— Յերևի միայն գործ ունեցողը դու յես, վոր ճայ-
նդ դրել ես, ել ուրիշներն աշխատանք չունեն. վոչ ինքդ
ես հանգստանում ե վոչ ել ուրիշներին թողնում,
վոր հանգստանան, — դժկամությամբ պատասխանեց
Սիդոնան և ծանր տնքալով մի քանի անգամ հորանջեց:

— Ա՛յ տնաքանդ, ախր հազար ու մի գործ ունեմ և
Շատ կանուխ պիտի գործի լինեմ, վոր ծերը-ծերին
հասցենեք, պառկելով ի՞նչ դուրս կդա: Զրադացը ցորեն
պիտի տանեմ աղալու, արտերին ջուր պիտի հասցենեմ,
արտերի անպետք խոտերը պիտի մաքրեմ: Վո՞ր մեկն
ասեմ: Ես բոլորին պետք ե հասնե՞մ, թե՞ չե...

— Հեռո՞, յես ի՞նչ անեմ, ա՛յ մարդ. ինչո՞վ ող-
նեմ...

— Այն, վոր շուտ վեր կենաս, ժամանակին կերա-
կուր գնես ոջախին, վոր յեմվի: Յերեկվա ուղարկածդ
կերակուրն անեի եր...

— Ե՛հ, դու յել խոսելու նյութ չունես, ամբարդ
բաների մասին ես խոսում, կարծես...

— Լա՛վ, լա՛վ... — առաց իմանեն և պատվիրեց
կնոջը, վոր կերակուրը ժամանակին հասցնի:

Սիդոն մտքի յեղավ, պատուհանի վարագույրը յետ
քաշեց, նայեց դուրս:

Դեռ մութն եղ...

Գյուղն ամբողջովին քնած եր... վոչ մի շարժում... և
վոչ մի կենդանություն: Գյուղի քար լուսթյունը խառ-
վարվում եր միայն յերբեմնակի լամպ շների հաջոցով:

— «Ծուղրուղո՞ւ... դո՞ւ...», — հեռու տեղից
լավեց արագադի կանչը և անպատասխան մնաց:

Գիշերվա մութը կարծես կամաց-կամաց հրոժեշտ
եք տալիս աշխարհին:

Իմանեն սիրալիր վողջույն տվեց կնոջը, պատից

կախած հացի տոպրակը ձգեց ուտին և ուրախ տրամա-
դրությամբ դուրս յեկավ տանից:

II

Իմանեն դաշտային աշխատանքի մեջ եր, յերբ կինն
անապատելի կանգնեց նրա առաջ և անհանգստությամբ
ասաց.

— Տանուտերն ուղտւմ ե քեզ տեսել, պրիտավից
թուղթ ե յեկել:

— Տանուտե՞րը, — գարմացած պատասխանեց իմա-
նեն և դունատվեց, — խեղագարվե՞լ ես, ի՞նչ ե: Ինչո՞ւ
համար, վո՞ր մեղքիս համար:

— Յես, ասում ե, պարտավոր չեմ ամեն բան ասե-
լու քո կարմիր-սոցիալիստ ամուսնուն... Թող բարեհա-
ճի գնալ դրասենյակի և աշխատեղ իմանալ, թե նրան ինչո՞ւ
յեն կանչում:

— Տե՛ս եդ անիրավին՝ ինչպես թեք ե առնում:
Յերես են տվել. չաղացել, պարարտացել՝ խող ե կտրել,
եյ ուրիշի վիճակի մեջ չի մտնում: Մի հարցնող լինի,
թե ինչո՞ւ համար ե եդ թշնամանք. ո՞ւմ վիզն եմ
կտրել, ո՞ւմ տունն եմ թալանել, վորի՞ն եմ վատու-
թյուն արել, ո՞ւմից կաշառք վերցրել, ի՞նչ ե ուղում
այդ անխիղճն ինձանից:

— Այն, վոր լեզուդ կարճ չեյիր պահում և շարու-
նակ խոսում եյիր նրա դեմ և թշնամացնում քեզ հետ:
Ախր ո՞վ ե նրա ձեռքից պրծել, վոր դու պրծնեյիր: Ամ-
բողջ գյուղը ճանաչում ե նրան, բոլորն ել նրա վատ
արարմունքների մասին են խոսում, բայց ծածուկ, իրար
մեջ և վոչ թե քեզ նման յերեսավոր տալիս ամեն ինչ:
Ախր շարունակ ասում եյի՝ ա՛յ մարդ, լեզուդ քեզ քա-
շեր, վատ որեր կգան գլխներիս. բայց ո՞վ եր զսում
ինձ-յես ասի, յես լսեցի... Տե՛ս... շուրջդ նայիր ու
տես, թե ի՞նչ են անում ուրիշները... պապանձվել,
լուել են, վոչ վոք չի առարկում նրա դեմ. ասում են՝

կառավարութեան մարդ է, տանուներ է, ի՞նչ կարող ենք անել:

— Հերի՛ք է, ա՛յ կնիկ, դու ել մի կողմից ես սիրտս կտրատում. ի՞նչ խրատների ժամանակ է: Բողոքել եմ, և միշտ ել կրողոքեմ ամեն տեսակի անարդարությունների դեմ, — ասաց վճռակա՛ն և շարունակեց իր աշխատանքը...

— Դու դիտես, Իվանե՛, բայց միտքդ պահիր, վոր այսօր պիտի ներկայանաս գրասենյակ, յետ չընկնես, մի նոր գործ չբարդես գլխիդ:

— Ի՞նչ ես ասում, ա՛յ կնիկ, այսպիսի աշխատանքի լավ որն արտա կիսատ թողած՝ գրասենյակ վաղե՞մ, ինչո՞ւ, ի՞նչ շտապ գործի համար: Չե՛, չեմ գնա. ի՞նչ ուզում են՝ թող անեն: Դու միամիտ մնա, ա՛յ կնիկ, լո՛ւրճաչդ պատրաստիր յերեկոյան համար, ամեն ինչ լավ կլինի, — ասաց Իվանեն իր կնոջը, կարմիր թաշկինակը կապեց ճակատին, մանգաղն առավ ձեռքը և շարունակեց իր աշխատանքը:

Սիդորան մտադրադ տուն վերադարձավ...

Արդեն կեսօր է...

Կիդիչ արևը կարծես կանգ եր առել յերկնակամարի վրա, Իվանեյի գլխավերևը և հանդիստ ու անտարբեր նայում եր ներքև կատարվող ժրաջան աշխատանքին...

— Ո՛վ, ո՞՞Ք, ինչ շոգ է, — բարձրացրեց գլուխն Իվանեն, մեջքն ուղղեց և ճակատից սրբեց առատութեամբ թափվող քրտինքը: Ապա հրճվանքով նայեց իր արտին, լիստատ սրտով ուրախ չունչ քաջեց և գոհ իր կատարած աշխատանքից՝ դանդաղ քայլերով անցավ դեպի դաշտում յերևացող կաղնու ծառը:

Այս կաղնու տակ նստեց մեր Իվանեն:

Տոպրակն ուսից վայր բերեց, կավե ամանով ջուրը դրեց մի կողմ, մանգաղն զգուշութեամբ՝ մի ուրիշ տեղ, ծորացող քրտինքը սրբեց, թեք ընկավ կանաչ խոտին:

Հանգստացավ... ապա վեր կացավ, ձեռքերը լվաց, տոպրակից հանեց մոխրագույն թաշկինակի կապոցը:

սրա միջից ել՝ խիստ չորացած հացը և սկսեց ծամծամել:

Հացի չոր փշրանքները մնում էյին կոկորդը: Թեև չուտ-չուտ ջրի ամանը մոտեցնում եր բերանին, բայց և այնպես հացի պատառներն այնքան չոր էյին, վոր դժվարութեամբ էյին կուլ գնում:

Այսպես, կես հացի չափ կարողացավ ուտել, ջրի ամանը դատարկեց և իր համեստ ճաշն ավարտած համարելով, խորն ախ քաջեց, մնացորդ հացը նորից դրեց տոպրակում և մեջքի վրա փովեց գետնին՝ մի քիչ հանգստանալու:

III

— Բարի ո՛ր, — անժպիտ կանգնեց գյուղի տանուտերը Իվանեյի գլխին, ձիավոր գդիրների հետ միասին:

— Բարե, հազար բարի, — անբավականութեամբ պատասխանեց աշխատավորը՝ հազիվ իր գլուխը բարձրացնելով:

— Այս առավոտ կանչել էյին գրասենյակ, ինչո՞ւ չներկայացար:

— Ա՛յ մարդ, աշխատանքի այս յեռուն որերում ի՞նչպես արտա կիսատ թողած՝ գրասենյակ գայի, չե՞ վոր ինքդ եյ գյուղացի յես և չավ գլխես մենակ աշխատավորի վիճակը:

— Այդ իմ գործը չե. ինձ հրամայված է, և յես պարտավոր եմ ճշտութեամբ կատարելու հրամանը:

— Ի՞նչ ես ուզում, ասելիքդ ի՞նչ է:

— Հենց այժմ պիտի պրիստավին ներկայացնեմ քեզ, — չոր-չոր պատասխանեց տանուտերը և նայեց գդիրներին:

— Ինչո՞ւ, վոր հանցանքիս համար, չե՞ս կարող արդյոք ասել:

— Ինչո՞ւ համար՝ չգիտեմ: «Նաչայնիկի» գրությունն է — «մորտեղ պատահեք Իվանե կեթիյաշվիլուն, անմիջապես ձերբակալեք և ուղարկեք ինձ մոտ»:

— Այս բոլորը քո բաներն են, Փիթո', ուրիշ վոչ վոքի,— ասաց վրդովված Իվանեն։

— Ի՞նչպես, ուրեմն հանցանք ե՞լ ես բարդում վրաս։ Լա՛վ, շա՛տ լավ. ինչպես տեսնում եմ, առանց մտաբանի գործը գլուխ չի գա։

— Ի՞նչպես, ուզում ես մտաբանի բաժնի՞ն դարձնել ինձ։ Վա՛չ, այդ քեզ չի հաջողվի. Իվանեն դեռ այնքան չի ընկել, վոր այդ որին հասնի։

— Բավական է, ասում եմ. յես չեմ յեկել այստեղ խոսք ու գրույց անելու. յեկել եմ ձերբակալելու, ձեռք ու վոտքդ կապելու և պրիստավին ուղարկելու։ Այդպես և հրամայված։ Յեթե ըմբոստանաս և չուզենաս հնազանդվել, տեղն ու տեղը կարող ես սպանվել, ասված և հրամանի մեջ։

— Ինչո՞ւ, վո՞ր հանցանքիս համար, ավազակ հոչե՞մ, ո՞ւմ ինչ վատություն եմ արել, ա՛յ մարդ...

— Ո՞ւմ ինչ վատություն ես արել... դու կարծում ես՝ մոռացվե՞ց այն բոլորը, վոր գյուղացիներին ականջները մտած՝ դիչեր-ցերեկ հուզում, աղմկում, գրգռում եյիր տգետ գյուղացիներին իմ դեմ, կառավարության դեմ։ Մոռացա՞ր այդ բոլորը, հա՛, կարծում եյիր եժա՞ն կնատեր այդ։ Կա՛րճ կտրիր, վե՛ր կաց այս բոպեյիս, վե՛ր կաց,— գոռաց տանուտերը և քացով տվեց Իվանեյի կողքին։

— Գոռալդ բավական չե, քացի յե՞լ ես տալիս, շան տե՞ղ ես դնում դու ինձ, հա՞...։

— Ա՛յ թե ինչպես... — չարժվեց մտաբան ողի մեջ և պինդ իջավ Իվանեյի հոգնած մեջքին։

— Վա՛յ... — բռունցքը կրծքին տալով գոռաց զայրացած Իվանեն և ատամները կրճտեցնելով առյուծի նման վոտքի թռավ...

— Կապեցե՛ք ձեռքերը,— նորից լսվեց տանուտերի կատաղած ձայնը, և յերկրորդ անգամ՝ մտրակը խաղաց...

Գլխերներն իրար անցան...

— Տո քավթա՛ն, ի՞նչ ես ուզում ինձնից,— համբուրությունից դուրս դալով՝ գոռաց Իվանեն և հարձակվեց. արևի ճառագայթների տակ փայլիլող մանգաղը շողաց ողի մեջ, և մի ականթարթում գետին վռվեց տանուտերը...

Գլխերները սարսափից դեռ ու դեն փախան, տուն վերադարձան...

Իվանեն ուշքի գալով՝ նայեց իր շուրջը, տեսավ ինքն իրեն միայնակ կանգնած տանուտերի անչնչացած դիակի առաջ...

— Անպիտանների, գոնե դիակին տեր կանգնեյի՛ք,— փնթիթնաց Իվանեն գլխերների յետևից։

Մի բոպե կանգ առավ... նայեց հեռուները... լիառատ թոքերով ազատ շունչ քաշեց և գլուխը կախեց...

Այն ուրվանից Իվանեն թողեց դաշտն ու մանդաղը և հրացանը ձեռքն առնելով՝ գնաց միանալու ըմբոս վոգիներին, հեղափոխականներին։

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Վո՞ր ժողովրդի կյանքից և վերջրած այս պատմվածքը և ի՞նչ ժամանակից։

2. Գյուղացիության վո՞ր խավի ներկայացուցիչն է Իվանեն։

3. Ինչո՞ւ հին իշխանությունը և տանուտերը հալածում եյին նրան։

Դժկամությամբ—դժգոհությամբ, տրտունջով.

Կանուխ—չուտ.

Պարարտանալ—չաղանալ, դիրանալ.

Կիզիչ—այրող.

Ժրաջան—յեռանդուն.

Ըմբոստանալ—ընդդիմանալ, գլուխ բարձրացնել.

Ջալարը վեր կացավ, հագիւմ ժպտացող դեմքով մոտեցավ անկողնին, ուր հանգիստ պառկած էր Գեան և քայլերն ուղղեց դեպի ջրանցքը:

Այնտեղ հավաքված էին արդեն մի քանի տասնյակ բանվորներ: Բանվորների մի մասը քանդում էր վերջին ժայռի հիմքը, վորտեղ պիտի տեղավորեյին պայթուցիկ ումբերը՝ ժայռը պայթեցնելու և հավաքված ջրին ճամբա տալու համար:

Նոդարն ել այստեղ էր: Նա հսկում էր աշխատող բանվորներին, հաճախ կռանում էր և նայում ժայռի հիմքին, փորված փոսին՝ ստուգելու համար, թե՞ վորժան խորութեամբ և փորված փոսը:

Այստեղից ջրանցքն սկսվում էր և ձգվում չորս վերստ յերկարութեամբ:

Մի քանի որ առաջ այդ նույն ջրանցքում աշխատում էին մի քանի հարյուր վարպետներ, վորոնք ժայռերից պոկված քարերով պատեր էին կանգնեցնում, կիր ու ավազով ծեփում, իսկ այժմ արդեն դատարկ էր ջրանցքը: Կես ժամ հետո ճեղքված ժայռից պիտի ներսխուժի Քոի ջուրը և կենդանացնի ջրանցքը:

— Ամեն ինչ պատրաստ էր, սպասում էին ձեզ՝ սառնասիրտ դիմեց Նոդարը, յերբ ջրանցքի գլխին կանգնեց Ջալարը:

— Լավ է, վոր սպասել եք: Ջուրը պիտի բաց թողանենք յերկու վոտնաչափ բարձրութեամբ, ապա պիտի բանալ արգելակները և ավազանի ջուրը կրկին Քոի հունին պիտի հավասարվի, — պատասխանեց Ջալարը և աչք ածեց բոլոր ներկա յեղողներին:

Բանվորները տեսնելով Ջալարին կենդանացած, վողեկորութուն ստացան, ավելի յեռանդով սկսեցին աշխատել նրանց բազուկները և քլունդի յուրաքանչյուր զարկը քանդում, պոկում էր ժայռի հիմքից ահագին կտորներ:

Մի քանի վայրկյան հետո ժայռի հիմքում փորված փոսը դրին պայթուցիկ ումբեր, պատրույգը հարմարեցրին, կրակ տվին:

Մեկը մյուսի յետեից լսվում էին պայթյունի ձայներ:

Ողբ մեջ բարձրացավ սև ու թանձր ծուխ և առավոտյան գովարար մաքուր ողբ լցրեց անդուրեկան վառուղի հոտով:

Մանչալով ու շառաչելով փորվածքի միջից ներս խուժեց Քոուր՝ իր հեղեղատի մեջ առնելով ժայռի կտորներ, քարեր, հող, ավազ, տիղմ և այլն:

Ջրանցքի ամբողջ յերկարութեամբ ոճի նման դալարվեց պղտոր ջուրը և նրա մակերևութը կամաց-կամաց սկսեց բարձրանալ:

Հարյուրավոր ժողովուրդ խիստ մեծ հետաքրքրութեամբ և անկեղծ խանդավառութեամբ նայում էր ինչպես Քոի ջուրը ջրամբարից-ավազանից հոսում էր ջրանցքի միջով հեռո՛ւ և հեռո՛ւ:

Հինգ յերկար ու ձիգ տարիներ ոպասում էին այս յերջանիկ օրման և արդեն արժանազել էին նրան:

Այստեղ էին նաև Ջալարի կին Գային և Գիան, նրանց յերեխան:

Նրանք հպարտութեամբ, դյուխը բարձր նայում էին մերթ Ջալարին, մերթ այն տեղին, փորտեղից ջուրն աղմուկով ու մշջալով անցնում էր ջրանցքը:

Այս տեսարանով հափշտակվում էին բոլորը:

Ուրախությունը կատարյալ էր. ամեն կողմից լսվում էին ուրախ բացականչություններ, փողեորութեան խոսքեր, խոսում, զրուցում, կենդանութուն էր ամենուրեք:

Բոլորն ել անկեղծորեն ուրախանում էին: Մանա՛վանդ բանվորները, վոր իրենց թափած քրտինքը, իրենց քրտնաջան աշխատանքն իղուր չանցավ. նրանց վողեկորում էր մանավանդ այն հանգամանքը, վոր ջրանցքի մեջ բաց թողած ջուրը պիտի սկսեր գործի գցել-աշխա-

տենցնել տուրքինները, գինամո-մեքենաները, վորոնք լույս-լուսավորություն պիտի տան գործարաններին, տներին, բնակչությանը:

Ջուրը կամաց-կամաց շատանում եր:

Աղմուկն ու խանդավառ բաղականությունները շարունակվում եյին:

Բայց հանկարծ լսվեց սրտամաշուկ մի կանչ, աղա-դա՛հ. —

— Գի-ա՛... Գի-ա՛...

Այս ականջ ծակող վշտաբեկ ձայնը խորապես ցնցեց բոլորին:

Ժողովուրդը շփոթվեց, իրար անցավ:

Իսկ ջրանցքի միջով հոսող պղտոր ու վշշացող ջու-րը, փոքր ձկան նման, տանում եր իր հետ Գիային և մերթ Ընդ մերթ թաղում, անհայտացնում նրան իր ա-լիքների մեջ:

— Ոգնեցե՛ք, — գոռում եր, աղիողորմ ճչում եր Գալին. նրա բազուկները, սիրտը, միտքն ամբողջովին տարված գետի ալիքներով՝ չնչասպառ հետևում եր ջրի հոսանքին, վորը տանում եր իր հետ իր փոքրիկ սիրելի Գիային:

Գիան ընկել եր ջրանցքի ջրի մեջ, ջուրը քանի գնում շատանում եր: Ջրանցքի ամբողջ յերկարությամբ և պա-տերի ուղղությամբ հարյուրավոր մարդիկ հետևում եյին, սակայն մոչ մի ք հեր համարձակվում ջուրը նետ-վել՝ յերեխային ազատել:

— Արգելակները բացեք և ջուրն ավազանից բաց թողեք, — լսվեց Ջավարի շփոթված ձայնը և մի ակն-թարթում նետի նման աչացավ ջրի հոսանքով գետի ցած:

Մի քանի վայրկյան հետո, յերբ հավասարվեց Գիա-յին, թուավ նետվեց ջրանցքի մեջ, լողաց ջրի հոսան-քով, հետևեց իր դավակին, վորը բախտի ճակատադրին թողած՝ պիտի անցներ չորս վերստ տարածություն:

Հասավ:

Ամուր բռնեց նրա թևից և հայրը վորդուն պինդ սեղմեց իր կրծքին:

Գիտակցությունը կորցրած Գիան վոչինչ չեր տես-նում:

Ջեր գգում հայրական ջերմ գերկը, հոր թանկագին բազուկների ուժը:

Ջուրը շարունակում եր իր վշշոցը և հեալով հոսում եր սուաջ, իր հոսանքի հետ տանելով հորը և դավակին:

Ջավարի ծնկները հոգնածություն զգացին, վոտքե-րը դողում եյին:

Հագիվ եր վոտքի կանգնած:

Այագանի արգելակները բացին:

Ջուրն այստեղ հանկարծ վշշաց՝ փոթորկեց և ամ-բողջ իր ուժով նետվեց գետի Գոռի հունը:

Լսվեց ուժեղ պայթյունի ձայն:

Ջրանցքի մեջ ջուրը կամաց կամաց սկսեց պակա-սել, քանի վոր ամբարված ջուրը մեծ թափով հոսանք եր ստացել Գոռի սովորական հունի ուղղությամբ:

Ջավարը կանգ առավ, հանգիստ, բայց խորը շունչ քաշեց:

Նայեց իր վորդուն՝ Գիային և գդաց, վոր ձեռքերի մեջ պահել ու կրծքին ե սեղմել Գիայի սառած ու անկեն-դան դիակը:

Կարծես ինչ վոր տեղ, նրա սրտի խորունկ հան-գույցներում կտրվեց այնքան աշխուժորեն աշխատող յերակներից մեկը:

Լուռ՝ վորպես քար, ցուրտ՝ վորպես սառած և չո-րացած՝ դատարկ ամսնի նման, նայում եր Ջավարն իր պղտոր աչքերով:

Դուրս յեկավ ջրից, վեր բարձրացավ:

Կանգնած եր փետաղած, սակայն թանկագին վոր-դուն պինդ սեղմել եր իր կրծքին:

Խեղադարի նման մոտ վազեց Դալին:

Վիրավոր ու մոխեղնած վորսի նման վրա ընկավ Ջավարին և խկեց նրա ձեռքից վորդուն:

Յերբ Հեռվից տեսնում եր հորը՝ գրկած Գիւային և սեղմած կրծքին, հրճվում, սքանչանում: Գերմարդկային յերջանկութիւն եր ապրում իր սրտում, սակայն յերբ իր ձեռքերում զգաց իր վորդու սառը դիակը, ճաց գարհուրելի ձայնով և ձեռքնրով քաշքէց մաղերը:

Նրա աչքերից մարդարիտների նման թափվում եյին արցունքներ:

Մարմարի նման լուռ ու մունջ կանգնած եր նա ու նայում իր դժբախտ ու անչնչացած վորդուն: Մի կաթիլ արցունք անդամ չեր գալիս նրա աչքերին:

Ծանր եր նրա տանջանքը, արցունքով չեր կարողանում մեղմել իր անսահման կսկիծն ու վիշտը:

Յերկար ժամանակ քարացած մնալուց հետո, Զավարը վերջապես սթափվեց:

Իր վերջին ուժերը հավաքեց, մի քանի քայլ արավ առաջ և բարձր ձայնով կանչեց.—

— Արգելակները փակե՛ք... այլևս մի՛ք թողնի, վոր ալազանից ջուրը Գռի հունով անցնի, թողե՛ք հոսի, վչչա նորից ջրանցքի միջով...

Ապա նորից լռեց:

Անսահման եր նրա կսկիծը. բայց նա լավ գիտեր, իր սառը դատողութեամբ շատ լավ եր գիտակցում, վոր միայն հայրական ծնողական զգացմունքը չեր, վոր փութորկում եր նրա սիրտը, նրա բովանդակ կյանքն ու ապրումները, նա գիտեր, վոր կան նաև այլ զգացումներ, այլ ձգտումներ, վորոնք թե եյին տալիս, վստահորում եյին և զալիք սպասելիքներով յերջանկացնում եյին:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Վո՞ր տողերումն է նկարագրված ջրանցքի բացումը:
2. Ի՞նչ ձգտումներ եյին վստահորում Զավարին:



Ալաղան, լայնարձակ ու հսկա տափաստան,
 յերկնի պես ամբերով քո անհուն,
 մեր յետին ե մնում արդավանդ Կախեթիան,
 Լազոդեխն ու անտառը Ճիաթուրու:

Յերբ ճահճուտը կրծում եր այս դաշտը,
 ու վողնին նիրհում եր անդորը,
 նման տոթ, ծանր ող չեր տեսել վոչ վոք դեռ,
 նայում եր դաշտը լուռ յերկնին:

Իսկ սեպտեմբերին ել վոչխարի մի մեծ հոտ
 հոսում եր Շիրաքի կողմերից,
 խոնվում եր հոտը զորքերի նման հոծ,
 փորում տիղմը ճահճուտի:

Յե՛վ պատեց ջրանցքը վողջ դաշտը վոնց յերակ,
 կակղեց հողը խոնավությունից
 ու մարդիկ հրի մեջ դարձան լած ու կրակ
 բերին սիպ, մետաքսի պես բամբակ:

Ու խոպան այս դաշտը մաքրեցին դեռ յերկար
 մոլախոտից վայրենի,
 բամբակի հետ նաև Բայթոշլիլին յեկավ
 ու բուրեց բամբակենին:

Անմշակ ու խոպան այս հողը պարարտ եր.
 դրանցից ել կյանքի յեկավ նա.
 ձգվում են արտերը, հսկա տափարակը
 Թնդում են քանի մեքենա:

Յե՛վ չուտով կանաչեց վողջ դաշտն այս խոպան,
 իսկ հետո—բամբակն ինքր.
 և այսպես բամբակով պատրաստվեց անխալտն
 կառմած բամբակե ուրբեր:

Կառուցվում և այսպես սոցիալիստական դաշտ.
 բրդադերներն են մրցում իրար հետ:

Ու ցրիվ ե յեղեղ խավարը այն անհաշտ,
 վորը ծանրացել եր դարեր:

Ու Թնդում ե հիմի տափաստանը համակ
 տրակտորի շաքերի դղրդից,
 և առան սոցմրցման հաղթական դրոշակ
 կոխողնիկները—Սղնախից:

Ծփում են բամբակի կոհակներն անսահման,
 փռվում դենը հորիզոնից,
 կիտվում ե բամբակը մեր լեռների նման
 ու գնում աշխարհներ քանի:

Ալաղան—Վրաստանում Ալաղան դետի հովտի անունն է.

Արդալանդ—պտղաբեր.

Լազոդեխ—քաղաքի անունն է, Վրաստանում.

Ճահճուտ—ճահճոտ աեղ.

Անդորը—հանդիստ.

Կոհակներ—ալիքներ.

ՀԻՍՈՒՆԵՐԿՈՒ

(Հատված)

Առավոտվառ արեգակն իր հստակ, կարմիր ճառագայթներով սպիտակ շենքերի կատարները շոյելով բաբուում եր ճամբորդներին: Ծուռն մի քանի շաքաթ առաջ իր նախադահլթյամբ Սադախլիլի և հարևան հայ դուղի միջև սոցմրցման պայմանադիր եր կնքել հացամթերման կամպանիան հաջող անցկացնելու: Ահա այդ հավաքված հացահատիկը քաղաք փոխադրելու համար, իրիկվանից գյուղխորհրդի նախադահի ձին վերցրած, առավոտ արշալույսին ճանապարհ եր ընկել:

Իսկ գյուղխորհրդի նախադահը, յերեկվա փորոշումը իրագործելու համար, յերբ բաց եր անում բանալի

կողպած դուռը, Շացաճատիկի սայլերը խճուղում չար-
ված ճամբա ելին ընկնում:

Ասլան հարյուրապետն իր ավելի ևս մշուշոտած
աչքերը արագ թարթելով, բանտից դուրս գալիս, դնա-
ցող սայլերի մեջ իր սեփական պարկերը տեսավ. կյան-
քում ամենադառը կսկիծը պատճառող այս հարվածը
չկարողացավ տանել, ուշադնաց յեղավ: Չորս կողմից
հավաքված գյուղի ծերունիները նրա քիթ-բերնին ջուր
չաղ տալով, դարձեցին:

Մինչև նրա դարձնելը, հացահատիկի սայլերը ճա-
նապարհի յերկայնքով անհետացել ելին:

Քուռ գետի յեզերքին, ճանապարհների անջատման
այս կետում, շարան-շարան մոտենում ելին հյուսիսից
հայ գյուղի, իսկ այս կողմից Սաղախլի սայլերը: Մի
ժամանակ Ասլան հարյուրապետի տունը շենցնող յերեք
գուռնաչիներից միակ ապրողն իր յեղկար չուխայով,
իսկ նոր վարպետները կոմսոմոլի համազգեստով, յեկել
եյին իրենց կոմսոմոլի այս հաջող տունը զվարթացնելու:

Գյուղացիներից շատերը ձորերը դղրդացնող գուռ-
նաների ձենին ելին սպասում, բայց հնից հիշատակ
մնացած դափ դարկողի դարկերը ցույց տվին, վոր նրա
յեղանակի մեջ անցյալից վոչինչ չի մնացել:

Վարպետներից մեկը, իր իսկ ձեռքով պատրաստած
գործիքը հնչեցնելիս, գուռնայի սպասող գյուղացիները
սայլերի վրա անշարժացան: Իսկ յերբ յերիտասարդ
վարպետը հնչեցրեց իր կլարնետը, թմրած ուղեղները
ցնցվեցին նոր, չլսված յեղանակի ձայնից. բոլորը մի
ակնթարթ մոռացան իրենց անցյալի վշտերը:

Շուան ականջները սրելով կանգնած տեղում քալլ
փոխող իր ձիու՝ Թելլիի մադերն եր շոյում: Բոլորին
կարգադրեց ցած իջնել. ծեր թե յերիտասարդ, բոլորը
սայլերից իջնելով, չրջապատեցին նվազողներին. ծի-
ծաղն ու պարն սկսվեցին:

Շուան ել, Թելլիի սանձը հանելով, դեմի արոտը
քչեց և առաջինը թևերը պարզելով, «կոմսոմոլ» յեղա-
նակը պարեց. կամաց-կամաց անդգալաբար չրջանը սեղ-
ծեց:

Մոլ գյուղացիները ծափ ելին տալիս և ուրախ բացա-
կանչով յուռններով թնդացնում ձորերը:

Այս միջոցին Շուան կանգ առավ սալիտակ մադերով,
բուռն ուրախությունից իրեն յերիտասարդ գղացող մի
ծերունու առաջ:

Բոլորը ծափահարեցին, իսկ ծերունին ամաչեց. նրա
դեմքը մի փոքր կարմրեց:

— Այ բալամ, յես այս յեղանակով չեմ կարող պա-
րել: Յեվ ինդրեց «բուհանի» (պարի հին յեղանակ),
նվազել: Յերիտասարդները ծիծաղեցին, բայց տարի-
քոտները, իրենք ել այս «կոմսոմոլ» յեղանակով պարել
չիմանալով, չգարմացան ծերունու ինդրի վրա:

Յերիտասարդ վարպետը, հեռատես մարդու դատո-
ղությամբ, հին յեղանակներն ել սովորել եր. անմի-
ջապես պարողի պահանջին գոհացում տվեց: Մինչ «բու-
հանին» նվազում եր ու ծերունին պարում, յերիտա-
սարդներից մեկը բացականչեց.

— Այ Նասիր սափ, կրիայի տեմպով ես պարում,—
և նման արտահայտություններով վոզեւորում եր պա-
րողին:

Պարը յերկար շարունակվեց:

— Ժամանակն ուշ ե, — ասաց Շուան, — վերադար-
ձին նորից կպարենք, քյոթմ պետք ե սայլերը համբել,
ուսմ սայլերը քիչ են, նրանք են տալու վարպետների վար-
ձը:

— Վարձն ի՞նչ ե, ընկեր Շուա, — առարկեց յերի-
տասարդ վարպետը:

— Վոչինչ, հանաք եմ անում:

... Ամենքը իրենց սայլերի մոտ դնացին: Ուղտերի
բռնված տեղերում սայլերն համբեցին, քառասուն սայլ
հանձնողը առաջնություն պիտի ստանար: Հայ գյուղը
պատրաստել եր 45-ը, իսկ Շուան իր գյուղից տանում
եր հանձնելու հիսուներկու սայլ:

... Քիչ հետո ցորենի 97 սայլ ճանապարհի վոլոր-
մոլոր յերկայնքով շարան-շարան դեպի կենտրոնն եր
դիմում:

Հոգմը մեզով յերկինքն առնում,
դալարում է բուքը ձյան,
մերթ մանկան պես լաց է լինում,
մերթ վռնում է զերթ դադան.
մերթ վայրենի սուլում պեսպես,
աղմկում է տանիքում,
մերթ ուշացած ճամբորդ, ասես,
լուսամուտն է նա թակում:

Մեր խրճիթը, խարխուլ ու հին,
և՛ մթին է, և՛ տխուր.
Ի՞նչ ես նստել պատի տակին
իմ պառավս՝ եղպես լուռ:
Հոգնե՞լ ես դու փոթորիկի
վռնոցներից խելագար,
թե՞ նիրհում ես քո իլիկի
բզզոցի տակ միալար:

Հոգմը մեզով յերկինքն առնում
դալարում է բուքը ձյան.
մերթ մանկան պես լաց է լինում,
մերթ վռնում է զերթ դադան:

Հ Ա Ր Ց

1. Ի՞նչ համեմատություններ է անում Պուշկինն այս բանաստեղծության մեջ:

Մեզ—մառախուղ.
Մերթ—մեկ-մեկ.
Ձերթ—վորպես.
Խարխուլ—բանդալած.
Նիրհել—քնել.

Խոնավ բանտում պատուհանիս մոտ նստած,
յես նայում եմ ինչպես տխուր ու դարդոտ
արծիվ—ընկերս ազատ ոդում մեծացած՝
աչքիս առաջ վորս է կացում արյունոտ:

Յեվ կացածը դեն գցելով՝ վշտահար
նայում է ինձ, ասես միտքս դուշակած,
աչքով անում, բարձր կանչում անդադար.
«Թռչենք, ընկե՛ր, թող այդ բանտդ անիծած»:

«Մենք բնության ազատ վորդիք՝ համարձակ
թռչենք այնտեղ, ուր կան ամպեր ու լեռներ,
ուր փայլում են ծովի ջրեր կապուտակ,
ուր քամին է միայն մեզ հետ—մեզ ընկեր...»

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ինչո՞ւ յե կալանավորը տխուր ու դարդոտ:
2. Ի՞նչ է ցանկանում նա:
3. Ինչո՞ւ յե կալանավորը բանտն անիծած համարում:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴԱՏԸ

Սաֆրոնովկայի դյուղացիներն աղքատ էյին աղ-
րում: Հողերը քիչ էյին. համարյա անասուններ չէյին
սլահում, վորովհետև կեր չունէյին: Բոլորը մինչև վեր-

Ջին հատիկը, մինչև դարձանի վերջին ծիլն ուտում և ուտեցնում էյին մինչև նորը: Մի կերպ տարեց-տարի քարշ էյին գալիս, բանում էյին աղայի համար, վողորձ մություն էյին խնդրում:

Կար ժամանակ, վոր Սափրոնովկան լավ եր ապրում. եղ են ժամանակն եր, յերբ գյուղացիները խոտահարք ունեյին: Բայց աղան եղ խոտահարքը խլեց: Ինչքան ել գյուղացիները վիճեցին, ինչքան ել դես-դեն ընկան, բան դուրս չեկավ: Աղան ապրում ու հարստանում եր: Իսկ Սափրոնովկան տարեց-տարի աղքատանում եր, հա աղքատանում:

Ամեն տարի գարնանը, յերբ մարդադետինը ծածկվում եր խոտով, և տաք քամին դեպի Սափրոնովկա յեր տանում իր բուրավետ ալիքները, գյուղացիները դուրս էյին գալիս իրենց ծխոտած հյուղերից, մտածկոտ նայում էյին ծաղիկներին խառուարիկ ծովին. նրանց ունեցներն ուռչում էյին—աղահարար ներշնչելով խնձորածաղիկ, առվույտի և դաշտային յերեքնուկի հոտը:

— Ա՛խ, ինչ կլինեի մի թափ տայինք, խոտահարքն ելի մեր ձեռքը գցեյինք...

Ու ամեն անգամ նույն անջնջելի միտքը վառում եր գյուղացիներին:

Իսայ Շկվարնյովը վերադարձել եր գինվորական ծառայությունից: Նա շատ սիրում եր իրենց գյուղը, ու ցավում եր, յերբ տեսնում եր գյուղի ցեխն ու աղքատությունը:

Նա գյուղացիներին համոզեց խոտահարքի վերաբերմամբ, վոր մի անգամ ել բախտները փորձեն: Իսայը զնաց քաղաք: Յերկար ժամանակ ենտեղ ես ու են կողմ ընկավ: Սկզբում ամեն բան լավ եր գնում: Բանը դատարան հասավ: Իսկ դատարանում թուղթ սլահանջե-

ցին, վոր իրոք մի ժամանակ Սափրոնովկան ե յեղել խոտահարքի տերը: Եղպիսի թուղթ չերևաց: Յեվ բանը կրկին աղայի ոգտին վերջացավ:

— Խոտահարքը ձերն ե, խոսք չկա,—ասում էյին գյուղացիներին,—բայց միայն թե որենքով, առանց թղթի չի կարելի ձեռ տալ:

— Դե վոր խոտահարքը մերն ե, են ե առանց թուղթ ել կհնձենք,—վորոչեցին իրենք գյուղացիները:—Ել չենք ուզում համբերել: Ամբողջ համայնքով կգնանք, կպառկենք դետնին ու կմեռնենք:

— Ի՞նչ կա վոք,—ասաց Իսայը,—յերբ համայնքը վորոչեց, յես ել նրանց հետ: Թե փորձանք կղա, բոլորիս միասին կղա, թե կմեռնենք, միասին կմեռնենք:

Ամռան պայծառ առավոտ եր: Սափրոնովկայում ենտեղ-ենտեղ իրար ձայն էյին տալիս ձմռան սովից աղատված սակավաթիվ աքաղաղները: Վորոչված եր եղ որը խոտահարքը հնձել: Նախաճաշից հետո գյուղացիներն իրար յետևից, գերանդիներն ուսներին, խմբովին շարժվեցին դեպի խոտահարքը: Կանայք ու յերեխաները վազեցին նրանց յետևից:

Խոտահարքը դեռ ննջում եր. գիշերվա ցողի վրա արեն ենտեղ-ենտեղ խոտերի մեջ կապույտ ու կարմիր կայծեր եր վառում: Առաջինն սկսեց Իվան պապը, նրա յետևից Իսայը, իսկ նրա յետևից, յերկար շարքով—մյուսները: Գերանդիների համաչափ բզզոցի և ընկնող խոտի դողացող խշշոցի ձայնը բռնեց ամբողջ դաշտը: Մինչև կեսօր հնձեցին: Արեգակն այրում եր անասելի: Հնձած խոտն արագ թառամում և առատությամբ քաղցր բուրմունք եր տարածում: Իսկ այդ ժամանակ գյուղի ճանապարհին մութ ու անորոշ փոշու ամպ բարձրացավ:

— Տղերք, յեկող կա,—աղաղակեց մի կին, վոզ ամենից առաջ եր նկատել:

— Թող գա,—ասաց Իսայր:

Մի հանրակառք և յերկու ձիավոր ճանապարհից դեպի խոտհարքը ծովեցին:

— Վոստիկանապետն է,—ճչացին կանայք:

Հանրակառքը մոտեցավ հնձվորներին: Ենտեղից դուրս թռան պրիստավն ու կառավարիչը:

— Եհե՛յ, լսեցե՛ք, մի բան եմ ասում,—ասաց պրիստավը, մոտենալով գյուղացիներին:

— Եդ ի՞նչ եք անում, ուրիշի խոտհարքն եք հընձո՞ւմ:

Գյուղացիները լուռ, առանց կանգ առնելու, շարունակում էին հնձել:

— Են կողմը կա՛ց, ձե՛րդ աղնվություն,—հանգիստ ասաց Տրուշկան և գերանդին պատեց: Վոստիկանապետը հաղիվ կարողացավ յետ թռչել, և գերանդին սուլելով—նրա վոտներն մոտ հյուսիսի խոտի մի լաս փռեց:

— Են կողմը կա՛ց, ձե՛րդ աղնվություն,—կրկնեց հաջորդ գյուղացին ու մի նոր լաս փռեց վոստիկանապետի վոտների մոտ:

Նա բոլորովին չփոթվեց:

— Ե՞ս ինչ ե: Եղպես հա՛, խառնակչությո՞ւն: Անասուհնե՛ր, դե՛ն գցե՛ք գերանդիները: Ձեզ եմ ասո՞ւմ, թե՞ չե:

Բայց գյուղացիները շարունակում էին հնձել:

Վոստիկանապետի սիրտն ահ ընկավ: Նա գլխարկը փերցրեց, թաշկինակով քրտինքը սրբեց: Սղմուկի վրա մոտ վազեցին կանայք:

— Լսեցե՛ք, տղերք,—սկսեց խոսել կառավարիչը:

— Լավ բան չեք անում: Ախր սա որը ցերեկով թալան է: Դուք ձեզ վրա մտածեցե՛ք. ի՞նչ կասե՛ք, որինակի համար, յեթե ձեր բակը մտնեմ և ինչ վճիռ դուրս գա—վերցնեմ, տանեմ:

— Դնա տա՛ր,—ճչաց Դարիա հորաքույրը,—միևնույն է, այնտեղ բան չես գտնի:

— Յես դիտեմ, թե եդ ով է ձեզ խառնում,—նորից աղաղակեց վոստիկանապետը,—եդ բոլորը Իսայ Շրկվարնյովն է անում: Յես վաղուց եմ նրան աչքիս տակն առել:

— Են կողմը կա՛ց, ձե՛րդ աղնվություն,—ահեղի ձայնով դուռաց Լուկան և քիչ մնաց վոստիկանապետի վոտներն ել հնձի:

— Դե լավ, սպասեցե՛ք դեռ, տեսե՛ք յես ձեզ ի՛նչ կանեմ,—գայրացած ֆլչացրեց վոստիկանապետը և արագ դնաց դեպի հանրակառքը:

— Վորտեղից յեկել ես, ելի դենը դնա՛,—աղաղակեց մեկը նրա յետևից: Դրանից հետո յերեք որ ել հընձում էին գյուղացիները: Նրանք համարյա չէին հանդըստանում, վոչ ուտում էին, վոչ խմում: Գրիշեր-ցերեկ դաշտումն էին անցկացնում. իրենց մոտ խրճիթները, ուր կյանքն այնքան դժվար եր ու գաժան, մոռացել էին: Նրանք կարծես հարբել էին աշխատանքից, հյուսիսի խոտի առատ բուրմունքից, եդ բոլոր հարստությունից: Իսկ չորրորդ որը, կեսորին, դաշտում տարածվեց մի ահաբեք ճիչ,—«դինվորները գալիս են»: Կարծես խոտհարքը դողոց ընկավ: Կանայք խոտ չուռ տալը դադարեցրին. գյուղացիներն անհանդիստ նայում էին ճանապարհին, վաղեմի շարժվում եր մութ պատը:

Ամբողջովին կարմրած, չոգից չնչապառ, գյուղացիների առջև կանգնած եր նահանգապետը:

Նրանք ել չէին հնձում, այլ չուռ ամբոխ դարձած՝ կանգնել, մոայլ կերպով նայում էին դինվորներին և ճիպտաներ բարձած սայլերին, վորոնց շուրջը դեռ-դենն էին ընկնում վոստիկանները:

— Ծուռնի՛, — գաղաղած դուռում եր նահանգապետը,—սրկանե՛ր,—խառնակիչնե՛ր: Ծուռնի՛ ասում եմ:

Ամբոխը մի թեթև տատանվեց, բայց վոչ վոք տեղից չշարժվեց:

— Կշարդեմ, ավազակներ,— նորից աղաղակեց նահանգապետը:

Ամբոխը նորից շարժվեց: Առաջ դուրս յեկավ Իսայր:

— Թույլ տվեք մի խոսք ասել,— սկսեց նա հարգանքով և հաստատուն տոնով: Մենք ավազակներ չենք, մենք մեր բարիքի համար ենք տանջվում: Խոտհարքը շատ հնուց մերն էր, աղան անիրավ կերպով տիրացավ: Դատեցե՛ք մեզ, բայց որենքով:

— Լռի՛ր,— աղաղակեց նահանգապետը: Եստեղ մոտ թռավ վոստիկանապետը և նրա ականջին ինչ-վոր փսփսաց:

— Հա՛... ուրեմն եդ դու յե՞ս Իսայ Եկվարնյովը: Եդ դո՞ւ յես դատ ուզում: Ա՛յ քեզ դատարան,— դադադած դուռաց նահանգապետը, ձեռքը յետ տարավ և ինչքան ուժ ուներ, խիեց Եկվարնյովի յերեսին:

Կարմիր, լերդ արյունը ներկեց դյուղացու մորուքն ու կուրծքը: Նա կռացավ և արյան հետ թքեց յերկու անգամ:

— Ծեծել, բոլորին ծեծել,— աղաղակում էր նահանգապետը: Զինվորները չըջապատեցին դյուղացիներին:

Ծեծի տակ առաջինն Իսայը պռակեց: Սոսկալի ուռած, կապտած դեմքով, առանց մի խոսք ասելու, նա մերկացավ և դետին ընկավ:

— Սրիկա՛,— առամների արանքից առաց նահանգապետը:— Հը՛, հիմա դա՞տ ես ուզում, անասո՛ւն: Ա՛յ, հիմա յես քեզ դատ ցույց կտամ,— թան ծամելուց կդցեմ քեզ... սկսե՛լ,— աղաղակեց նա վոստիկաններին:

Ծեծողները յերկու վոստիկան եյին. ծեծում եյին նաչակով, ծոր տալով, մի առանձին դադանային բավա կանուխամբ:

Իսայը չէր աղաղակում ու չէր հառաչում, միայն ամեն անգամ, յերբ դալար ճիպոտը իր վրա էր նրա մարմնի մեջ, ցնցվում էր: Վերջը նա չէր ել ցնցվում:

— Նա հալից ընկավ, ձե՛րդ աղնվություն,— առաց վոստիկանը հիմար ժպտով:

— Դե՛ն չարտեցե՛ք դրան...— հրամայեց նահանգապետը,— հետեյալին բե՛ր... ա՛յ, են յերկարամաղ ծերունուն...

Վոստիկանները բռնեցին Իվան պապին: Գյուղացիների ամբոխում հառաչանքի նման բան լսվեց: Դեմենտիի դեմքը մուգ կապույտ գույն ստացավ, իսկ ներքևի չրթունքը դողաց:

— Բա պապին ինչո՞ւ համար,— բարձրաձայն առաց նա:— Եղպես որենք չկա, վոր ծերունիներին ծեծեն: Մարդասպաններ:

Վերջին խոսքերը նրա կոկորդում մնացին: Վոստիկանները նրա բերանը փակեցին և մի կողմ տարան: Լուսթյուն տիրեց: Բարձրահասակ, գեղեցիկ, սպիտակ միրուքը կրծքին փռված Իվան պապը կանգնած էր նահանգապետի առջև և նայում էր նրան իր սլաշմառ, հանդիստ աչքերով:

— Հիսուն հատ հուժկու հարված սրան,— աղաղակեց նահանգապետը:

Վոստիկաններն իրարով անցան, անկանոն կերպով սրկեցին նրա դոտին, ու նորից դաշտում տարածվեց հարվածների սուլոցը. Իվան պապը չդիմացավ և հառաչում էր:

— Հը՛,— չարախնդությամբ Ֆշչացնում էր նահանգապետը,— դուր չի դալի՞ս... դե, հապա ե՛լի ավելացրեք:

Իվան պապն արդեն վոչ թե հառաչում, այլ ձայնով աղաղակում էր, յերեսայի նման հեկեկում էր և յեղունդներով հոդը ճանկատում:

Ծեծը շարունակվեց մինչև յերեկո, և շատ քիչ սափ-

րոնովցիները յեղան, մօր ծէծ չկերան: Արդէն ուշ գիշեր
եր, և նահանգապետը գնաց կալվածքում ճաշելու:

Դյուղացիներէից յերեքին կիսամեռ գցեցին սայլը և
պահակներով ուղղակի հիվանդանոց տարան, հնդին
ձերբակալեցին և աքսորեցին, իսկ մյուսներին թողին
տները դնալու:

Զինվորները գնացին, և դաշտը լռեց: Դեղին վեր-
ջալույսը հանգչում էր յերկնքում: Իսկ Սաֆրոնովկան
թագնակեց իր գորշ խցերում, խուլ հառաչեց, գանդատ-
վելով իր թշվառ վիճակից:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Վո՞ր ժամանակ կարող եր լինել այս դեպքը:
2. Գանի՞ մասի կարող եք բաժանել այս պատմվածը և ի՞նչ
վերնագիր կդնեք յուրաքանչյուրին:

Առվույստ—յոնջւտ.

Ահաբեր—վախ բերող, վախ աղդող.

Գաղաղած—կատաղած.


ՀՈՒՆՎԱՐԻ ԻՆՆՔ

I

— Մեզ կարմիր դրոշակ պետք չէ՛, — ձայն տվեց
ցուլցին մատնակցողներից մեկը:

Դղակը շարժելով՝ նա գնում էր ամբոխի գլուխն
անցած և որորվում մարդկանց աչքի առջև:

ՎԵՐՆԱԳԻՐ ԵՎ ԴՆՆԵՐՆԵՐ



— Մենք մեր հոր մոտ ենք գնում...

— Նրան հավատո՞ւմ ենք...

— Կարմիր գույնը մեր արյան գույնն է, ընկերներ, — ամբողջի վրայով գոռաց առանձին, հնչուն մի ձայն:

— Ձկա մի ուժ, վոր ազատի ժողովրդին, բացի ժողովրդի իր ուժից:

Յերբ ամբոխը փողոցներից թափվեց գետափ, կամրջի մոտքերը, և տեսավ, վոր զինվորները կտրել են կամուրջը տանող ճանապարհը, — յետ չկանգնեց: Ձին-վորների կերպարանքի մեջ վոչինչ սպառնալի բան չկար: Նրանք թռչկոտում էին, տաքացնում էին սառ-չող փոտները, թափ էին տալիս, հրում էին իրար... Մեկը կարեկցող ձայնով ասաց.

— Ձինվորները մրսում են...

— Հաա'...

— Բայց պետք է կանգնեն:

— Ձինվորները կարգը պահելու համար են:

— Հանդիստ, տղերք... Ձգա՛ստ:

— Յե՛տ դնացե՛ք, — լավեց սպայի ձայնը:

Մի քանիսը յետ նայեցին, նրանց յետևում խուռն բազմություն կար: Մի քանի մարդ առաջ անցան և սպիտակ թաշկինակները ծածանելով՝ ընդառաջ գնացին սպաներին: Գնում էին և գոռում.

— Մենք գնում ենք մեր թաղավորի մոտ...

— Յե՛տ դարձե՛ք: Յես կհրամայեմ կրակել'...

— Կրակե՞լ: Ձե՛ս համարձակվի'...

Իրար հետ բացականչություններ փոխանակելով և յետևից յեկող ամբոխի ճնշմանը յենթարկվելով՝ մարդիկ առաջ շարժվեցին:

II

Նրանք, վոր գնում էին թաշկինակներով, ճամբաները ծռեցին, կորան ամբոխի մեջ: Բայց առջևում բոլորը — տղամարդիկ, կանայք, դեռահասները նույնպես ծածանում էին սպիտակ թաշկինակները:

— Այն ի՞նչ կրակոցներ են: Ինչո՞ւ համար է, — շուրջ խոսում եր մի ալևոր մարդ: Նրանք չեն թողնում կամուրջն անցնել... Ուրեմն ուզում են, վոր սառցի վրայով անցնենք:

Յեվ հանկարծ ողի մեջ ինչ-վոր մի բան ցրիվ յեկավ, զարկվեց ամբոխին տասնյակ անտեսանելի մրտադիրների պես: Մի վայրկյան բոլոր ձայները հանկարծ կարճես մեռան: Մարդկային դանդաղածը շարունակում եր հանդարտ առաջ շարժվել:

— Դատարկ փամփուշտներ են, — խոսեց մի ձայն:

Բայց այս ու այն կողմից լավեցին տնքոցներ, ամբոխի վոտների տակին թավալվեցին մի քանի մարմիններ...

Յեվ դարձյալ հրացանների համազարկի ճայթյուններ, ավելի բարձր, ավելի անհավասար:

Մարդիկ յերկու-յերկու, յերեք-յերեք վայր էին թափվում, նստում էին գետնի վրա, փորները բռնում, դետուղեն էին փախչում կաղալով, սողում էին, և ամեն կողմ ձյունի վրա առատ պուֆլում էին պայծառ, կարմիր բծերը:

III

Թաղավորի ընտկարանի շուրջն ամուր շղթա կաղ-մած՝ կանգնած էին զինվորները: Պալատի պատուհան-ների տակ տեղավորվել եր ձիավոր զորքը:

— Յրվեցե՛ք, պարոններ, — ազաց սպան:

— Ինչո՞ւ մեզ չե՛ք թողնում, — հարցնում էին նրան:

— Ո՞ւր:

— Թաղավորի մոտ:

Սպան մի ըոսպե կանգ առավ և հետո բացականչեց.

— Յես ձեզ առում եմ ախր՝ նա չկա:

— Թաղավոր չկա՞:

— Հա՛, ելի: Ձեզ ասված է՝ չկա, դուք ել հեռացե՛ք:

— Թագավորը բոլորովի՞ն չկա,— համառորեն հարց ու փորձ եր անում հեղնող ձայնը:

Սպան դարձյալ կանգ առավ, բարձրացրեց ձեռքը:

— Հրամայում եմ ցրվել,— ասաց սպան ու սուրը հանեց պատյանից:

Ցրվել անհնարին եր, ամբոխը խիտ լցվել եր վողջ փողբիկ հրապարակը, իսկ փողոցներից նրա թիկունքում ժողովուրդը դալիս եր, հա դալիս...

Հանկարծ ձայն տվեց փողի չարագուշակ յերգը...

Ձինվորները չարժեցին հրացանները, նշան բռնեցին և բոլորը սառեցին միորինակ դիք կեցվածքում՝ սվինները մեկնած դեպի ամբոխը...

Մեկի ձայնը բարձր, սարսափով դուռաց.

— Ի՞նչ եք անում, մարդասպաններ...

Սվիններն ուժգին ցնցվեցին: Մարդիկ ընկան: Գետինն արյունով ներկվեց:

IV

Հանկարծ փողոցի միջով անցավ անակնկալ մի իրարանցում:

— Վո՞րտեղ, վո՞րտեղ:

— Կղզում:

— Ձենքի մազազինը ձեռ են դցել...

— Կտրել են հեռադրասյուները, բարիկադներ են դրել:

— Շատվո՞ր են:

— Շատվոր:

— Ա՛խ... գոնե այնտեղ վրեժը հանեյին:

Ամբոխի գլխավերեքը բռնեց մի մարդկային կերպարանք, և մթնաչաղի մեջ վորոտաց կոչը.

— Ո՞վ է կամենում կռվել ազատության համար, ժողովրդի համար, մարդու կյանքի և իրավունքի համար, աշխատանքի համար: Ով կամենում է մեռնել ապագայի համար, թող դա ողնության:

Ամբոխի միջից մարդիկ դուրս յեկան և գնացին խոսուղի մոտ: Յեվ փողոցի մեջ կազմվեց աղատասեր, անձնուրաց մարդկանց մի սեղմ բանակ:

Սպառնալ—վախեցնել.

Կարեկցել—բռնել մեջ մտնել, ուրիշի կարիքն զգալ.

Չարագուշակ—չար բան գուշակող.

Անակնկալ—անսպասելի.

ՄԱՅԻՍԻ 1-Ը

Մայիսի մեկն եր:

Փողոցի անկյունի յետևը, նեղ նրբափողոցում հավաքվել եր ամբոխը, մոտ հարյուր հոգի. ամբոխի խորքում հնչում եր Վեստվիլիովի ձայնը:

— Մեզանից քամում են մեր արյունը, ինչպես վոր խաղողից,— անձոռնի խոսքերն ընկնում եյին մարդկանց գլուխներին:

— Ճի՛շտ է,— մեկից սլատասխանում եյին մի քանի ձայներ:

— Քաջ տղան աշխատում է,— ասաց Սնդրեյը,— գնամ ողնեմ:

Նա կռացավ և, մինչ Պավելը կկարողանար կանգնեցնել նրան, մտավ ամբոխի մեջ:

Հնչեց նրա յերգեցիկ ձայնը.

— Ընկերներ: Ասում են վոր աշխարհիս վրա զանազան ժողովուրդներ են ապրում՝ հրյաներ ու գերմանացիներ, անգլիացիք ու թաթարներ: Իսկ յես՝ դրան չեմ հավատում: Կա միայն յերկու ժողովուրդ, յերկու ցեղ՝ հարուստներ ու աղքատներ: Մարդիկ տարբեր կերպով են հագնվում ու տարբեր խոսում: Իսկ նայենք, թե ինչպես են հարուստ ֆրանսացիները, գերմանացիները, անգլիացիները վարվում բանվոր ժողովրդի հետ

և այն ժամանակ կտեսնենք, վոր նրանք բանվորի համար բաշխուղուկներ են, վոսկորը նրանց կոկորդը խրվի:

Ամբոխի մեջ ծիծաղեցին:

— Իսկ յեթե մյուս կողքից մտիկ տանք, այն ժամանակ կտեսնենք, վոր թե՛ Փրանսացի բանվորը, թե՛ թաթարը, թե՛ թուրքը, ճիշտ այնպիսի շան կյանքով են ապրում, ինչպես և մենք, ուս բանվոր ժողովուրդը:

Փողոցից ավելի շատ ժողովուրդ էր մոտ դալիս, մեկը մյուսի յետևից մարդիկ լուռ, վզերը յերկարացրած, վոտերի մատերի ծայրերին բարձրացած, ներս ելին խոթվում նրբափողոցի մեջ:

— Վոստրիկանությունը, — դուռաց մեկը:

Փողոցից դեպի նրբափողոցը՝ ուղիղ մարդկանց վրա արշավում էին, մտրակները շարժելով, յերկու ձեռք վոր վոստիկաններ և դուռքուում:

— Յրվե՛ք:

— Այդ ի՞նչ խոսակցություններ են:

— Ո՞վ էր խոսում:

Մարդիկ հոնքերը կիտեցին, դժկամակությամբ ճանապարհը դիմելով ձիերին: Վոմանք բարձրացել էին ցանկապատերի վրա, հնչում էին ծաղրանքները:

— Խոզի ձագերին նստեցրել են ձիերի վրա, նրանք էլ կոնչում են, — կանչում էր մեկը հնչուն առողջ, ձայնով:

Մոնչաց չչակը, կուլ տալով մարդկային ձայներն իր սև հնչյունով: Ամբոխը ցնցվեց. մի բոպե ամեն ինչ մեռավ, լարվեց ուշադիր, և շատ դեմքեր դունատվեցին:

— Ընկերներ, — թնդաց Պավելի ձայնը, հնչուն և ուժգին: Չոր, տաք մշուշն այրեց մոր աչքերը, և նա հանկարծակի ամրացած՝ մի շարժումով կանգնեց վորդու յետևը: Բոլորը շուտ յեկան դեպի Պավելը, չրջապատելով նրան, ճիշտ այնպես, ինչպես յերկաթի մանրիկ կտորները՝ Մադնիտին:

— Յեղբայրներ: Ահա հաստի մեր հրաժարման ժամն այս կյանքից, վոր լի յե աղահուլթյունով ու խավարով. մարդկանց վրա դործադրվող բռնության այս կյանքից, մի կյանքից, ուր մեզ համար տեղ չկա, ուր մենք՝ մարդ չենք:

Նա լռեց, և բոլորն ել լուռ էյին, ավելի մոտ-մոտ ու խիտ-խիտ հավաքվելով նրա մոտ: Մայրը նայում էր նրա դեմքին և տեսնում էր միայն աչքերը, վորոնք հպարտ էյին ու համարձակ, այրող...

— Ընկերներ, մենք վորոշել ենք բաց կերպով հայտարարել այսօր, թե ովքեր ենք մենք. մենք այսօր բարձրացնում ենք մեր դրոշակը, բանականության, ճշմարտության, աղատության դրոշակը:

Ճերմակ ու յերկար փայտի ձողը նշմարվեց ոդում, խոնարհվեց, թափնվեց ամբոխի մեջ. մի բոպեյից հետո վեր նայող մարդկային յերեսների վրայով կարմիր թրուչունի պես ծածանվեց բանվոր ժողովրդի դրոշակի լայն քաթանը:

Պավելը ձեռքը վեր բարձրացրեց, ձողն որորվեց, այն ժամանակ տասնյակ ձեռքեր մեկից բռնեցին սպիտակ հարթ փայտը, և նրանց մեջ կար մոր ձեռքը:

— Կեցցե՛ք բանվոր ժողովուրդը, — դուչեց Պավելը:

Հարյուրավոր ձայներ արձագանք տվին նրան դղրդացող կանչով:

— Դե, յե՛լ, բողոքի՛ր, բանվոր՝ դասակարգ...:

— Ընկերներ, — հնչեց Պավելի ձայնը: — Զինվորներն ել այնպիսի մարդիկ են, ինչպես մենք: Նրանք մեզ չեն խփի: Յեվ ինչո՞ւ համար խփեն: Նրա համար, վոր մենք բերում ենք ամենքին հարկավոր ճշմարտություններ: Չե՞ վոր այդ մեր ճշմարտությունն է և նրանց ել հարկավոր ե... Նրանք դեռևս այդ չեն հասկանում, բայց արդեն մոտ է ժամանակը, յերբ նրանք կկանգնեն մեզ հետ կողդ-կողքի... Յեվ վորպեսզի նրանք ավելի շուտ հասկանան մեր ճշմարտությունը, մենք պետք է ընթանանք: Առաջ ընկերներ: Մի՛շտ առաջ:

Պավելի ձայնը հնչում էր ամուր, խոսքերը ղողան-
ջում էյին ողի մեջ հատիկ-հատիկ ու պարզ, բայց ամբո-
խը քայքայվում էր: Մարդիկ մեկը մյուսի յետևից դե-
պի աջ ու դեպի ձախ տներն էյին քաշվում, թիկն էյին
տալիս ցանկապատերին:

Մայրն անթարթ նայում էր: Զինվորների գորշ ա-
լիքը տարուբերվեց և համաչափ, սառն առաջ շարժվեց:
Մայրը, լայն քայլերով ավելի մոտ կանգնեց վորդուն:
— Շարքով գնա, ընկե՛ր,— խիստ կանչեց Պավե-

ԼԵ:
Անդրեյը յերգում էր, ձեռքերը նա դարսել էր մեջ-
քին, գլուխը վեր բարձրացրել: Պավելը հրեց նրան ու-
սով և նորից կանչեց:

— Շարքով: Իրավունք չունես: Առջևում դրո-
շակն ե:

— Յրվե՛ք — ե՛ցե՛ք,— բարակ ձայնով գոռում էր
փոքրիկ սպայիկը, շարժելով սպիտակ թուրը:

Ավելի ու ավելի մոտենում էյին իրար կարմիր դրո-
շակի մարդիկ և գորշադույն մարդկանց սերտ շղթան:
Աստիճաբար յերևում էյին գինավորների դեմքերը — լայն փռ-
ված ամբողջ փողոցով, ինչպես մի ցեխադեղինադույն
նեղ շերտ: Ուղղվելով դեպի մարդկանց կրծքերը, դեռևս
նրանց չկպած, սվինները կտրում ու բաժանում էյին
ամբոխից մեկը մյուսի յետևից, քայքայելով նրա շաբ-
քերը:

Մայրը լսեց իր յետևում փախչողների դուրիյունը:
Խեղդված, տազնադալից ձայները գոչում էյին.

— Յրվե՛ք, աղե՛ք:

— Դեպի յետ, Պավլո՛ւխա:

— Դե՛ն զցիբ դրոշակը, Պավե՛լ,— մռայլ ասաց

Վեսովչիկովը: — Տո՛ւր այստեղ, յետ կպահեմ:

Նա ձեռքով արագ բռնեց փայտե ձողը, դրոշակը
յետ թեքվեց:

— Թո՛ղ,— կանչեց Պավելը:

Դրոշակի տակ կանգնած էյին մոտ քսան մարդ, վրձ

ավելի. բայց նրանք կանգնել էյին ամուր: Մայրը տար-
ված էր յերկյուղի զգացմունքով և անորոշ ցանկություն
ունեի ինչ-վոր բան ասելու նրանց:

— Ապա վերցրե՛ք այդ նրանից,— լավեց բարձրահա-
սակ ծեր գինավորականի ձայնը:

Ձեռքը յերկարացնելով, նա ցույց տվեց դրոշակը:

Պավելի մոտ ցատկեց փոքրիկ սպայիկը, ձեռքով
սլինդ բռնեց կոթը, ճղճղան ձայնով գոռաց.

— Թո՛ղ:

— Ձեռքերդ հեռո՛ւ,— բարձր ասաց Պավելը:

Դրոշակը կարմիր դողդողում էր ողում, խոնարհ-
վելով դեպի աջ ու դեպի ձախ, և նորից կանգնեց ուղիղ.
սպայիկը յետ գլորվեց, նստեց գետնին:

— Վերցնել դրանց,— խուլ հաչեց ծերունին, վոտ-
քը դետնին խփելով:

Մի քանի գինավոր առաջ թռան: Նրանցից մեկը շաբ-
թեց հրացանի կոթը՝ դրոշակը ցնցվեց, վայր խոնարհ-
վեց և անհետացավ գինավորների գորշ խմբակի մեջ:

— Ե՛խ,— վշտահար կանչեց մեկը:

Յեվ մայրն էր գոռում գազանային, վրոնացող
ձայնով: Բայց նրան վորպես պատասխան՝ գինավորների
ամբոխի միջից հնչեց Պավելի վճիտ ձայնը.

— Յտեսուեթյո՛ւն, մայրի՛կ ցտեսուեթյո՛ւն:

Մորը հրեցին կրծքին խփելով: Աչքերին իջած մշու-
շի միջից իր առաջ նա տեսավ սպայիկին, վորի դեմքը
կարմիր էր, սաստիկ լարված, և գոռում էր նա մոր
վրա.

— Կորի՛, պառա՛վ:

Մայրը նայեց նրան վերից վար, նրա վոտքերի մոտ
տեսավ դրոշակի փայտե ձողը, յերկու կտոր արած,
վորոնցից մեկի վրա դեռևս մնացել էր կարմիր կտորի
մի պատառ: Կռանալով, մայրը վերցրեց այն: Սպան
խեց փայտը նրա ձեռքից, նետեց այն մի կողմ և, վոտ-
ները դետնին խփելով, գոռաց.

— Կորի՛, ասում եմ...

Ձինժորներ չղթայի միջից բորբոքվեց ու ծորաց
յերգը:

Դե յե՛լ բողոքի՛ր, բանժոր դասակա՛րդ...

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Վո՞ր ժամանակաշրջանն է պատկերացված այստեղ:
2. Ի՞նչ միջոցներով եր աշխատում ցարական իշխանութիւնը խեղդել հեղափոխական շարժումները:

ՊԵՊԵ

1.

Պեպեն տասը տարեկան է. նա նիար է և վտիտ,
արագաչարժ, ինչպես մողեսը:

Արեւածագից մինչև մայրամուտ նա ցատկոտում է
ծովափանյա քարերի վրայով ու ամեն բոպե լսվում է
նրա չընդհատվող ձայնը.

«Իտալիան գեղեցիկ է,

Ի՛մ Իտալիան»:

Ամեն ինչ Պեպեյին զբաղեցնում է—գետակի
պես հողի վրա՝ փոված ծաղիկները, քարերի միջի մո-
ղեսները, այգիների ու պարտեզների թռչունները:

Շա՛տ հետաքրքիր դեպքեր կարելի չեն պատմել Պե-
պեյի մասին: Մի անգամ մի տիկին Պեպեյին հանձնա-
րարեց նվեր տանել ընկերուհուն մի զամբյուղ խնձոր
իւր այգուց.

— Մեկ սուրտ կվատտակես,— ասաց տիկինը.—
բեղ փնտռ չի տա.

Պեպեն մեծ բաժականութեամբ զամբյուղը դրեց
գլխին ու զնաց: Սուրտի յետեից միայն յերեկոյան յե-
կավ:

— Դու հեչ չեյիր շտապում,— ասաց տիկինը:

— Բայց և այնպես, թանկագին տիկին, հոգնե-
ցի,— պատասխանեց Պեպեն:— Ձե վո՛ր տասից ավելի
եյին:

— Ինչպե՞ս. զամբյուղը լեփ չեցուն մի տա՛ս-
նյակ,— դռնեց զարմացած տիկինը.

— Տղանե՛րը... տիկին.

— Իսկ ի՞նչ յեղան խնձորնե՞րը:

— Սկզբում տղաները՝ Միկելը, Ջովանին...

Տիկինն սկսեց բարկանալ. նա բռնեց նրա ուսերից և
սկսեց թափահարել:

— Պատասխանի՛ր ինձ, դու խնձորները տարա՞ր:

— Մինչև հրապարակը, տիկին. դուք ինձ լսեցե՛ք,
թե ինչպես լավ եյի յես ինձ պահում. սկզբում վոչ մի
ուշադրություն չեյի դարձնում նրանց ծաղրանքներին.
յես տիկնոջ համար պատրաստ եյի համբերել մինչև
վերջ: Բայց յերր նրանք սկսեցին ծիծաղել իմ մոր վրա—
ը՛հը... մտածեցի յես. դա ձեզ եծան չի նստի: Յես
զամբյուղը վայր դրեցի և պետք եր տեսնել, թե ինչպես
չեչտակի և ճարպկորեն կարկտի պես հարվածում եյի
այդ ավաղակներին,— դուք, վոր այնտեղ լինեյիք շատ
կծիծաղեյիք:

— Նրանք թուցրի՞ն իմ խնձորները,— գոռաց կինը:

Պեպեն հառաչելով ասաց.

— Վո՛չ, վո՛չ. տղաներին չդիպած պտուղները
փչրվեցին պատին դիպչելով. իսկ մնացածներն ել իմ
հաղթանակից հետո, յերր հաչովեցինք, միասին կե-
րանք:

Տիկինը շարունակում եր գոռալ և հայհոյել, ամեն
տեսակ անեծքներ թափելով Պեպեյի գլխին: Պեպեն
ուշադրութեամբ լսում եր նրան ու մեկ մեկ ել լեղվով
ծլկացնում, ասելով.

—Ո՛ր, ինչե՞ր է ասում, ինչպի՛սի խոսքեր:

Իսկ յերր տիկինը հեռացավ, Պեպեն նրա յետեից
ասաց.

— Բայց, ճշմարիտ, դուք այդ չափ չեյիք դայրանա
և անհանգստանա, յեթե տեսնեյիք, թե ձեր այգու սի-
րունիկ պտուղներով վորքա՞ն չեչտակի եյի հարվածում
ներանց կեղտոտ գլուխներին: Ա՛խ, յեթե դուք տեսնե-
յիք, գուցե խոստացած մեկ սուղոյի փոխարեն յերկուսը
կտայիք:

Գաղաղած տիկինը չկարողացավ հասկանալ հաղթո-
ղի համեստ հպարտութիւնը, շարունակեց սպառնալ
բռունցքով:

2

Պեպեյի քույրը, վոր նրանից մեծ էր, բայց վոչ
խելոք, ծառայութեան մտավ. հարուստ ամերիկացու
սենյակներն էր մաքրում: Կարճ ժամանակում լավ
սնունդ ստանալու հետեանքով, նա կարմրեց, առողջ
դեմք ստացավ:

Մեկ անգամ յեղբայրը հարցրեց նրան.

— Դու ա՞մենն որ ես ուտում:

— Յերկու, յերեք անգամ. յեթե ցանկանամ՝ ել ա-
վելի, — հպարտ-հպարտ պատասխանեց քույրը:

— Գոնե ատամներդ խնայիք, — խորհուրդ տվեո,
յեղբայրը, — ապա մտածեց ու ասաց.

— Շա՞տ հարուստ ե քո տերը:

— Նա՞. յես կարծում եմ ավելի, քան թագավորը:

— Ե՛հ. հիմարութիւններ դուրս տալը թողնենք
հարեաններին: Դու ես ասա, քա՞նի անդրաւարտիք ու-
նի տերդ:

— Դժվար ե ասել:

— Տա՞սը.

— Գուցե ել ավելի:

— Գնա և մեկը բեր ինձ տուր, բայց վոչ շատ
յերկարը, — ասաց Պեպեն:

— Ինչա՞ւ:

— Դու չե՞ս տեսնում, թե իմն ինչ գրութեան ե:

Դժվար էր տեսնել, վորովհետեւ նրա անդրաւարտի-
քի հետքերից շատ քիչ բան էր մնացել:

— Ծիչոտ ե, — համաձայնվեց քույրը, — Դարեւ վոր
ե քեզ հագնվել:

Բայց նա կարող է մտածել, վոր մենք գողացել ենք:
Պեպեն ազդեցիկ ձայնով ասաց.

— Չպետք ե ուրիշներին մեղանից հիմար համա-
րել:

Յերբ շատից մի քիչ վերցնում են, դա դեռ գողու-
թիւն չե, այլ դա նշանակում ե բաժին հանել:

— Ե՛խ. դա յերդ ե. չեր համաձայնվում քույրը,
սակայն Պեպեն շատ շուտ համոզեց նրան: Յեվ յերբ
քույրը խոհանոց բերեց մի լավ անդրաւարտիք, վոր
մի քիչ յերկար էր Պեպեյի ամբողջ մարմնից, Պեպեն
խսկույն գլխի ընկավ, թե ինչ պիտի անել.

— Մի գանակ տուր, — ասաց նա.

Նրանք յերկուսով ամերիկացու անդրաւարտիքը
արագորեն յերեխայի կոստյում դարձրին: Դուրս յեկավ
մի քիչ լայն, բայց շատ հարմար մի պարի, վորը կարելի
յեր թեթեւով կապել ուտերին, իսկ թւերին շատ լավ
փոխարինում եյին գրպանները:

Նրանց խանդարեց տիկինը, վորը խոհանոց մտնելով
սկսեց բղավել և հայհոյել նրանց, հայհոյել բոլոր լե-
զուներով:

Պեպեն վոչ մի կերպ չեր կարողանում ընդհատել
տանտիրուհու պերճախոսութիւնը, մինչև վոր ներս
չմտավ տանտիրուհու ամուսինը:

— Այդ ի՞նչ ե, — հարցրեց նա.

Պեպեն ասաց.

— Պարոն, ինձ շատ ե զարմացնում ձեր տիկնոջ
բարձրացրած արմուկը: Ծիչոտն առած, յես մասամբ
նույնիսկ վերաւորված եմ զգում ինձ ձեր փոխարեն:
Ինչպե՞ս յես հասկացա, նա կարծում ե, վոր անդրաւար-
տիքը մենք փչացրել ենք. բայց հավատացնում եմ ձեզ,
վոր վոչ, ինձ համար շատ հարմար ե դուրս յեկել: Յերեւի
նա կարծում ե, վոր յես ձեր վերջին անդրաւարտիքն եմ
վերցրել և դուք նորն այլեւս անկարող եք դնել...

— Իսկ յես կարծում եմ, վոր պետք է վոստիկանությանն իմաց տալ,— հանդիստ կերպով վրա բերեց ամերիկացին:

— Հա՞,— զարմացավ Պեպեն,— ինչո՞ւ:

— Վորպեսզի քեզ բանտ տանեն:

Դա շատ աղքեց Պեպեյի վրա. բայց նա չընկճվեց:

— Յեթե դա ձեզ հաճելի յե, պարոն, յեթե դուք սիրում եք մարդկանց բանտ նստեցնել՝ իհա՛րկե՛ւ Բայց յես այդպես չեյի անի. յեթե յես շատ անդրաժարտիքներ ունենայի, իսկ դուք վոչ մի հատ, ձեզ յերկուսը կտայի, գուցե և յերեքը, չնայած, վոր յերեք անդրաժարտիք անկարելի յե միանգամից հաղնել, մասնավորապէս ժամանակ:

Ամերիկացին ծիծաղեց. հարուստներն ել յերբեմն ուրախանում են:

Նա Պեպեյին շոկոլատով հուրասիւրեց և մեկ ֆրանկ տվեց: Պեպեն դրամն ատամներով փորձեց և չնորհակալություն հայտնեց.

— Շնորհակալություն, պարոն, կարծես դրամն իսկական ե:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Պեպեյի վերաբերմունքը դեպի հարուստները:
2. Կարգացե՞լ այն տեղը, վորտեղ նա բնորոշում է հարուստներին:

«ՄԻՆՁԵՎ ԵՍՏԵՂ»

Թրջված ու ծակ տրեխներով,
հագած բարակ ցնցոտիներ,
տոպրակն ուսին որորվելով
ճանապարհ եր դնում մի ծեր:

Գնում է նա դեպի ծուխը,
ահա մի գյուղ սարի տակը,
գյուղի ծերին, մի տան վրա
ծածանվում է դրոշակը:

Եդ տան պատին սլախատ կա՝
հարբած դեմքով ցարը վրան:
— Բարի որ ձեզ:— Բարով յեկար:
Յեվ ամբոխը պատեց նրան:

— Պապի՛, գիշերն ետեղ մնա,
յեղանակը թաց ու թեն ե:
— Ես ի՞նչ գեղ ե:— Պուգաչովկա,
ես ել ողնող կոմիտեն ե:

Մեր ճամբորդին առավոտյան
լավ հագցրին վոտքից գլուխ,
տվին շապիկ, շաւլար, վարտիք,
կոշիկ, տաք քուրք ու արխալուղ:

— Հագի, պապի՛, մի ամաչի:
Մենք շատ յերկար համբերեցինք:
Ես բոլորը հարուստների
անդուկներից դուրս բերեցինք:

Գուրքը հագավ ու հուզմունքից
խոր հառաչեց ծերը բարի,
— Մինչև ետեղ, զավակներս,
յես քայլել եմ ութսուն տարի:

Հ Ա Ր Յ

1. Ի՞նչ է ուզում ասել ծերուկը վերջին յերկու տողով:

Ամբոխ—բազմություն.
Թեն—թաց, խոնավ.

— Իսկ յես կարծում եմ, վոր պետք է վոստիկանու-
թյանն իմաց տալ,— հանդիստ կերպով վրա բերեց
ամերիկացին:

— Հա՞, — զարմացավ Պեպեն, — ինչո՞ւ:

— Վորպեսզի քեզ բանտ տանեն:

Դա շատ աղքեց Պեպեյի վրա. բայց նա չընկճվեց:

— Յեթե դա ձեզ հաճելի յե, պարոն, յեթե դուք
սիրում եք մարդկանց բանտ նստեցնել՝ իհա՛րկե՛ւ Բայց
յես այդպես չեյի անի. յեթե յես շատ անդրաժարտիք-
ներ ունեցեայի, իսկ դուք վոչ մի հատ, ձեզ յերկուսը
կտայի, դուցե և յերեքը, չնայած, վոր յերեք անդրա-
ժարտիք անկարելի յե միանգամից հաղնել, մանավանդ
չոք ժամանակ:

Ամերիկացին ծիծաղեց. հարուստներն ել յերբեմն
ուրախանում են:

Նա Պեպեյին շոկոլատով հյուրասիրեց և մեկ ֆրանկ
տվեց: Պեպեն դրամն ատամներով փորձեց և չնորհակա-
լություն հայտնեց.

— Շնորհակալություն, պարոն, կարծես դրամն
իսկական է:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Պեպեյի վերաբերմունքը զեպի հարուստները:

2. Կարգացե՞լ այն տեղը, վորտեղ նա բնորոշում է հարուստ-
ներին:

«ՄԻՆՁԵՎ ԵՍՏԵՂ»

Թրջված ու ծակ տրեխներով,
հագած բարակ ցնցոտիներ,
տոսլրակն ուսին որորվելով
ճանապարհ եր դնում մի ծեր:

Գնում է նա դեպի ծուխը,
ահա մի գյուղ սարի տակը,
գյուղի ծերին, մի տան վրա
ծածանվում է դրոշակը:

Եդ տան պատին սլալատ կա՝
հարբած դեմքով ցարը վրան:
— Բարի որ ձեզ: — Բարով յեկար:
Յեվ ամբոխը պատեց նրան:

— Պապի՛, գիշերն եստեղ մնա,
յեղանակը թաց ու թեն է:

— Ես ի՞նչ գեղ է: — Պուգաչովկա,
ես ել ողնող կոմիտեն է:

Մեր ճամբորդին առավոտյան
լավ հագցրին վոտքից դուխ.
տվին շապիկ, շալվար, վարտիք,
կոշիկ, տաք քուրք ու արխալուղ:

— Հագի, պապի՛, մի ամաչի:
Մենք շատ յերկար համբերեցինք:
Ես բոլորը հարուստների
անդուկներից դուրս բերեցինք:

Քուրքը հագավ ու հուղմունքից
խոր հոռաչեց ծերը բարի,
— Մինչև եստեղ, զավակներս,
յես քայլել եմ ութսուն տարի:

Հ Ա Ր Ց

1. Ի՞նչ է ուզում ասել ծերուկը վերջին յերկու տողով:

Ամբոխ—բազմություն.

Թեն—թաց, խոնավ.

I

Պեկինում մարդիկ կան բոլոր տեղերից:
Պեկինում այնքան փողոցներ:
Փողոցում Լի-Չանը յերկա՛ր թափառեց.
Թափառեց կուլի՛ն դործազուրկ:

Ու հետո— դաշտերում... վերահսկիչը չար
ամե՛ն ուր ծեծում եր Լի-Չանին,
այն ուրից, ինչ Լի-Չանը մշա՛կ դարձավ՝
չթողին իր մեջքը դինջանա:

Դաշտերում, ուր բանում եր թե՛յը թուրավետ՝
մի անգամ փչեց տա՛ք մի քամի
ու թիկնեց մի ճամբորդ կորցրե՛ց դաշտերում
մի կտոր թերթ լրագրի:

Հողնաբեկ ու ծեծված բանվորը վերցրե՛ց
ու կարդաց սլառածությո՛ւնը հուզիչ.
մի յերկրում հիմա Ես՛ր, դեկավա՛ր են դարձել
վաչ թե ժանդ մանդարի՛նը—կուլին:

Ու այնտեղ տրորած այդ թերթի դեմքին,
վոր բնկե՛լ եր դողդոջ ծունկերին—
նկարված եր ավազը ազա՛տ այն յերկրի,
ու գրված եր անո՛ւնը— Լենին:

Ու թեյի դաշտերում կուլիները խղճուկ—
այն ուրից՝ թե ցերե՛կ, թե գիշե՛ր,—
անհամար հեքիաթներ են հյուսում,
թե՛ Լենինը նրանց կհիշե:

Թե պիտի տապալվի մանդարինը:
Դաշտերից բրնձի ու թեյի

Լենինը— դեպի ըմբո՛ստ Պեկինը—
կկանչի բոլոր կուլիներին:

II

Վաղվեց Լի-Չանը:
Կրկին ընկավ Պեկին.
Նա դսպում եր մաղձն իր:
Փողոցներն անթիվ են: Ամբոխը մի հեղեղ,
Լի-Չանին կրծում է քաղցը:

Ու հանկարծ...
Լսեց Լի-Չանը
ճիչը լրագրավաճառի:
Ճիչում հուզո՛ւմ եր հնչում:
«Մեռավ ամենամե՛ծ բոլշևիկը.
«Ռուսաստանում,
«Լենինը
«մեռավ...»

Մեռավ Լենինը: Նա՛, վոր թերթիկից
ապստամբության նշանն եր տվել:
Չեր լացել յերբեք Լի-Չանը մտրակից.
Իսկ այժմ—
Լի-Չանը դառը հեկեկաց:

III

Դարձան, վոլորեցին ամիսներ, չաբաթ,
ու դարձավ Լի-Չանը ուրիշի—
Լի-Չանը մի գրաստ փոշեպատ—
Լի-Չանին ո՞վ ասես՝ չքեց:

Տեսնո՛ւմ ե.
անթիվ կուլիներ...
փողոցով հոսում են նրա դեմ:

Տեսնում ե.

չողչողուն սուրեր ու սվիններ—
առե՛լ,

ճոճոռում,

պարպում են կուլինները մերկ:

Տեսնում ե.

չինատառ կարմիր դրոշմե՛ր:

Ու փողոցի լայնքով

այդ բոլորի վրա

դալիս ե կե՛նինը.

կե՛նինը,

այնպես,

ինչպես այն թերթի տրորած դեմքին

աչքը կկոցում ե կե՛նինը,

կանչում ե Լի-Չանին

— Յե՛կ...

Յե՛կ...

ու մատը մեկնած

նշում ե վեր—

դեպի թաղերը մաքուր ու մեղկ:

Ծաբլում են ծունկերը Լի-Չանի,
հուզմունքից ծնոտն ե դողում:

— Վո՛չ վոքի, վոչինչ չգիջանել:

Հեղեղով ամե՛ն ինչ փողոցել:

Ու հեղեղը առավ Լի-Չանին,

Լի-Չանի թոքերը լայնացան—

բնծաղեմ Յին-Չոն

Լի-Չանին

յերկարեց փայլուն մի հրացան:

Նա տվեց պարկերով փամփուշտ:
Վարժեցրեց հրացան պարպելուն,
ու հիմա մեր Լի-Չանը անհաշտ
պայքարում ե չքեղ Պեկինում:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ո՛վ ե Լի-Չանը. ի՞նչպես են նրա աշխատանքի պայման-
ները. պատասխանեցե՛ք բանաստեղծի խոսքերով:

2. Ինչի՞ մասին եյին յերազում կուլինները:

3. Կարդացե՛ք այն տողերը, վորոնց մեջ պատկերավորում ե
Լի-Չանի հոգեկան դրուժյունը, յերբ նա իմանում ե, վոր հեռավ
զամենամեծ բոլլեիկը:

Կուլի—բանվոր.

Հոգնարեկ—հոգնածությունից ջարդված.

Ժանդ—դաժան.

Մանդարին—աղնվաղան, կարվածատեր.

Ավազ—մեծ.

Մաղձ—թույն.

Գրասս—բեռնատար.

Ռիկչի—մարդատար սայլին լծվող բանվոր.

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ

Սպիտակների հեծերազորը չլթայեց դյուզը: Աչա-
լուրջ հետևում եյին ներս ու դուրս անողներին:

Խուզարկում եյին տները, տակն ու վրա եյին անում,
ամեն ինչ:

Նրանց հեռանալուց հետո տունն ավերակի յեր վե-
րածվում, կարծես ամեն ինչ գլխիվայր եր շուռ տված:
Իսկ յերկաթադատ ծաղկավոր սնդուկները դատարկ-

միում եյին խուզարկության ժամանակ: Նրանց միջից կտորեղենը, սիւռոցներն ու շալերն անհետանում եյին...

Հերթը հասավ Վանյայի տանը:

— Ահա, ա՛յ թե վորտեղ ե:

Վանյուշան չկարողացավ տեսնել՝ ո՛վ եր այդ ասողը: Հարձակվեցին նրա վրա, բռնեցին ու քարշ տվին:

Մայրը վրա վազեց, ուզում եր պաշտպանել, չթողնել, վոր տանեն, սակայն չարազեմ սպան թափափաբեց ձեռքն ու ատրճանակի կոթով խփեց մոր գլխին: Մայրը ճչաց. աչքերը դուրս թռան կոպերից, ցնցվեց, բնկավ հատակին: Արյան ալ շիթերը ներկեցին հատակը:

Վանյուշային բերին վարչություն: Բազկաթռի վրա նստել եր հրամանատարը՝ սաթե ճխամորճը բերնին, բեղերն եր վոյորում: Նրա կողքին կանգնած եյին յերկու քաղաքացիներ:

Վանյան նայեց ու ճանաչեց յերեկվա հետապնդողներին:

Վաչտապեան ակնոցները քթին դրեց, վոտից գլուխ չափեց Վանյային և դիմելով մյուս յերկուսին, հարցրեց.

— Սա յե, այնպես չե՞:

— Ճիշտ այդպես, ձե՛րդ ազնվություն:

— Մոտեցի՛ր, լսի՛ր. մենք գիտենք, վոր դու թուղիկներ եյիր տարածում: Գիտե՞ս՝ ինչ ե նշանակում այդ:

— Գիտեմ, — համարձակ պատասխանեց Վանյան, կարծես նրան գյուղի ճամբան եյին հարցնում:

— Դե ուրեմն պատմի՛ր ամեն ինչ անկեղծորեն:

— Իսկ ի՛նչն ե ձեզ հետաքրքրում:

— Լսի՛ր, ամեն-պակաս մի՛ խոսի, — դայրացավ վաչտապետը: — Մենք գիտենք, վոր դու բուլչեիկի տղայես, գիտենք, վոր հայրդ թագնաված ե...

— Ավելի լավ. ել ինձնից ի՞նչ եք ուզում:

— Դու պետք ե ասես՝ վո՞րտեղ ե հայրդ:

— Ձե՞ վոր դուք գիտեք, ել ինչո՞ւ յեք ինձ հարցնում:

— Սրիկա՛, ասա՛՝ վո՞րտեղ ե հայրդ:

— Ձգիտեմ, — հանդիստ պատասխանեց Վանյան. իսկ մտքում շարունակ կրկնում եր. —

«Դու բանվորներն ու գյուղացիներն բարեկամն ես»:

— Թե չես ասի, քեզ կթակենք:

— Իսկ մենք չենք ուզում ձեզ պատասխանել:

— Այդ ո՞վ ե «մենք» — թույլ տվեք հարցնել, — նենդությամբ վրա բերեց վաչտապետը:

— Մենք, կոմյերիտականներս ու կարմիր հետախույզներս, մենք չենք դավաճանի աշխատավոր ժողովրդին:

— Իսկ շա՞տ եք դուք, — գոռաց վաչտապետը:

— Շա՛տ, ամբողջ աշխարհը:

— Ա՛խ դու... քեզ ցույց կտանք վողջ աշխարհ, ետոր-եգուց Մոսկվան կվերցնենք... Ամբողջ աշխա՛րհ՝ հը...

— Վո՞նց չե. գորտը փքվեց, բայց տրաքվեց:

— Ինչ ասացի՞ր, լակո՛տ, — ու ձեռքի մտրակը չրխկաց, ձաղկելով Վանյայի այտը:

Վանյուշան հեղնելով ժպտաց:

— Ուժը ձեռ կողմն ե, հետո՞, — հարցրեց նա:

— Հետո-կտեսնես. ե՛յ, պատրա՞ստ ե:

— Հրաման քեզ, պատրաստ ե:

— Դո՛ւրս տարեք:

Վանյային դուրս տարան, բերին պարտեզը. կանգնեցրին ծառի տակ. ճյուղից կախված եր պարանը:

— Հագցրե՛ք ողակը:

Վանյայի վիզն անցկացրին ողակը:

— Յեթե չես ասի՝ վորտեղ են ձեր բուլչեիկները, կկախենք. տալիս ենք յերեք բոպե ժամանակ:

Վանյան լուռ եր.

— Մի բոպե...

Վանյան նայեց շուրջը. կաղակներն ու սպաները

խոնաված էյին այդտեղ. ահա և բանվորներ— նրանց գոռով էյին բերել, վոր ներկա լինեն Վանյայի մահապատժին...

Յերբ նա աչքերը բարձրացրեց, տանիքների վրայով տեսավ իր ծանոթ անտառը հեռվում, ուր նա գնում եր կադին հավաքելու:

Լեռան կանաչադարձ դադաթն աշնան արևի շողերից ուրբգութված, վոսկեգոծվել ու ժայտում եր:

Այս բոլորը՝ արևը, լեռները, թռչուններն ասես խոսում էյին, կանչում Վանյային.—

Ինչպես լա՛վ ե ապրել, տե՛ս, իսկ դո՛ւ, Վանյուշա, ուղում ես մեռնել. ինչո՞ւ. ասա՛, հայտնի՛ր նրանց, և դու կապրես, կաշխատես, կշրջես, և այս բոլորը քեզ հաճույք կպատճառի. դե ասա՛, ասա՛ նրանց ամեն բան:

— Յերկու բույե,— հնչեց լուսթյան մեջ, ասես զանգի ղողանջ լիներ:

Վանյան սթափվեց. բերանը բաց արեց, վոր խոսի, կարծես մեկը հոսպ եր տվել կոկորդը:

— Ընկերներիդ մահը քո մահն ե. ելի պիտի մտնես հանքերը և այնտեղ քո դերեգմանը գտնես: Ո՞վ ես դու. աշխատավոր ժողովրդի զավակ: Ի՞նչ են մտածում քո բախտակից ընկերները:

— Կարմիր հեռախոսյղը կմեռնի, բայց թշնամույցերեսին ճշմարտությունը կասի.— հիշի՛ր ի՛նչ ե ասել Լենինը:

Լենին.— Նա ինքը չարեց այդ բառը տպարանում, դետնի տակ. ի՞նչ, այժմ մատնելո՞ւ յե այդ տպարանը:

Մտքերն արագ սլանում էյին Վանյայի գլխում, մեկը մյուսին տեղի տալիս:

— Կմատնես՝ ամեն ինչ կորած ե. այն ժամանակ մահ բանվորներին, թող ապրեն կառավարչի կուշտ յերեսաները:

— Յերեք...

Կարծես ելեկտրական հոսանքն անցավ Վանյայի մարմնով. նա սթափվեց, բացեց աչքերն ու դուռաց.

— Սպասեցե՛ք, կասեմ:

— Հապա՛, — ծուխը բաց թողնելով, խոսեց վաշտապետը:

Վանյուշան աչքը դեցեց կանգնած ամբոխի վրա. նա ահեղով իր մոտիկներին, վորոնք ահն աչքներին սպասում էյին ու կարծես ասում.—

«Վանյու՛շա, մի՞թե կմատնես»...

Նրա հայացքն ընկավ տներին, դտավ իր խրճիթը, վորի կտրին նկատեց յեռանկյունի կարմիր դրոշակ՝ աղվեսի սև դնչով. այդ իր վաշտի դրոշակն եր, վոր սպիտակներին զայրացնելու համար կախել էյին ընկերները:

Դրոշակը նոր ույժ տվեց Վանյային, աչքերը վառվեցին:

— Ե՛յ, ընկերնե՛ր, — ուղեց դուռալ նա: Յեվ մտածեց— «մեռնեմ, բայց մեր դործը թող ապրի»:

— Դե՛, վերջին խոսքդ,— կանչեց վաշտապետը:

Վանյան աչք ածեց շուրջը, մեկ ել նայեց դրոշակին ու բարձր ձայնով դուռաց...

— Լսեցե՛ք...

Ամբոխը ցնցվեց. կազակները բարձրացան՝ ապանդակներին կանգնած. վաշտապետն աչքերը հառեց Վանյայի դեմքին:

Իսկ նա խորը շունչ առավ, թափահարեց գլուխն ու բարձր կանչեց.

— Կեցցե՛, Լենինը:

— Կեցցե՛ կոմսոմոլը.

— Կեցցե՛ք...

Սև, մազոտ բռունքն իջավ Վանյայի գլխին, աչքերը մթնեցին. նա ցնցվեց. ողակը սեղմեց կոկորդը...

Լուռ եր ամբոխը. լուռ եր ամեն ինչ:

Յեվ միայն արձագանքը հնչում եր հեռվում, լեռներում և այդ արձագանքն եր:

— Լե... Լե... նի... նի... ն... ն... :

Յեւ մեռնում եյին այդ ձայները լեռներում, ձուլվելով մի բառի մեջ՝

— Լենին :

Յերեք որ կախած եր մնալու դիակը :

— Թող տեսնեն ու սովորեն, — հրամայել եր վաշտապետը :

Սակայն մյուս որը վանյայի դիակը չկար. նրան դիչերը տարել ու թաղել եյին Մաթվեյն ու ընկերները :

Զորքը մի շաբաթ մնաց դյուղում, տակն ու վրա արավ ամեն ինչ. հերթը հասավ հանքահորին :

Իջան յերեքը. բայց փոսած սանդուխքները չդիմացան, և իրենք ել ջարդուխուր յեղան հանքերի խորքում :

Սմբողջ յերկու շաբաթ բանվորները գետնի տակ եյին, առանց հացի, սնվում եյին միայն ջրով :

Յերբ գորքը հեռացավ, Մաթվեյն իջավ, կերակուր տարավ նրանց :

Լեռներում արդեն կռիվն սկսվել եր. պարտիզանները մոտեցել եյին. վոլգայի ափերից նոր ուժեր յեկան, սպիտակներին քչելով գեպի լեռները :

Գարնանային մի որ կարմիրներն անցան լեռներով, քչեցին սպիտակներին, և Ուլալիխը նորից խորհրդայնացավ :

Վանյուչայի դիակը հանեցին ու թաղեցին հրապարակի մեջտեղում :

Յերբ Մաթվեյն անցնում եր իր նոր վաշտի հետ, գլուխ եյին իջեցնում պատանի հերոսի գերեզմանի առաջ :

Աշնան ցերեկով, արևի գուրգուրող ճառագայթների տակ Ուրալը տոնում եր իր ազատագրման տարեդարձը :

Ահա պիոներներն անցնում են քայլերթով, հրապարակում շինած ամբիոնի կողքով :

Նրանց կարմիր փողկապները վառվում են ամբիոնի գորշ շորերի մեջ : Արևը գունավորում եր կարմիրն իր վոսկե-ծիրանի շողերով :

Յերբ պիոներները մոտեցան ամբիոնին, հարյուրավոր աչքեր ուղղվեցին դեպի վերևը կանգնած ծերունին :

Խորհրդի նախագահն եր այն, վանյայի ծերուկ հայրը :

Յերբ տեսավ պիոներներին, նրա դեմքը պայծառացավ. նա ուղղեց իր կորացած մեջքն ու ձայն տվեց, լոցավառված աչքերը ներքև հառեցով :

— Կեցցե՛ կոմսոմոլը : Պիոներներ՛ը, հեղափոխու՛թյան գործի համար պատրա՛ստ :

Յեւ հարյուրավոր մատաղ ձայներ գարնան շնչով կանչեցին միարեբան :

— Միշտ պատրաստ ենք :

Զվարթացավ ծերունու դեմքը, ժպտում եր արևը, ծիծաղում եր ալեգարդ Ուրալը :

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ինչո՞ւ համար սպիտակները վանյային բանտարկեցին :
2. Ի՞նչ եյին պահանջում նրանք վանյուչայից և ի՞նչ միջոցներ եյին գործադրում :
3. Ի՞նչ ասրումներ ունեցավ վանյուչան :
4. Ինչո՞ւ վանյուչան չմատնեց իր ընկերներին և գերադասեց մահը :
5. Ի՞նչ եք կարդացել կամ լսել պատանի հեղափոխականների հերոսությունների մասին :

Վլադիմիր Իլյիչը ախարում

(1898—1901)

1

Շուշինսկի գյուղը, ուր ապրում էր Վլադիմիր Իլյիչը, յեկանք իրիկնաժամին: Վլադիմիր Իլյիչը վորսի յեր գնացել: Իջանք: Մեզ տարան խրճիթ: Սիրերում— Մինուսինսկի չրջանում գյուղացիները շատ մաքուր են ապրում. հատակներին փռված են տանը գործված խայ- ճոտադեղատ կարպետներ, պատերը մաքուր սպիտակաց- ված են և յեղենիներով զարդարված: Վլադիմիր Իլյիչի սենյակը թեև մեծ չէր, բայց նույնպես մաքուր էր: Տե- րերը խրճիթի մնացածը զիջեցին ինձ ու մորս: Տերերն ու նրանց հարևանները լցվեցին խրճիթը և սկսեցին յեռան- գով նայել ու հարցուփորձել մեզ: Վերջապես Վլադիմիր Իլյիչը վերադարձավ վորսից: Զարմացավ, վոր իր սե- նյակում լույս կա: Տանտերն ասաց, վոր դա Ոսկար Ա- լեքսանդրովիչն է (պետերբուրգցի աքսորյալ բանվոր), վոր հարբած յեկավ ու բոլոր գրքերը շաղ տվեց: Իլյիչը արագ, վաղեց դեպի մուտքը: Այդ ժամանակ յես խրճի- թից դուրս յեկա: Այդ գիշեր մենք յերկար խոսեցինք: Իլյիչը կազդուրվել էր, և առողջությունն ուղղակի կա- թում էր նրանից:

Շուշինսկում աքսորյալներից կային միայն յերկու բանվոր— լոճեցի սոցիալ-դեմոկրատ, գլխարկ կարող լեհ Պրոմինսկին իր կնոջ և վեց յերեխաների հետ և Պու- տիլովի գործարանի բանվոր Նիգրերգը, վոր ազգով ֆին- եր: Յերկուսն էլ լավ ընկերներ էյին: Պրոմինսկին հան- դարտ, համասարակչոված, բայց շատ պինդ մարդ էր: Նա քիչ էր կարգում և քիչ բան դիտեր, բայց ոժտված էր զարմանալի, ցայտուն կերպով շեշտված դասակար- դային բնագոյով: Իր՝ այն ժամանակ դեռևս համատաց- յալ կնոջը նա վերաբերվում էր հանդիստ հեղանքով:

Նա շատ սիրում էր վորսի գնալ: Տոն որերը հաշնում էր տոնական հագուստներ, և նրա դեմքին յերևում էր մի ինչ-վոր առանձին փայլուն ժպիտ:

Նա շատ լավ յերգում էր լեհական հեղափոխական յերգեր— «Բանվոր մարդ, ճանաչիր քո ուժերը»: «Մա- յիսի մեկը» և մի շարք ուրիշներ: Յերեխաները ձայ- նակցում էյին նրան, յերգեցիկ խմբին միանում էր և Վլադիմիր Իլյիչը, վոր սիրով և շատ յերգում էր Սիրի- բում: Պրոմինսկին յերգում էր և ուսուսական հեղափոխա- կան յերգեր, վոր սովորեցնում էր նրան Վլադիմիր Իլ- յիչը:

2

Վլադիմիր Իլյիչը մի ծանոթ գյուղացի ուներ՝ Ժու- րավլյով ազգանունով, վորին նա շատ սիրում էր: Թո- քախտավոր, յերեսուն տարեկան Ժուրավլյովն առաջ գրագիր էր յեղած: Վլադիմիր Իլյիչը նրա մասին ասում էր, վոր բնավորությամբ հեղափոխական, բողոքող է: Ժուրավլյովը համարձակ դուրս էր գալիս հարուստ- ների դեմ, չէր հաշտվում անարդարության հետ և չու- տով մեռավ թոքախտից:

Իլյիչի մյուս ծանոթն աղքատ գյուղացի յեր: Վլա- դիմիր Իլյիչը հաճախ նրա հետ վորսի յեր գնում: Դա ամենապարզ գյուղացիներից մեկն էր, կոչում էյին նրան Սոսիպատիչ: Նա շատ լավ էր վերաբերվում Վլադիմիր Իլյիչին և նվիրում էր նրան ամեն տեսակի բան—մերթ կոտնիկ, մերթ յեղենու կոներ:

Սոսիպատիչի, Ժուրավլյովի միջոցով Վլադիմիր Իլյիչն ուսումնասիրում էր սիրիյան գյուղը: Մի ան- դամ նա պատմեց ինձ իր մի գրուլցն ունեւոր գյուղացու հետ, վորի տանը ապրել էր: Հոտաղը նրանից՝ կաշի յեր գողացել: Գյուղացին նրան վրա յեր հասել գետակի մոտ և սպանել: Այդ առիթով Իլյիչը խոսում էր մանր սե- փականատերի անխնա դաժանության և մշակներին անխնայորեն չահագործելու մասին: Յեվ, իսկապես,

Սիրերի տնային բառերակներն աշխատում էին տաժա-
նակիրների նման, հանգիստ էին առնում միայն տոնե-
րին:

Գյուղն ուսումնասիրելու մի ուրիշ միջոց էլ ուներ
Իլիչը: Կիրակի օրերը նրա մոտ իրավարանական կոն-
սուլտացիա չէր: Նա, վորպես իրավագետ, մեծ ժողո-
վրդականութուն էր վայելում, վորովհետև հանքերից
քշված մի բանվորի ողնել էր վոսկի արդյունաբերողից
գործը առնելու: Տարված գործի այդ համբավը չուսով
տարածվեց գյուղացիների շրջանում: Գալիս էին դյու-
ղացիներ, գեղջկուհիներ և իրենց ցավերը պատմում:
Վլադիմիր Իլիչն ուշադիր լսում էր, թափանցում ամեն
բանի խորքը և հետո խորհուրդ տալիս: Մի անգամ մի
գյուղացի քսան վերստ ճանապարհ կտրելով՝ յեկել էր
խորհուրդ հարցնելու, թե ինչպես պատժի իր փեսին,
վոր իրեն չի կանչել հարսանիք, ուր լավ քեֆ են արել:
«Իսկ հիմի փեսեդ կհյուրասիրի՞, յեթե զնաս նրա մոտ»:
«Հա՛, հիմի կանի»: Յեվ Վլադիմիր Իլիչը համարյա մի
ժամ կորցրեց, վոր այդ գյուղացուն համոզի փեսի հետ
հաշտվելու: Յերբեմն միանգամայն անկարելի յեր լի-
նում պատմածներից հասկանալ թե բանն ինչո՞ւմն է,
ուստի Վլադիմիր Իլիչը միշտ խնդրում էր գործի պատ-
ճենը բերել: Մի անգամ հարուստ գյուղացիներից մեկի
յեղը հարու յեր տվել մի չքավոր կնոջ կովի: Վիճակային
դատարանը վճռել էր, վոր յեղատերը տասը ռուբլի տա
այդ կնոջ: Կինը բողոքել էր վճռի դեմ և պահանջել դոր-
ծի «պատճենը»: «Ի՞նչ, քեզ սպիտակ կովի պատճենը
տանք, ինչ է», ծիծաղել էր նրա վրա ատենակալը: Զայ-
րացած կինը յեկավ Վլադիմիր Իլիչին դանդաղակելու:
Հաճախ բավական էր, վոր տուժողն սպառնա, թե կգան-
դատվի Ուլյանովին, վորպեսզի զրկանք հասցնողը զիջի:

3.

Հայտնվեցին յերեսաներ: Բակում ապրում էր մի
գաղթական լատիշ, հարբեցող մի մարդ: Նա տասնչորս

յերեխա յեր ունեցել, բայց ապրեց միայն մեկը՝ Մին-
կան: Մինկան վեց տարեկան էր. դունատ, թափանցիկ
դեմք ուներ: Պայծառ աչքեր և լուրջ խոսակցութուն:
Նա սկսեց ամեն օր գալ մեզ մոտ. դեռ անկողնից չե-
լած, մեկ էլ տեսար դուռը բաց անելով՝ հայտնվեց փոք-
րիկը՝ մի մեծ գդակ գլխին, մոր փափուկ կոֆտան հա-
ղին, չարֆով փաթաթված, ու ուրախ հայտարարեց.
«Յե՛ս յեկա»: Գիտեր, վոր մայրս դժի պես սիրում է
իրեն, վոր Վլադիմիր Իլիչը միշտ կիսադա և հանաքներ
կանի իր հետ: Նրա յետեից վազում էր մայրը. «Մին-
կա, մանեթանոց չե՞ս տեսեջ»:

— «Տեսա. սեղանի վրա ընկած էր, գրի տուփի
մեջ»:

Յերբ մենք մեկնեցինք, Մինկան վշտից հիվանդա-
ցավ: Այժմ նա էլ չկա, մեռել է, իսկ հայրը գրել էր,
խնդրելով հող հատկացնել իրեն Յենիսեյի այն կողմը:
«ուզում եմ ծեր հասակում կուշտ ապրել»:

4

Ուշ աշնանը, յերբ Յենիսեյն արդեն մանր սառույց
էր տանում, գնում էինք կղզիները նապաստակներ վոր-
սալու: Նապաստակներն արդեն սպիտակում են: Կղզուց
դնալու ուրիշ տեղ չունեն, վոչխարների պես վազում են
մեր շուրջը: Պատահում էր— մի ամբողջ նավակ լցնում
էին սպանվածներով:

Ապրելով Մոսկվայում, Վլադիմիր Իլիչը վերջին
տարիները յերբեմն նույնպես վորսի յեր գնում, բայց
վորսորդական տենդն զգալի չափով պակասել էր: Մի
անգամ գնացին ագվեսի վորսի: Այս վորսորդության
ծրագիրը շատ հետաքրքրեց Վլադիմիր Իլիչին: «Ո՞ր-
րամանի է մտածված», ասում էր նա: Վորսորդները
սարքել էին այնպես, վոր աղվեսը վազել էր ուղիղ դե-
պի Վլադիմիր Իլիչը, իսկ նա հրացանի բռնի էր այն
ժամանակ, յերբ աղվեսը մի բույս կանգնելով ու նրան

նայելուց հետո արագ թեքվել մտել էր անտառ. «Ինչո՞ւ չկրակեցիր».— «Գի՛տես, չառ դեղեցիկ էր»:

Ուշ աշնանը, յերբ դեռ ձյունը չէր յեկել, բայց գետերը սառչում էյին արդեն, հոսանքով գնում էյինք յերկա՛ր.— չուրաքանչյուր քարը, յուրաքանչյուր ձկնիկը յերևում էր սառույցի տակ, կարծես ինչ վոր կախարդական թագավորություն զիներ: Իսկ ձմեռը, յերբ անդիկը սառչում է ջերմաչափերի մեջ և գետերը սառչում են մինչև հատակը, ջուրը հոսում է սառույցի յերեսով և շուտով ինքն ել ծածկվում սառույցով, կարեկի յեր սառույցի վրայով յերկու կիլոմետր գնալ: Այս բոլորը Վլադիմիր Իլյիչը չառ էր սիրում:

Յերեկոները Վլադիմիր Իլյիչը սովորաբար կարդում էր փիլիսոփայական գրքույկներ— Հեգել, Կանտ, Փրանսական մատերիալիստներին, իսկ յերբ չառ էր հոգնում—Պուշկին, Լերմոնտով, Նեկրասով:

Յերբ Վլադիմիր Իլյիչն առաջին անգամ հայտնվեց Պետերբուրգում, յես նրան ճանաչում էյի սրահնրա պատմություններով: Ստեփան Իվանովիչ Ռադչենկոյից լսել էյի, վոր Վլադիմիր Իլյիչը կարդում է միայն լուրջ գրքեր և կյանքում վոչ մի վեպ չի կարդացել: Յես զարմացա. հետո, յերբ մոտից ծանոթացանք Վլադիմիր Իլյիչի հետ, այդ մասին վոչ մի խոսակցություն չեղավ մեր միջև. միայն Սիրիբում իմացա, վոր այդ բոլոր առածները հեքիաթ են միայն: Վլադիմիր Իլյիչը վոչ միայն կարդացել էր, այլև չառ անգամ կրկնել Տուրգենևի, Տալստոյի գրվածքների ընթերցումը, Ջերնիչևսկու «Что делать»-ը, առհասարակ չառ լավ գիտեր և սիրում էր կլասիկներին: Հետո, յերբ բոլշևիկներն իշխանության գլուխ անցան, նա հարց դրեց Պետհրատին վերահրատարակել կլասիկներին՝ եժանագին հրատարակությամբ: Վլադիմիր Իլյիչի ալրումում, բացի հարազատների և հին տաժանակիրների պատկերներից, կային նաև Չոլայի, Գերցենի պատկերները և մի քանի պատկեր Չերնիշևսկուց:

Շարաթը յերկու անգամ պոստ էր ստացվում: Ընդարձակ նամակագրություն ունեյինք: Նամակներ ու գրքեր դալիս էյին Ռուսաստանից: Ամեն ինչի մասին մանրամասն գրում էր Աննա Իլյինան. գրում էյին Պետերբուրգից: Նամակներ ստանում էյինք հեռու արտաքավայրից— Տուրուխանսկից: Գրում էյին ամեն բանի մասին— ռուսական լուրերի մասին, ապագայի ծրագիրների մասին, գրքերի, նոր հոսանքների, փիլիսոփայության մասին: Նամակագրություն ունեյին և չախմատի խաղի մասին: Խաղում էյին նամակով: Վլ. Իլյիչը դասավորում էր չախմատը և կռահում, թե ինչ պիտի լինի հետևանքը: Մի ժամանակ այնպես էր տարվել, վոր քնի մեջ անգամ ճշում էր «յեթե նա ձին դեսը բերի՝ յես թնդանոթը դենը կտանեմ»:

Թե Վլադիմիր Իլյիչը և թե Ալեքսանդր Իլյիչը մանկությունից, մեծ յեռանդով չախմատ էյին խաղում: Խաղում էր և Վլադիմիր Իլյիչի հայրը: «Առաջ հայրս տանում էր մեզ,— պատմում էր Վլադիմիր Իլյիչը,— հետո մենք՝ յես և յեղբայրս չախմատի խաղի ձեռնարկ գտանք և սկսեցինք հորս տանել: Մի անգամ— յերեսաներս ապրում էյինք վերև— հանդիպեցի հորս մոմը՝ ձեռքին գալիս էր մեր սենյակից՝ չախմատի ձեռնարկը ձեռին: Այնուհետև նա նստեց նորից ուսումնասիրելու չախմատը»:

Ռուսաստան վերադառնալով Վ. Իլյիչը թողեց չախմատի խաղը: «Շախմատը չառ է գրավում մարդուն ու խանդարում է աշխատելու»: Յեվ վորովհետև Վ. Իլյիչը վոչինչ չէր կարողանում թերատ անել այլ նվիրվում էր գործին ամբողջ յեռանդով, ուստի հանգստի ժամանակ և տարագրության մեջ արդեն ակամա յեր չախմատի նըստում:

Վ. Իլյիչը ջահել ժամանակից արդեն կարողանում էր դեն չալրտել այն, ինչ խանդարում է. «Յերբ գիմնադիստ էյի, տարվեցի չմուշկի խաղով, բայց հոգնում

եյի. չմուշկից հետո սաստիկ քնել էյի ցանկանում. խան-
գարում եր աշխատել, թողի»:

«Մի ժամանակ,— պատմում եր մի ուրիշ անգամ
Վ. Իլյիչը,— յես սաստիկ տարվեցի լատիններենով»,—
«Լատիններենով», դարձացա յես,— «Այո՛, բայց տեսա
մյուս զբաղմունքներիս խանգարում ե, թողի»։ Մոտ
որերս միայն կարգալով մի հողմած, ուր ուսումնասիր-
ված ե Վ. Իլյիչի վոճը, ղեղվի կազմությունը, ցույց ե
տրված Վ. Իլյիչի նախագասությունների կազմության
նմանությունը հոռմեյական հռետորների նախադասու-
թյունների կազմության հետ, ինչպես նաև, հռետորա-
կան ձևերի նմանությունը,— յես հասկացա, թե ինչու
Վ. Իլյիչը կարող եր տարվել լատինական գրողների ու-
սումնասիրությամբ...

Կոնսուլտացիա—խորհուրդներ, բացատրություններ տալ.
Համբավ—լուր.
Թերատ—կիսատ, թերի կատարած.

Յ Ա Ն Կ

1. Սմառ Յերեանում—Խ. Արովյան	3
2. Չմեռը—Խ. Արովյան	5
3. Մեր տեսուչը—Պ. Պոռչյան	6
4. Չատոյի բախտը—Հ. Ճուղուրյան	11
5. Արությունի նամակը Մանվելին—Ղ. Աղայան	15
6. Եչն ու սոխակը—Ղ. Աղայան	17
7. Ազոսին ու աղվեսը—Ա. Խնկոյան	19
8. Գայլն ու կատուն—Ա. Խնկոյան	22
9. Արար—Վ. Փափագյան	24
10. Հրդհը նախագործարանում—Ա. Շիրվանզադե	28
11. Բոչը—Վ. Միրաբյան	38
12. Գութանի յերգը—Հ. Թումանյան	40
13. Սասունցի Դավիթը գառնարած —Հ. Թումանյան	42
14. Ահմադը—Հ. Թումանյան	43
15. Գելը—Հ. Թումանյան	45
16. Տերն ու ծառան —Հ. Թումանյան	50
17. Գարո բիձու չերամապահությունը—Հ. Թումանյան	56
18. Մեկ ել, մեկ ել—Հակ. Հակոբյան	57
19. Լուսաբացին—Հ. Հակոբյան	58
20. Բանվեց էյին—Հ. Հակոբյան	60
21. Նոր կյանք—Վ. Տերյան	61
22. Կարմիր դարնան—Վ. Տերյան	62
23. Արեածագ—Վ. Տերյան	63
24. Արեւ—Արագի	64
25. Գարուն—Յե. Չաքեց	66
26. Լենին—Յե. Չաքեց	67
27. Ծիրանի տալը—Ա. Բակունց	69
28. Զոռան—Ա. Բակունց	72
29. Նիգյարը—Դ. Դեմիրճյան	75

30. Մայրսահան—Ա. Վշտունի	79
31. Լենին—Ա. Վշտունի	81
32. Չալանկը—Ստ. Զարյան	82
33. Չանգվի յերգը—Ալազան	88
34. Պղնձի համար—Ալազան	89
35. Սևանի տունը—Ն. Զարյան	91
36. Վեճ կողտնտեսության մասին—Ն. Զարյան	92
37. Արևը, հուրհրան արևը—Մ. Արմեն	94
38. Նամակ գյուղից—Վ. Նորենց	101
39. Տարեդարձի յերգ—Վ. Նորենց	104
40. Քարտաշներ—Գ. Սարյան	105
41. Դամբանական—Գ. Սարյան	106
42. Սիրերում—Գ. Սարյան	106
43. Աբաղաղներ—Ս. Տարոնցի	108
44. Բալիկին—Ս. Տարոնցի	111
45. Իվանեն—Բուշիշվիլի	111
46. Զրանցքի բացումը—Ե. Պուլումարովինով	118
47. Ալազանի դաշտն ու բամբակը—Զիկովանի	124
48. Հխունյերկու—Մեյսի	125
49. Չմեովա իրիկունը—Պուշկին	128
50. Կալանավոր — Պուշկին	129
51. Գյուղացիների դատը—Տուրգենև	129
52. Հունւարի 9-ը—Մ. Գորկի	136
53. Մայիսի 1-ը—Մ. Գորկի	141
54. Պեպե—Մ. Գորկի	146
55. Մինչև ետեղ—Դ. Բեդնի	150
56. Լենինն ու Լի-Չանը—Ըստ Խոբախի	152
57. Վերջին խոսքը—Վլադիմիրսկիյ	155
58. Հիշողություններ Լենինի մասին—Կրուպսկայա	162

ՀԽՍՀ 25449

ՀՀ Ազգային գրադարան



NL0161094

464

ԳԻՆԸ 1 Դ. 20 Կ.
ԿԱԶՄԻ 50 ԿԱԿ.

|| АРМ
|| 2-1339



ХРЕСТОМАТИЯ ПО ЛИТЕРАТУРЕ

Для начальных школ

Четвертый класс

Составили

Л. ХУДОЯН, Г. САРЯН

Гиз. ССР Арменин, Ереван, 1936